ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-9** (1655) — *Սեպտեմբեր 2021*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Պատմական իրողություններ և ճակատագրական հետևանքներ (էջ 1-2)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայկական պետությունների անվտանգության համակարգի վերականգնման հեռանկարներ (էջ 3-4)

Լիանա Պետրոսյան
Արցախի կարգավիճակի խնդիրը 44-օրյա պատերազմից հետո և Ադրբեջանի դիրքորոշումը (էջ 5-7)

Էդիկ Մինասյան
Արցախի անկախության 30-ամյա ուղին (1-ին մաս) (էջ 8-13)

3- Աշխարհաքաղաքական

Արտյոմ Տոնոյան
Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ (էջ 14-16)

Վարդան Հակոբյան
Թալիբյան Աֆղանստանը որպես աշխարհաքաղաքական գործիք (էջ 17-19)

Հրաչ Վարժապետեան
Էրտողանի, Անգարայի եւ թալեպաններու անթաքոյց համագործակցութեան հեռանկարը (էջ 20-21)

4- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
ԵԱՏՄ ստեղծման պայմանագիրը որպես անդամ պետությունների փոխհարաբերությունների կարգավորման տնտեսական, կառավարչական և իրավական հիմք (էջ 22-25)

5- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Հայկական 5000-ամյա պետականությունների պատմությունից (էջ 26-33)

Գոհար Խանումյան
«Մեկ հայ՝ մեկ ոսկի» փրկության առաքելության ձևավորման պատմությունից (էջ 34-36)

6- Հայրենի եզերք

Նորեկ Գասպարյան
Ոչ մեկը աշխարհիս երեսին... (էջ 37-38)

7- Ընթերցումներ

Տիգրան Չանդոյան
Հրատարակիչը որպես 21-րդ դարի լուսավորիչ, կամ այն մասին, թե ինչպես փող շինել ամեն ինչից (էջ 39-41)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Շարունակել անդեռե՛ւ (էջ 42)

9- Անմահները

(էջ 43-44)

Պատմական իրողություններ և ճակատագրական հետևանքներ

Սեպտեմբեր ամիսը այսուհետ ամրագրվելու է մեր գիտակցության մեջ հայության կյանքում տեղի ունեցած երեք կարևորագույն իրադարձություններով: 1991 թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, Շահումյանի շրջանային խորհրդի և բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների համատեղ նստաշրջանը հռչակագիր ընդունեց ԼՂՀ հռչակման և նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձևավորման մասին: Նույն 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի ժողովուրդը ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու օգտին: 29 տարի անց՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին, Ադրբեջանը Թուրքիայի անմիջական մասնակցությամբ պատերազմ սկսեց Արցախի դեմ, որի հետևանքները ոչ միայն կործանարար եղան Արցախի համար, այլև լրջագույն սպառնալիքներ են պարունակում Հայաստանի ամբողջականության և հետագա ինքնիշխան գոյության համար:

Հայության՝ ազգային գիտակցությամբ օժտված հատվածի համար Արցախի ազատագրումը նորագույն շրջանի ազգային գլխավոր ձեռքբերումն էր, որովհետև անգամ Հայաստանի անկախության տեսլականը շատ ավելի իրականանալի հեռանկար ուներ, քան Լեռնային Արցախի հայկականության պահպանումը և նրա ազատագրումը ադրբեջանական լծից, իսկ հայկական Արցախի գոյությունը լուրջ պատվար էր դառնալու Հայաստանի համար՝ էականորեն մեծացնելով միասնական հայրենիքի ընդհանուր ներուժը:

Դավադրական պատերազմից մեկ տարի անց անդրադառնալով անցած ճանապարհին և ներկա վիճակին՝ պարտավոր ենք հանուն ապագայի հստակեցնել, թե արդյոք թույլ չենք տվել այնպիսի ճակատագրական սխալներ, որոնք դեր են խաղացել ողբերգական հետևանքների հարցում: Ինչո՞վ էինք զբաղված տասնամյակներ շարունակ, երբ թշնամին, մանկապարտեզից սկսած, դաստիարակում էր իր ժողովրդին, թե Ղարաբաղն իրենցն է, և այն ցանկացած գնով պիտի ետ նվաճեն: Երբ այդ թշնամին, իր նպատակներին հետամուտ, ամեն օր խնդիրներ էր ստեղծում հայկական կողմի համար սահմանային գոտում, մարտական շփման գծում, միջազգային կազմակերպություններում և ամենուր, մենք հակադարձողի դերի մեջ գոհանում էինք, եթե հաջողվում էր չեզոքացնել հակահայկական հերթական որոշումը միջազգային ատյաններում կամ ռազմական սադրանքը սահմանին: Անցած 30 տարիներին թշնամի երկրում իշխող գաղափարախոսության և ներհասարակական մթնոլորտի պայմաններում չհայտնվեց մի «խաղաղասեր», որը կասկածի տակ

Ստեփանակերտ 88 թ.

կդներ Արցախի ադրբեջանապատկանության հարցը կամ ակնարկ կաներ հրաժարվելու «դժբախտ, դժգույն» բնակավայրերից, այնինչ ազգային-ազատագրական պայքարի ճանապարհ ընտրած հայության զանգվածներ ուսերի վրա իշխանության բերեցին հայրենիք հանձնող օտարասուն խառնախմբի և ցավի բթացած զգացողությամբ չեն արձագանքում թե՛ կորցրածի, թե՛ հնարավոր կորցնելիքի համար: Քսանհինգ տարի չավարտված պատերազմի երկիրը հաղթողի ու ամենակարողի ինքնահավանությամբ արհամարհեց ազգային գաղափարախոսության սերմանման, ազգային դաստիարակության, երկիրը հավանական մարտահրավերների հանդիման ներքուստ առողջացնելու և արդարության հիմքի վրա հզորացնելու հիմնահարցերը: Երես առած երեխայի պես հակառակորդը ցանկության դեպքում և՛ բանակցեց, և՛ զուգահեռաբար ձեռնարկեց ռազմական սադրանքներ ու երկու պատերազմ՝ թքած ունենալով, թե ինչ կասեն արտաքին ուժերը (որոնք այդպես էլ նրան չդատապարտեցին, այլ միշտ երկու կողմերին նախատեցին հավասարապես): Այնինչ հայկական կողմը կարգապահ աշակերտի պես միշտ ձգտեց դրսի ուժերին ապացուցելու, թե ինչքան լսող է և պարտաճանաչ: Ադրբեջանը մշտապես վարեց ագրեսիվ հռետորաբանություն, անընդհատ մեծացրեց իր ռազմական ներուժը, օտարերկրյա պաշտոնական զորամիավորումների և ահաբեկիչ վարձկանների ներգրավեց հանցագործ պատերազմի մեջ, երբեք թույլ չտվեց, որ այլ արժեքներ դավանող և ազգային-պետական ռազմավարության շուրջ անհամաձայնություններ ունեցող ուժերը գլուխ բարձրացնեն երկրի ներսում, իսկ Հայաստանը վախեցավ անգամ ռազմաքաղաքական համաձայնագիր կնքել Արցախի հետ, վախեցավ կամ քամահրանքով վերաբերվեց տարածքների բնակեցման հարցին և կեղծ ժողովրդավարություն խաղալով իր ծոցում տաքացրեց օտարի հինգերորդ շարասյունը հանդիսացող ուժերի, որոնք պետք է խաղաղ տիրանային իշխանությանը և քանդեին երկիրը: Անշուշտ, երկար տարիների անպտուղ գործելակերպը չդարձավ արցախյան պարտության

ու չավարտված կապիտուլյացիայի անմիջական պատճառը, սակայն այն հող նախապատրաստեց նրանց գալու համար, որոնց իշխանության օրոք հնարավոր դարձավ այն, ինչ եղավ:

Արձանագրենք, որ օտարի թելադրանքին ենթակա բացարձակապես անփորձ և անպատասխանատու նոր իշխանությունը ոչ միայն ունակ չեղավ պաշտպանելու երկիրը հնարավոր պատերազմից և դրա կործանարար հետևանքներից, այլև նույն թեթևամտությամբ պատրաստակամություն է դրսևորում վավերացնելու փաստաթղթեր, որոնք ոչ միայն Արցախի կորուստը իրավականորեն կամրագրեն, այլև այնպիսի զիջումներ Հայաստանից, որոնցից հետո Հայաստանը առհավետ կկորցնի անվտանգությունն ու ինքնուրույնությունը ապահովելու հնարավորությունը: Հայաստանի վերջին պարտվողական իշխանությունը, ձեռք ձեռքի տված առաջին պարտվողական իշխանության հետ, փայփայում է այն հույսը, թե թուրք-ադրբեջանական առավելապաշտական պահանջները բավարարելուց հետո Հայաստանը կստանա հավերժական խաղաղություն, բայց այդ անուրջները ոչ մի առնչություն չունեն ո՛չ պատմական նախադեպի, ո՛չ թուրքական ռազմավարական ծրագրերի և ո՛չ էլ աշխարհաքաղաքական կոնկրետ իրողությունների հետ: Ջգալով իր թույլ տված պատմական սխալների ծանրությունը և մյուս կողմից պատանդ մնալով հայոց պարտությունների ծրագրի վերջնականացմանը՝ արկածախնդիր իշխանությունը արտաքին մարտահրավերներից շեղելու համար շարունակում է ժողովրդի ամբոխային կրքերը գրգռել ներքին դասակարգային պայքարով: Համակողմանիորեն ձախողված իշխանությունը պատասխանատվությունից խուսափելու լավագույն պաշտպանական մարտավարություն է որդեգրել հարձակումը: Երկրի ճակատագրական հարցերում բացարձակ կրավորականության պայմաններում շարունակվում է դատական հետապնդումների բազմասերիանոց շոուն: Ըստ էության, երկրում հաստատված է ավտորիտար խունտա, որի հենարանը ազգային անվտանգության և ոստիկանության ուժերն են: Ասվածի ամենաակնառու օրինակը ներկայիս խորհրդարանն է, որի միջանցքները լցված են համազգեստավոր ու ավտոմատավոր մարդկանցով, որոնք հրաման ստանալուն պես խուժում են նիստերի դահլիճ և ծեծում պատգամավորների: Ընդդիմադիր տարբեր գործիչների, տեղական իշխանության ներկայացուցիչների հետ անօրինականորեն ձերբակալվել ու փակի տակ են պահվում երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի պատգամավորներ: Ճնշման տակ է ազատ մամուլը, ուժային կառույցների ծառայամիտ ղեկավարները պատրաստակամորեն ժողովրդի դեմ են դուրս բերում բիրտ վարք դրսևորող ուժերի՝ անկախ նրանից, թե ինչի դեմ է ուղղված հանրային դժգոհությունը: Իշխանությունը առանց վարանելու նորանոր օրինակներով փաստում է, որ իր համար երկրի բոլոր օրենքները, այդ թվում՝ մայր

օրենքը, ոչ մի արժեք չունեն: Այս քաղաքական վարքի համար կրկնվող պատմական օրինաչափություն է նաև երկրի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում, ինչը սովորաբար վերածվում է անվերջանալի գործընթացի և ավարտվում է իշխանական համակարգի ու նրա կրողի կործանմամբ:

Նրանք, ովքեր կուլիսների ետևում խորհուրդներ են տալիս ինքնահավան բոնապետիկին՝ սեփական փորձառությունից ելնելով, կարող էին իհարկե զգուշացնել վերջինիս, բայց նրանք էլ կարծես էյֆորիայի մեջ են: Ներքին լսարանի առջև պատասխանատվություն չունենալով, իսկ արտաքին ուժերի կողմից լռության խրախուսանքի արժանանալով՝ գործող խունտան, «դրական ազդակներին» արձագանքելով, ընթանում է դեպի հերթական պարտավորությունների կատարումը ազգի ոխերիմ թշնամիների նկատմամբ:

Կգտնի՞ արդյոք բարոյալքված, խաբված ժողովուրդն իր մեջ բավարար իմաստնություն և կամք՝ ոտքի կանգնելու և կանխելու այս գահավիժումը:

Պատասխանատու են բոլորը, քանի որ այս երկիրը ներկայի պատանդը չէ. այն ավելի շատ պատկանում է անցյալին ու ապագայի սերունդներին: Ոտքի կանգնելու, գործելու պատասխանատվությունը բոլոր նրանց ուսերին է, ովքեր կարողունակ են և հայրենիքը վեր են դասում ամեն ինչից:

Հ.Գ. Այս պայմաններում իշխանությունը, որը երկրի սահմանների պաշտպանության գործը պատրաստ է հանձնել ցանկացածին ով այդ պատասխանատվությունը կստանձնի, պատրաստվում է կատարել երկրի անկախության օրվան նվիրված գունագեղ տոնակատարություն:

Կարելի՞ է տոնել մի երկրի անկախությունը, որի սահմաններից ներս, ազատորեն թրև է գալիս թշնամին՝ ճանապարհներ է փակում, դիրքեր է գրավում, հավակնում է տիրանալու հաղորդակցական միջանցքների: Անկախության օրը տոնելու իշխանության բարոյական իրավունքին չարժե անդրադառնալ՝ չեղած բանից չեն խոսում: ■

Հայկական պետությունների անվտանգության համակարգի վերականգնման հեռանկարները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Ս.թ. օգոստոսի 9-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասն աշխատանքային այցով ժամանել է Հայաստան, որտեղ նա հանդիպել է երկրի բարձրագույն ղեկավարության հետ, եղել Ադրբեջանի հետ սահմանում, հանդես եկել որոշակի քաղաքական հայտարարություններով: Հայ հանրությունն այդ այցը առավելապես ընկալել է որպես ՀԱՊԿ քարտուղարին և ընդհանրապես այդ ողջ կառույցին «լավ դասեր տալու» հնարավորություն: Սկզբում բոլորը ոգևորված պատմում էին, թե որքան կոշտ էին Զասին ուղղված ՀՀ պաշտպանության նորանշանակ նախարար Արշակ Կարապետյանի խոսքերը, իսկ հետո էլ նույն եռանդով տարածվում էր ՀԱՊԿ քարտուղարի այն «խոստովանությունը», որ Ադրբեջանն իսկապես սպառնալիք է Հայաստանի համար:

Այսքանով ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հայաստանյան այցի հանրային օրակարգը, ցավոք, սպառվեց: Հայ քաղաքական ու փորձագիտական շրջանակները նույնիսկ ուշադրություն չդարձրին այն փաստին, որ Փաշինյան-Զաս հանդիպումից երկու օր անց Հայաստանի վարչապետը հանդես եկավ մի հայտարարությամբ, որում նա բացահայտեց մեր երկրի անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր միջազգային այդ կառույցի հետ հարաբերություններում առկա լուրջ խնդիրները: Փաշինյանը մասնավորապես ասել է, որ եթե ՀԱՊԿ-ն հետաքրքրված չէ հայ-ադրբեջանական սահմանում մոնիթորինգ իրականացնելու առաքելության ստանձնմամբ, ապա այլընտրանքը մնում է ԵԱՀԿ Մինսկի խումբը: Հիշեցնենք, որ հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի հենակետեր տեղակայելու մասին առաջարկը Նիկոլ Փաշինյանն առաջին անգամ հանրայնացրել է դեռևս մայիսի 27-ին՝ ՀՀ Անվտանգության խորհրդի նիստի ընթացքում: Միևնույն ժամանակ նա նշել էր, որ ՀԱՊԿ-ն էլ իր հերթին կարող է մոնիթորինգային առաքելություն ստանձնել: Թե որքան ժամանակ է պաշտոնական Երևանը քննարկում ռուսական կողմի հետ այդ երկու հնարավորությունները, պարզ չէ: Բայց, ամենայն հավանականությամբ, այս հարցերում Փաշինյանը լուրջ հաջողություններ չի ունեցել: Համենայնդեպս, ինչպես արդեն նշեցինք, Ստանիսլավ Զասի այցից հետո Հայաստանի վարչապետը սկսեց ավելի շատ խոսել ՀԱՊԿ-ի փոխարեն այդ առաքելությունը ԵԱՀԿ Մինսկի խմբին փոխանցելու մասին, իսկ ՌԴ ԱԳՆ-ն էլ նշել է, որ սահմանապահ զորքեր տեղակայելու համար անհրաժեշտ են միջազգային համապատասխան իրավական փաստաթղթեր, և այդ ուղղությամբ դեռևս աշխատանքներ են տարվում:

Ինչևէ, հասկանալի է, որ այս բոլորը բավական բարդ գործընթացներ են, որոնք կարող են նաև երկար ժամանակ պահանջել, բայց մինչ այդ

խնդիրներին անցնելը հայկական կողմը պետք է ունենա մեզ համար կենսական նշանակություն ունեցող ամենակարևոր հարցի պատասխանը՝ ո՞րն է մեր անվտանգության ապահովման մարտավարությունը: Ի՞նչ խնդիրներ ենք մենք փորձում լուծել այս ոլորտում և ինչպե՞ս: Որովհետև մինչ այս պահը հիմնական տպավորությունն այն է, որ Հայաստանը պարզապես փորձում է իր անվտանգային խնդիրները փոխանցել Ռուսաստանի Դաշնությանը, ՀԱՊԿ-ին, ԵԱՀԿ Մինսկի խմբին, Ֆրանսիային և այլն, մի խոսքով՝ ցանկացած մեկի, ով կստանձնի նման պատասխանատվություն, միայն թե ինքներս չզբաղվենք դրանով: Ավելին, դատելով որոշ հայ բարձրաստիճան պաշտոնյաների խոսքերից, կարելի է անգամ հանգել այն եզրակացությանը, որ պաշտոնական Երևանը պատրաստ է այդ հարցը վստահելու նույնիսկ Ադրբեջանին ու Թուրքիային: Համենայնդեպս, նոր պատերազմից խուսափելուն ուղղված ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության քայլերը, օրինակ՝ զինված ուժերին թելադրված արգելքը՝ չկրակելու ՀՀ տարածք ներխուժած թշնամու վրա, այլ ենթադրությունների առիթ չեն տալիս: Բայց սա քննարկման այլ թեմա է:

Այժմ ցանկանում եմ վերադառնալ գլխավոր հարցին՝ ո՞րն է մեր անվտանգության նոր համակարգի ստեղծման մարտավարությունը: Հստակ է, որ այս հարցը կարող է ունենալ ինչպես պարզ պատասխան, զորօրինակ՝ մարտունակ բանակի առկայությունը, այնպես էլ իրապես խորությամբ մտածված և լրջորեն մշակված մոտեցում: Ցավալին, սակայն, այն է, որ երկու պարագայում էլ ՀՀ իշխանությունների քայլերն ու մարտավարությունը հստակ չեն: Ավելի ճիշտ՝ դրանք պարզապես բացակայում են. ուժեղ և մարտունակ բանակ ունենալու հարցում նրանք շարունակում են առաջնորդվել պոպուլիստական հայտարարությունների տրամաբանությամբ, իսկ երկրորդ դեպքում ընդհանրապես ոչինչ չեն խոսում: Մինչդեռ մենք տեսնում ենք, որ պատերազմի ավարտից գրեթե մեկ տարի անց ՀՀ և Արցախի սահմաններում տեղակայված մեր նոր մարտական դիրքերը, մեղմ ասած, հեռու են հուսալի լինելուց:

Այս փաստը, իհարկե, բավական հուսահատեցնող

է: Բայց եկեք դեռևս փորձենք խուսափել սուր քննադատություններից և հասկանալ, թե առաջնային ինչ քայլեր են անհրաժեշտ հայկական պետություններին՝ սեփական անվտանգության համակարգը վերականգնելու, իսկ ապա նաև դրա որակական հատկությունները շարունակաբար կատարելագործելու համար: Սկսենք թերևս առկա ռեսուրսներից:

Պատերազմում ցավալի պարտություն կրելուց հետո հայկական երկու պետությունների զինված ուժերը գործում են եղածը պահպանելու, փրկելու տրամաբանությամբ: Դատելով բանակից ու սահմաններից ստացվող լրատվությունից՝ հայկական բանակը մինչ օրս կառավարվում է ճգնաժամային պայմաններին հատուկ ձևերով: Ընդհանուր կարգուկանոնի բացակայությունն ակներև է: Եվ սա դեռևս ամենամեծ խնդիրը չէ: Առավել վատն այն է, որ բանակում անհասկանալի սպասումների մթնոլորտ է տիրում: Այդ սպասումներն առավելապես վերաբերում են սահմանների անվտանգության ապահովման գործում ռուսական ներգրավվածության մեծացմանը և բխում են ՀՀ ռազմաքաղաքական իշխանությունների բառամթերքից ու գործողություններից: Սա չափազանց վտանգավոր իրողություն է, որովհետև այդ սպասումն էլ իր հերթին զինված ուժերին մղում է անգործության: Տրամաբանությունը պարզ է. ինչո՞ւ խրամատ փորել, եթե, միևնույն է, ռուսն է գալու և վերահսկելու իրավիճակը սահմանում: Կամ էլ՝ որտե՞ղ փորել, եթե դեռ հայտնի չէ, թե ապագայում սահմանն ինչ տեսք է ունենալու:

Ահա այս սպասողականությունից ու դատարկ հույսերից պետք է հրաժարվել: Հայ զինվորից բացի՝ ոչ ոք չի կարող Հայաստանի ու Արցախի անվտանգության իրական երաշխավոր լինել: Այս պահին փորված խրամատից առավել անվտանգ վայր չկա հայ զինվորի համար: ՀՀ ռազմաքաղաքական իշխանությունը պետք է լավ հասկանա այս պարզ ճշմարտությունները և հետևողական լինի, որ բանակը հենվի բացառապես սեփական ուժերի և կարողությունների վրա: Եթե վաղը այդ խրամատներն առաջ տանելու հնարավորություն բացվի, կամ սահմաններն անվտանգ դարձնելու միջազգային նոր երաշխիքներ ստեղծվեն, ավելի լավ, բայց մինչ այդ, որքան էլ դա դժվար լինի, մեր զինված ուժերը պետք է կատարեն իրենց բաժին աշխատանքը: Եվ շատ կարևոր է, որ զինվորականներն ունենան հստակ նպատակներ ու թիրախներ: Նրանք պետք է հասկանան՝ ինչն ինչի համար են անում և ինչ արդյունք կունենան ապագայում: Սա է բանակի մարտական ոգին ու արդյունավետությունը վերականգնելու միակ ճանապարհը, որի ուղղությամբ մենք դեռևս ոչ մի քայլ չենք արել: Իհարկե, այս ամենին պետք է գումարել նաև ժամանակակից սպառազինության ձեռքբերումը, զորքերի վերակազմակերպումը, որակյալ կադրերով համալրումը, մատակարարման խնդիրների լուծումը, ինժեներական աշխատանքները և այլն, և այլն, բայց սրանք բոլորը խիստ մասնագիտական հարցեր են, որոնցով պետք է զբաղվեն ՀՀ ԶՈՒ բարձրագույն հրամկազմն ու ռազմական փորձագետները:

Սա վերաբերում է բանակաշինությանը: Բայց հայտնի փաստ է, որ անվտանգության համակարգը միայն ուժեղ բանակը չէ: Այդ համակարգի գործունեությունն ապահովող ու արդյունավետ դարձնող բազում այլ գործոններ կան, որոնցից կարևորագույնը թերևս միջազգային համագործակցությունն է: Եվ ահա այստեղ է, որ ՀՀ իշխանությունների գործունեությունը խիստ թերի է: Ասվածը փաստերով հիմնավորելու համար առաջարկում ենք կրկին որպես օրինակ դիտարկել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) հետ մեր երկրի հարաբերություններն ու մոտեցումները: 2021 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանը ստանձնելու է այդ կազմակերպության նախագահությունը: Թվում է՝ պաշտոնական Երևանի համար սա պետք է լավ առիթ դառնար, որ վերանայվեին և հաղթահարվեին այն բոլոր կնճռոտ հարցերը, որոնք կուտակվել են ՀԱՊԿ-ի հետ Փաշինյանի կառավարության փոխգործակցության ընթացքում: Խնդիրներն իրոք շատ են, և դրանք թվարկելու անհրաժեշտություն չկա: Բայց հիմա Հայաստանը ստանձնելու է ՀԱՊԿ նախագահությունը: Եվ ուրեմն ինչո՞ւ էր պետք այդ կարևոր իրադարձությունից ընդամենը մեկ ամիս առաջ ամբողջ աշխարհով մեկ կրկին վարկաբեկել այդ կառույցը: Դա հասկանալի կլիներ, եթե հստակ տեսանելի լիներ, որ Հայաստանի նպատակը ՀԱՊԿ կազմաքանդումն է: Հաշվի առնելով ՀԱՊԿ անդամ որոշ պետությունների դիրքորոշումը մեզ համար կենսական նշանակություն ունեցող հարցերում՝ այդպիսի տեսական նպատակադրումը կարող էր ոմանց կողմից անգամ ընկալելի լինել: Բայց պարզ է, որ Հայաստանը նման խնդիր չունի իր առջև դրված: Ավելին՝ պաշտոնական Երևանը ցանկանում է օգտագործել ՀԱՊԿ կարողությունները՝ սեփական անվտանգային խնդիրները լուծելու համար: Հետևաբար ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության նման մոտեցումները ՀԱՊԿ-ի հանդեպ վկայում են առնվազն այն մասին, որ պաշտոնական Երևանը անվտանգային այդ կառույցի վերաբերյալ որևէ հստակ ծրագիր, անգամ մոտավոր պատկերացում չունի: Եվ սա մեծ խնդիր է: Մինչդեռ իրավիճակը, որում հայտնվել են հայկական պետությունները և ընդհանրապես մեր տարածաշրջանը, պահանջում է, որ անվտանգության ապահովման հարցում Հայաստանի հաշվարկները առավել քան ճշգրիտ լինեն: Դրանք չեն կարող սահմանափակվել միայն Ադրբեջանի կամ Թուրքիայի ռազմական պոտենցիալի հետ մեր կարողությունների համադրմամբ և այդ համատեքստում քիչ թե շատ ընդունելի լուծումների որոնումով: Այդ հաշվարկն իրականում պետք է ներառի Միջին Ասիայից մինչև Մերձավոր Արևելք, Պարսից ծոցից մինչև Սև ծովի ավազան և Եվրոպայից Չինաստան ընկած տարածքներում ընթացող բոլոր զարգացումները: Ասել է թե՝ հայկական անվտանգային համակարգն այլևս չի կարող լոկալ բնույթ կրել: Այն պետք է դառնա աշխարհաքաղաքական լուրջ գործընթացներին մեր ճիշտ հաշվարկված մասնակցության արդյունք: Եվ միայն այդ դեպքում կարելի կլինի հուսալ, որ Ռուսաստանի կամ ցանկացած այլ գերտերության ռազմական պոտենցիալը կծառայի նաև հայկական երկու պետությունների անվտանգության համակարգին: Հակառակ պարագայում Հայաստանն ու Արցախը դատապարտված են ձախողման, իսկ լավագույն դեպքում՝ ընդամենը մեծ տերությունների ձեռքում մանրադրամ լինելուն:

Արցախի կարգավիճակի խնդիրը 44-օրյա պատերազմից հետո և Ադրբեջանի դիրքորոշումը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Արցախյան առաջին պատերազմում հայկական կողմի հաղթանակից հետո՝ զինադադարի հաստատման հենց սկզբից, համաշխարհային ուժային կենտրոնները՝ ԱՄՆ-ն և Ռուսաստանը, հակամարտությունը սառեցնելու համաձայնության եկան ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում՝ դրանում ներառելով նաև Ֆրանսիային որպես եվրոպական շահերի ներկայացուցիչ: Սակայն ոչ մի հակամարտություն հարատև չէ, և երկար տարիներ Ադրբեջանի իշխանությունները պատրաստվում էին արցախյան հիմնախնդրի ռազմական լուծմանը՝ մշտապես ճնշում գործադրելով Հայաստանի վրա՝ սահմանագծի ողջ երկայնքով պահպանելով ռազմական լարվածությունը: Այդ լարվածության մակարդակը տարեցտարի աճում էր: Օգտվելով Հայաստանում իշխանափոխությունից հետո (2018 թ.) տիրող ներքաղաքական լարվածությունից և արտաքին քաղաքական դաշտում գործող իշխանությունների թերացումներից՝ Ադրբեջանը 2020 թ. սեպտեմբերի 27-ին նոր պատերազմ սանձազերծեց Հայաստանի և Արցախի դեմ, ինչի հետևանքով Արցախի հայկական տարածքների բռնազավթմամբ հակամարտությունն այլ փուլ թևակոխեց, իսկ Ռուսաստանը Արցախում խաղաղապահ ուժեր տեղակայեց:

44-օրյա պատերազմից հետո Արցախի անկախության և կարգավիճակի հարցը նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց հայությանը: Պատերազմը և 2020 թ. նոյեմբերի 9-ի տխրահռչակ փաստաթուղթը հանգեցրին մոտ երեք տասնամյակ հայկական ուժերի վերահսկողության տակ եղած 7 շրջանների հանձնմանը, ԼՂԻՄ-ին մաս կազմող Հադրութի ու Շուշիի կորստին, ռուս խաղաղապահների տեղակայմանը, Արցախի ավելի քան 70 տոկոսի անցնելուն Ադրբեջանի վերահսկողության տակ, բնակչության տեղահանությունների, հազարավոր զոհերի ու վիրավորների և մեծ անորոշության ու բազմաթիվ հարցերի: Այն հնարավորություններն ու առավելությունները, որոնք հայկական կողմին թույլ էին տալիս անկախության պահանջներ ներկայացնել, իսկ Բաքուն էլ պատրաստ էր բանակցելու մինչև 2020 թ., ըստ էության, այլևս գոյություն չունեն:

Փաստորեն, 44-օրյա պատերազմը արմատապես փոխեց իրավիճակը Հարավային Կովկասում: Ադրբեջանի դիրքերն ամրապնդվեցին, Հայաստանի դիրքերը թուլացան, Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում զգալիորեն աճեց, և ընդլայնվեց նրա ռազմական ներկայությունն Ադրբեջանի տարածքում: Միաժամանակ թուրք զինվորականներին հակամարտության գոտում խաղաղապահ կոնտինգենտի կարգավիճակ չտրվեց, ինչպես ակնկալում էին Անկարան և Բաքուն, այլ սահմանափակվեց հրադադարի ռեժիմի վերահսկման

ռուս-թուրքական համատեղ դիտորդական կենտրոնի դիտորդների գործառույթներով միայն, որը տեղակայված է Ադրբեջանի կողմից բռնազավթված Ակնայի (Աղդամ) շրջանում:

Ըստ էության, 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո իրավիճակի վրա ազդելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստացի անկարողության պայմաններում հստակորեն ընդգծվեց պետությունների ղեկավարների մակարդակով Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ երկխոսության ձևաչափի հաստատումը:

Հատկանշական է, որ նախորդ տարվա դեկտեմբերին ՌԴ նախագահ Վ. Պուտինը հայտարարեց, թե Արցախի կարգավիճակը պետք է անփոփոխ մնա մինչև հակամարտության վերջնական կարգավորումը[1], իսկ արդեն վերջին շրջանի ելույթներում նախագահը նշում է, որ հակամարտությունը տարածաշրջանում ոչ թե լուծված է, այլ դադարեցված[2]: Այսինքն՝ ստացվում է, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը, ինչպես 90-ականներին, այնպես էլ այժմ ուղղակի ռազմական գործողություններից տեղափոխվել է դիվանագիտական հարթակ (համենայնդեպս, դա այդպես են ընկալում համաշխարհային ուժային կենտրոնները և հատկապես տարածաշրջանային գլխավոր խաղացողներից մեկը՝ Ռուսաստանը): Սակայն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը պնդում է, որ արցախյան հակամարտությունը գտել է իր լուծումը: Ավելին՝ նա սպառնում է չխոսել դրա շարունակվելու մասին, քանի որ «դա սխալ և վտանգավոր ճանապարհ է»: Ավելի վաղ՝ մայիսին, Ի. Ալիևը հայտարարել էր, որ կարգավիճակի հարցն անտեղի է[3]: Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների խոսքերի միջև ակնհայտ անհամապատասխանություն կա, ավելին՝ ստացվում է, որ Վ. Պուտինը

գնում է «սխալ և վտանգավոր ճանապարհով», քանի որ, նրա խոսքերով, հակամարտությունը միայն դադարեցվել է և չի լուծվել, իսկ կարգավիճակի հարցը դեռ որոշված չէ:

Ֆրանսիական կողմը իր հերթին վերջին շրջանում ակտիվացել է Անդրկովկասյան տարածաշրջանում: Երևանում Ֆրանսիայի դեսպանը բացահայտորեն մատնանշել է, որ արցախյան հակամարտության կարգավորումը հնարավոր է միայն Արցախի կարգավիճակի որոշումից հետո[4]: Ստացվում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները չեն բացառում, Արցախի Հանրապետության կարգավիճակի քննարկումը:

2021 թ. հունիսի վերջին Երևանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը մատնանշեց, որ ԵԱՀԿ ՄԽ ձևաչափը շարունակում է գործել, և այն խնդիրները, որոնք ներառված են համանախագահների ձևաչափի օրակարգում, պահպանվում են[5]: Հուլիսի սկզբին Փարիզի նախաձեռնությամբ Է. Մակրոնը և Վ. Պուտինը հեռախոսազրույց ունեցան, որի ընթացքում երկու կողմերն էլ «պատրաստակամություն հայտնեցին համակարգելու Արցախի հակամարտության կարգավորումը տարբեր ասպեկտներով, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով»[6]:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ ՄԽ անդամ ԱՄՆ-ին, ապա վերջերս ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը հեռախոսազրույցներ է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հետ, որոնց ընթացքում ամերիկացի դիվանագետն ընդգծել է, որ Վաշինգտոնը «սատարում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից իրականացվող գործընթացը, որն ուղղված է արցախյան հակամարտության կայուն քաղաքական կարգավորմանը», և կողմերին «ԵԱՀԿ ՄԽ-ի շրջանակներում կառուցողական համագործակցության» կոչ արել[7]: Իսկ վերջերս Սյունիքի մարզ այցելած Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին հայտարարել է, որ «վերջին պատերազմի հետևանքները հաղթահարված չեն, հակամարտությունը կարգավորված չէ, քանի որ դեռևս որոշված չէ Արցախի կարգավիճակի հարցը»[8], ինչն էլ նշանակում է, որ ԱՄՆ-ն ևս ԵԱՀԿ ՄԽ-ի շրջանակներում շարունակելու է իր գործունեությունը՝ իրավիճակի դեէսկալացիայի, միջադեպերի բացառման, պատերազմի հետևանքների վերացման և Արցախի կարգավիճակի վերջնական կարգավորման անհրաժեշտությունից ելնելով:

Հատկանշական է, որ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը դեռ չէր ստանձնել Սպիտակ տան տիրոջ լիազորությունները, երբ որոշվում էր Արցախի ճակատագիրը: Վաշինգտոնը 44-օրյա պատերազմի արդյունքների ամփոփման մեջ եթե ոչ զրոյական, ապա երկրորդական դերակատարություն ունեցավ, ուստի Միացյալ Նահանգները կարող էր բավարարվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ մնալով, սակայն չպետք է մոռանալ Ջ. Բայդենի՝ Է. Մակրոնից ոչ պակաս «հայամետ» լինելու մասին: Ջ. Բայդենը ավելի քան տասը տարի աշխատել է ԱՄՆ Կոնգրեսի

հայկական հարցերի հանձնաժողովում, իսկ վերջերս 1915 թ. արյունալի իրադարձություններն անվանել է «Հայոց ցեղասպանություն»: Հայկական լոբբիի հետ որպես կոնգրեսական աշխատելիս Ջ. Բայդենը պաշտպանել է Ադրբեջանին հատկացվող օգնությունը դադարեցնելու մասին «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածը և Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ պահանջել այն ուժի մեջ պահել: Սպիտակ տան ղեկավարն անգամ քննադատել է Դոնալդ Թրամփին՝ 44-օրյա պատերազմի ընթացքում պասիվ լինելու համար, և Թուրքիային մեղադրել հակամարտությունը «թեժացնելու» մեջ:

Այսպիսով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահների համար Արցախի կարգավիճակի հարցը բաց է, և նրանց դիրքորոշումը հակասում է Ի. Ալիևի հայտարարություններին (վերջինս կարող է հույսը դնել միայն Թուրքիայի վրա, որը լիովին պաշտպանում է Ադրբեջանի քաղաքական գիծը): Ի դեպ, այն բանից հետո, երբ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի, այսինքն՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների դեսպանները մերժեցին Ադրբեջանի կառավարության հրավերը՝ այցելելու Շուշի, բուռն քննադատության արժանացան ադրբեջանական իշխանությունների կողմից: Պետք է ընդգծել, որ մերժումն ինքնին հասկանալի է՝ հաշվի առնելով չեզոքություն պահպանելու համանախագահների պարտավորությունը: Այլ բան է, որ դա առաջացրեց Ադրբեջանի զայրույթը, որը նախկինում համանախագահներին (շատ հաճախ՝ Ռուսաստանին) մեղադրում էր կողմնակալության և հայանպաստ դիրքորոշման մեջ:

Ընդհանուր առմամբ իրավիճակը ցույց է տալիս, որ տարածաշրջանի հիմնական դերակատարները ոչ միայն դեմ են հետպատերազմյան շրջանում ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարմանը, այլև աջակցում են նման ձևաչափի վերակենդանացմանը: Իրադարձությունների տրամաբանությունը հուշում է, որ Մոսկվան մտադիր չէ այս դեպքում մենակ գործել, այլ համաձայն է ներգրավել այլ դերակատարների ևս:

Ի. Ալիևն իր ելույթներից մեկում նշել է, որ պատերազմի ժամանակաշրջանն անցյալում է, սակայն Ադրբեջանը ամեն րոպե պետք է պատրաստ

լինի պատերազմի[9]: Անհասկանալի է, թե ում դեմ է Ադրբեջանը մտադիր պատերազմել և ինչի համար, եթե Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան հստակ նշել են, որ առճակատում չի լինի, ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում է մնալ տարածաշրջանի քաղաքական դաշտում, և Արցախի կարգավիճակը պետք է հստակեցվի: Այդ դեպքում ինչո՞վ է պայմանավորված Ի. Ալիևի դիվանագիտական նման կտրուկ հոետորաբանությունը: Թուրքիայի և Ադրբեջանի ջանքերը բավարար չեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին հակազդելու համար, եթե նրանք Արցախի հարցում միասնական մոտեցում ցուցաբերեն: Պատերազմ չի լինի, ինչը նշանակում է, որ դիվանագիտական դաշտում խստացումներ կլինեն: Օրինակ՝ կարող է դրվել Արցախի Հանրապետության (ԱՀ) ճանաչման հարցը: Արդյոք սա ձեռնտո՞ւ է պաշտոնական Բաքվին, որը նախկինում խոսում էր շատ ավելի մեղմ և դիվանագիտական լեզվով:

Եթե Բաքուն չմեղմացնի իր կոշտ հոետորաբանությունը, ապա դա նրա փոխարեն կանեն ուրիշները, առաջին հերթին՝ Մինսկի խմբի երկրները: Սա նման է այն արտահայտությանը, թե «դուք կարող եք պատերազմը հաղթել ռազմի դաշտում և պարտվել այն դիվանագիտական սեղանների շուրջ»: Այս պարագայում Ադրբեջանը մարտահրավեր է նետում համաշխարհային դիվանագիտությանը՝ ըստ էության խոչընդոտելով ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների վերսկսումը, մինչդեռ Երևանը պատրաստ է հետևելու համանախագահ երկրների հայտարարությանը, որը կողմերին կոչ էր անում առաջին իսկ հնարավորության դեպքում վերսկսելու բարձր մակարդակի հանդիպումները միջնորդ երկրների հովանու ներքո: Բայց մի՞թե դա հնարավոր է: Նախ նշենք, որ Ռուսաստանի դիրքորոշումը «ստեղծագործական» է (չմոռանանք, թե ինչպես 44-օրյա պատերազմից հետո վերջինս կարողացավ միայնակ իրականացնել միջնորդական դերակատարությունը): Միաժամանակ չպետք է բացառել Արցախի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի փոփոխման հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի քաղաքական ռեսուրսներն այդ ուղղությամբ դեռ չեն սպառվել: Ակնհայտ է, որ Մինսկի խումբը և նրա համանախագահները պետք է նպաստեն հակամարտության երկարաժամկետ և կայուն կարգավորման բանակցություններին: Հետևաբար ինչպե՞ս և ի՞նչ պարագայում ԵԱՀԿ Մինսկի խումբը կարող է վերսկսել Արցախի հակամարտության կարգավորման միջնորդական առաքելությունը այն պայմաններում, երբ, ըստ ռուս փորձագետ Սերգեյ Մարկեդոնովի, «հին ստատուս քվոն արմատապես կոտրված է, բայց նորը դեռ չի կայացել»[10], իսկ դրա ձևավորումը տեղի է ունենում «դրամատիկ պայմաններում»:

Ինչպես տեսնում ենք, խաղն ընթանում է հեռահար տիրույթով, ինչը կարող է պայմանավորված լինել առնվազն երկու գործոններով: Նախ՝ Բաքվում և Անկարայում, որոնք անցյալ տարվա աշնանը փորձում էին վերջնականապես լուծել արցախյան հակամարտությունը, սկսեցին գիտակցել, որ չկա «բացարձակ հաղթանակ», քանի դեռ Ռուսաստանը մնում է տարածաշրջանում: Լրացուցիչ լարվածություն է առաջացնում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցային գործընթացի հնարավոր վերսկսումը, որը Ադրբեջանի ղեկավարը հրապարակայնորեն և անարդյունավետորեն «թաղել» է մի քանի անգամ:

Երկրորդ՝ սոցիալ-տնտեսական դրությունը մերձկասպյան երկրում, մեղմ ասած, այնքան էլ գոհացնող չէ: Հունիսի 1-ից «SOCAR»-ի նախաձեռնությամբ Ադրբեջանում բարձրացվել են բնական գազի և էլեկտրաէներգիայի գները, այդ թվում՝ այն ձեռնարկությունների, որոնք անխուսափելիորեն կազդեն բնակչությանը մատուցվող ծառայությունների գների վրա: Այս ամենը նույնպես նպաստում է հասարակական դժգոհության մեծացմանը: Ընդ որում, բնակչությանը մտահոգում է նաև ռուսական խաղաղապահ ուժերի առկայությունը:

Չնայած Ադրբեջանի օգտին իրավիճակի արմատական փոփոխությանը՝ վաղ թե ուշ թե՛ տարածաշրջանային և թե՛ արտատարածաշրջանային ուժերը, միևնույն է, ստիպված կլինեն վերադառնալ Արցախի կարգավիճակի խնդրին: Ակնհայտ է, որ ռուս խաղաղապահները չեն հեռանա, մինչև չլուծվի Արցախի կարգավիճակի և բնակչության անվտանգության խնդիրը: Իհարկե, այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է միջազգային ասպարեզում վերականգնել Հայաստանի դիրքն ու կարևորությունը:

Հղումներ

1- Путин: статус Нагорного Карабаха должен остаться неизменным, https://www.youtube.com/watch?v=bYo_qta04YY, 17. 12. 2020, (հսն. 27. 08. 2021):

2- Путин назвал решающим вклад России в урегулировании конфликта в Карабахе, https://iz.ru/1182872/2021-06-23/putin-nazval-reshaiushchim-vklad-rossii-v-uregulirovanii-konflikta-v-karabakhe, 23. 06. 2021, (հսն. 27. 08. 2021):

3- Алиев предостерег от разговоров о неразрешенности карабахского конфликта, https://ria.ru/20210714/konflikt-1741272922.html, 14. 07. 2021, (հսն. 27. 08. 2021):

4- Ֆրանսիան կդիտարկի պաշտպանության ոլորտում Հայաստանի հայտը, ասում է դեսպան Լաքոտը, https://www.azatutyun.am/a/31373041.html, 23. 07. 2021, (հսն. 27. 08. 2021):

5- Копыркин прокомментировал возвращение последней группы армянских пленных из Азербайджана, https://ru.armeniasputnik.am/society/20210622/28032030/Kopyrkin-prokommentiroval-vozvrashchenie-posledney-gruppy-armyanskikh-plennykh-iz-Azerbaydzhana.html, 22. 06. 2021, (հսն. 27. 08. 2021):

6- Путин и Макрон провели телефонный разговор, https://tass.ru/politika/11812723, 02. 07. 2021, (հսն. 27. 08. 2021):

7- Բլինքենը Ալիևի հետ զրույցում կարևորել է ԵԱՀԿ Մխ համանախագահների աշխատանքի շարունակումը, https://www.azatutyun.am/a/31229605.html, 29. 04. 2021, (հսն. 27. 08. 2021):

8- Հակամարտությունը լուծված չէ, քանի որ ԼՂ կարգավիճակը դեռևս որոշված չէ. ՀՀ-ում ԱՄՆ դեսպան, https://www.1lurer.am/hy/2021/08/23/Հակամարտությունը-լուծված-չէ-քանի-որ-ԼՂ-կարգավիճակը-դեռևս-որոշված-չէ-ՀՀ-ում-ԱՄՆ-դեսպան/541503, 23. 08. 2021, (հսն. 27. 08. 2021):

9- Ответ из Азербайджана: хотим мира, но вынуждены готовиться к войне, https://zerkalo.az/otvet-iz-azerbajdzhana-hotim-mira-no-vynuzhdeny-gotovitsya-k-vojne/, 16. 08. 2021, (հսն. 27. 08. 2021):

10- Маркедонов написал о формировании нового статуса-кво и интернационализации карабахского конфликта, https://newsarmenia.am/news/nagorno_karabakh/markedonov-napisal-o-formirovanii-novogo-statusa-kvo-i-internatsionalizatsii-karabakhskogo-konflikta/, 29. 10. 2020, (հսն. 27. 08. 2021):

Արցախի անկախության 30-ամյա ուղին (1-ին մաս)

Էդիկ Մինասյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼՂՀ անկախության հռչակումը և պետականության ձևավորումը

20-րդ դարավերջին Հայաստանի անկախության վերականգնումը և հայկական զույգ հանրապետությունների (ՀՀ և ԼՂՀ) ստեղծումը շրջադարձային եղան մեր ժողովրդի պատմության մեջ: 1980-ական թթ. երկրորդ կեսին, հավատալով գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությանը, հայ ժողովուրդը փորձեց հասնել Արցախի ազատագրությանը: Երկու տարվա ծանր փորձություններից հետո, համոզվելով, որ ամբողջատիրական վարչակարգը և ժողովրդավարությունը անհամատեղելի են, համազգային պայքարը միաժամանակ ուղղվեց անկախ պետականության վերականգնմանը: Հաղթահարելով բազմաթիվ դավեր ու փորձություններ՝ հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախ պետականությունը:

Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: 1988 թ. փետրվարից սկիզբ առած արցախյան համաժողովրդական շարժմանը Ադրբեջանը հակադրեց բիրտ ուժ՝ դիմելով ցեղասպանական գործողությունների Սումգայիթում, Բաքվում և այլուր: Սկսվեց բռնագաղթը Ադրբեջանի հայաբնակ վայրերից, որն ընթացավ մի քանի փուլերով:

Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի շրջափակումը վատթարացրեց առանց այդ էլ ծանր իրադրությունը: Սակայն այս ամենը չընկճեց հայ ժողովրդին, որը որդեգրեց համազգային պայքարի ուղին: Սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունն իր ունեցած բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Արցախին Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարում:

Ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը և բնակիչներին արտաքսել հայրենիքից:

1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի՝ հատուկ նշանակության ջոկատները (ռուս.՝ ՕՄՕՆ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:

1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ: 1991 թ. Հուլիսին Արցախում ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում ձևավորվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո:

Երբ ակնհայտ դարձավ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը, 1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց Ադրբեջանական Հանրապետության անկախության վերականգնման մասին հռչակագիր[1]: Հռչակագրում ասվում էր, որ Ադրբեջանի Հանրապետությունն ընդգրկելու է 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմանները: Փաստորեն, Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ոչ Նախիջևանը, ոչ Լեռնային Ղարաբաղը: 1990 թ. ապրիլի 3-ից գործող «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալուն առնչվող հարցերի լուծման կարգի մասին»[2] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմաններում գտնվող ինքնավար հանրապետություններին ու ինքնավար կազմավորումներին և տվյալ տարածքում բնակչության մեծամասնությունը կազմող համահավաք բնակվող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը: Հետևաբար Լեռնային Ղարաբաղի հայությունն իրավունք ուներ օրինական ճանապարհով անջատվելու Ադրբեջանից, մանավանդ որ 1918-1920 թթ. Ղարաբաղը այդ պետությանը մաս չէր կազմել: Բացի այդ՝ 1991 թ. հոկտեմբերի 18-ի անկախության մասին սահմա-նադրական ակտով Ադրբեջանը անվավեր ճանաչեց Խորհրդային Միության գոյության շրջանում ընդունված իրեն վերաբերող ակտերը: Դրանով իսկ Ադրբեջանը անվավեր ճանաչեց նաև բոլոր ակտերը,

որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին:

Առաջնորդվելով ԽՍՀՄ Սահմանադրությամբ և նշված օրենքով՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների համատեղ նստաշրջան: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)[3]: Նրա տարածքում մինչև ԼՂՀ Սահմանադրության և օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը:

Այսպիսով՝ Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ-ի իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետահիրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված, Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր: Հետևաբար Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից: Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչվել Ազգերի լիգայի կողմից այդ հանրապետության մեջ մտնող տարածքների սահմանների հստակ որոշման դժվարության պատճառով:

Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են նաև պատմական հիմքերից, քանի որ վերջինս անկախ Ադրբեջանի մաս երբևէ չի եղել: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ հռչակագրի կենսագործման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին[4]: Միաժամանակ հանրապետական կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Այդ հանձնարարականները գործնականում անհնար էր կատարել, քանի որ մարզի մեծ մասը գտնվում էր հայկական ուժերի վերահսկողության ներքո: Ադրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

1991 թ. դեկտեմբերի 10-ին անցկացվեց հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Չնայած պատերազմական դժվարին կացությանը, ԼՂՀ բնակչության՝ ձայնի իրավունք ունեցողների 82 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99,8 %-ը քվեարկեց անկախության օգտին[5]:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ, որոնց ադրբեջանցիները չմասնակցեցին: 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհի փակ լինելու պատճառով 3 պատգամավոր չէր հասել Ստեփանակերտ) և 80 դիտողների ու լրագրողների ներկայությամբ տեղի ունեցավ հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց «ԼՂՀ անկախության հռչակագիրը»:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց ԼՂՀ Նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ[6]:

Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով: Առաջնային համարվեց ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը, որում որպես միջնորդ կողմ ներգրավվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ): Բայց Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի՝ քաղաքական մեթոդներով

կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ: Ավելին՝ Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ ադրբեջանցիներն իրենց ռազմական բազաներից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծություններն ավերել ու կաթվածահար էին արել Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի ու կրակակետերի ոչնչացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը:

Արցախի ազատագրական մարտերը. Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական և դիվանագիտական աջակցությունը մարտնչող Արցախին

Կազմակերպչական լուրջ աշխատանքներ տանելուց հետո ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը 1992 թ. հունվարից ձեռնամուխ եղան Ստեփանակերտի քաղաքամերձ ադրբեջանական կրակակետերի ոչնչացմանը: Ձինված ջոկատները համարվեցին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և միավորվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո: ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի նիստի որոշմամբ ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)[7]: Նույն նիստի որոշմամբ ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ՝ Արթուր Մկրտչյանի նախագահությամբ: 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ): Հանրապետության ներքին կայունությունը պահպանելու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ՊԿ նախագահ նշանակել Սերժ Սարգսյանին[8]:

1992 թ. մարտին վերջնականապես ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը: ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչև 1992 թ. օգոստոս (մինչև Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) ստեղծումը)[9]: Սկսեց գրվել ազգային բանակի մարտական փայլուն կենսագրությունը, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի ոչնչացումը:

Շուշիի ազատագրումը

1992 թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում դրությունն օրհասական էր: Անընդհատ ռմբակոծվող մայրաքաղաքը սովի եզրին էր: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ

մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր[10]: Գերխնդիր էր Շուշիի ազատագրմամբ ՀՀ-ի հետ ճանապարհային ուղիղ կապի ապահովումը:

1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել Շուշիի գրավման «Հարսանիք լեռներում» գործողությունը: Ռազմական գործողությունները ղեկավարում էր գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը, նրա կողքին էին գեներալ Գ. Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆ. Գզոզլյանը և ուրիշներ:

Թշնամին ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 60 ջոկատ:

Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը:

Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից: Ժամը 18-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին քաղաքի կենտրոնը և ադրբեջանցիների հսկողության տակ թողեցին միայն հարավային հատվածը: Մայիսի 9-ի կեսօրին մարտեր էին մղվում միայն հենակենտրոնի մոտ: Թշնամին խուճապահար դիմեց փախուստի: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց: Շուշիի ազատագրմամբ և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարակից բնակավայրերը շունչ առան:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն

ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն:

Պատերազմի հաղթական ավարտը

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց մի քանի օրվա ընթացքում բացելու հույժ կենսական կարևորություն ունեցող Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհը, որը հնարավորություն կտար վերացնելու Արցախի շրջափակումը և ապահովելու հան-բապետության բնակչության նորմալ կեն-սագործունեությունը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը[11]:

Հետապնդելով խուճապահար հակառակորդին ու զարգացնելով ռազմական գործողությունները՝ դարաբաղյան ուժերն առաջ շարժվեցին և մայիսի 18-ին մտան Լաչին: Դրանով ճեղքվեց շրջափակման օղակը, և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը: Բացվեց «կյանքի ճանապարհը», և Արցախը կապվեց մայր հայրենիքին: Այս հաղթանակները խթանեցին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը:

1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ազատագրվեցին Ասկերանի և Մարտունու մի շարք գյուղեր[12]: 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրեցին ռազմավարական նշանակություն ունեցող Քելբաջարի (Քարվաճառ) շրջանը, իսկ մայիս-հունիս ամիսներին՝ Մարտակերտի շրջանի գրավված տարածքները: Ադրբեջանական Լաչին-Քելբաջար խմբավորման ջախջախման շնորհիվ ապահովվեց անվտանգ երթևեկություն «կյանքի ճանապարհով»[13]:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր: 1993 թ. հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց թշնամուն պարտության մատնել Աղդամի մոտ: Աղդամի խմբավորման ջախ-ջախումից հետո թշնամին ուժ ու միջոցներ կուտակեց Ֆիզուլիի (Դիզակ) և Ջաբրայիլի (Զրակն) շրջաններում: Հակահարձակման անցնելով՝ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ջախջախեցին թշնամուն և գրավեցին Ֆիզուլիի (օգոստոսի 22), Ջաբրայիլի (օգոստոսի 23), Կուբաթլուի (օգոստոսի 31) և Ջանգելանի (Կովական) (նոյեմբերի 1) շրջանները[14]: Նույն թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված հարձակման արդյունքում ոչնչացվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, և գրավվեց Հորադիզի շրջանը: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց ռազմաճակատի ողջ երկայնքով՝ փորձելով վերադարձնել կորցրած տարածքները, բեկում մտցնել պատերազմում: Ադրբեջանական բանակը համալրվեց օտարերկրյա ժամանակակից տեխնիկայով: Նրանց բանակի շարքերում կռվում էին աֆղան, թուրք, ուկրաինացի, չեչեն և հյուսիսկովկասցի այլ վարձկաններ:

Հավաստի տվյալներով՝ Արցախում տեղաբաշխվել էին 1000-1500 վարձկաններ հիմնականում «Հեղբ ի էսլամի» խմբավորումից: Վարձկանները գործել են Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Ալի Բայրամլիի շրջաններում: Նրանց շարքերում մեծ թիվ են կազմել «արաբ աֆ-ղանները», որոնց մեջ է եղել հետագայում Չեչնիայում կռվող հայտնի ահաբեկիչ Խաթաբը: Վարձկանները ղեկավարել են խառը կազմ ունեցող զորամիավորումներ: Նրանց մեջ է եղել նաև չեչենական գումարտակը (հրամանատար՝ Շ. Բասաև), որը մտել է ադրբեջանական «Դ» խումբ կոչվող դիվերսիոն զորամիավորման մեջ: Ուկրաինայի վարձկանները հայտնի էին կրիվիչներ անունով: Վերսկսվեց Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից և ԱՊՀ այլ պետություններից ադրբեջանցի (ոչ միայն) կադրային սպաների՝ Ադրբեջան տեղափոխումը: Մեծ թվով սպաներ ու ռազմական հրահանգիչներ հրավիրվեցին Թուրքիայից: 1993 թ. հոկտեմբերից մինչև 1994 թ. մայիսը անցկացվել էր չորս զինակոչ: Արտասահմանում գնվել էին մեծաքանակ

ռազմական տեխնիկա և սպառազինություն: Ընդլայնվել էր ազգային զինվորական կադրերի պատրաստումը Թուրքիայի ռազմաուսումնական հաստատություններում: Սկսած 1993 թ. դեկտեմբերի 15-ից՝ ադրբեջանական զորքերը հարձակումներ գործեցին Ֆիզուլիի, Մարտունու, Աղդամի, Մարտակերտի և Քելբաջարի ուղղություններով: Խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ մինչ այդ հաստատված տասնօրյա երկկողմ զինադադարը՝ հակառակորդը մեկօրյա հրետանային նախապատրաստությունից հետո՝ դեկտեմբերի 22-ին, տանկերի, հետևակի և մարտական մեքենաների գործադրմամբ, 30 կմ ճակատային գծով վերսկսեց հարձակումը Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ:

Ազատատենչ արցախցիները կարողացան կասեցնել հակառակորդի բոլոր հարձակումները և առանձին վայրերում հակահարձակման անցնելով՝ հսկողության տակ վերցնել նոր տարածքներ: Ավելի քան մեկամսյա համառ մարտերի ընթացքում հակառակորդը չկարողացավ որևէ հաջողության հասնել:

1993 թ. փետրվարի 18-ին Քելբաջարի (Քարվաճառ) շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումով, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները կատարելապես խուճապի մատնեցին ադրբեջանցիներին: Ազատագրվեցին Մարտակերտի և Ասկերանի շրջանների բնակավայրերը: Շուրջ երեքամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5000-ից ավելի զինվոր և սպա, 72 միավոր տեխնիկա:

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել դարաբաղյան հիմնահարցը և հետագա խայտառակությունից խուսափելու համար ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին հրադադար խնդրել: Մայիսի 5-ին Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արարքցյան) ստորագրեցին արձանագրություն կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին: ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովի միջնորդական ջանքերով ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարները (Ս. Սարգսյան և Մ. Մամեդով) և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանը մայիսի 11-ին համաձայնագիր ստորագրեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ[15]: 1994 թ. մայիսի 12-ին համաձայնագիրն ուժի մեջ

մտավ: Հաջորդ օրը ադրբեջանական բանակը խախտեց այն: Վերջապես, մայիսի 16-ին Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանը, ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարները և ԼՂՀ ՊԲ հրամանատարը Մոսկվայում համաձայնության եկան կրակի դադարեցման շուրջ, որին մեկ ամիս անց Ադրբեջանը տվեց իր համաձայնությունը[16]:

Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը:

Պատերազմում զոհվեցին շուրջ 6500 ազատամարտիկներ[17]:

Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցեց նաև սփյուռքահայությունը: Նրա օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական ու բարոյական առումներով:

Սփյուռքահայերը ոչ միայն մասնակցեցին ռազմական գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում ունեցան զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և պաշտպանական շրջանների ձևավորման գործում: Սփյուռքահայ քաջերի մի մասը՝ Վիգեն Զաքարյան, Միեր Ջուլհաճյան, Մոնթե Մելքոնյան, Կարո Քահքեջյան և ուրիշներ, զոհվեց:

* * *

Տանուլ տալով պատերազմը և չկարողանալով շոշափելի հաջողությունների հասնել դիվանագիտական ասպարեզում՝ 1990-ական թթ. կեսերից սկսած, հատկապես 2000-ական թթ. սկզբներին, Ադրբեջանը որդեգրեց նոր՝ դիպուկահարների և դիրքային պատերազմ, դիվերսիոն հարձակումներ, գյուղերի և առհասարակ խաղաղ բնակչության թիրախավորում և այլն: Թեև նմանատիպ գործողությունները մշտապես տեղի են ունեցել հետհրադադարյան պայմաններում,

այնուամենայնիվ, 2014, 2015 և 2016 թթ. քանակական և նպատակադրումների առումներով դրանք ձեռք բերեցին որակապես նոր բովանդակություն: Ռազմաշունչ հռետորաբանությանը զուգահեռ՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը պարբերաբար և հետևողականորեն քայլեր էր ձեռնարկում առաջնագծում իրադրությունն արհեստականորեն սրելու ուղղությամբ:

2015 թ. հակառակորդը գործողության մեջ դրեց հրետանի և զենիթային կայանքներ: 2016 թ. թշնամին որոշեց հարցը լուծել ռազմական ճանապարհով՝ խախտելով զինադադարը[18]:

Քառօրյա պատերազմը

Չնայած 1994 թ. հաստատված զինադադարին՝ շուրջ 22 տարի ադրբեջանական կողմը մշտապես խախտել է այն՝ պարբերաբար ռմբակոծելով արցախա-ադրբեջանական սահմանային հայկական դիրքերն ու հայ-ադրբեջանական սահմանամերձ գյուղերը կամ դիպուկահարների օգնությամբ սպանելով հայ սահմանապահ զինվորներին ու խաղաղ բնակչությանը: Այս ամենին հայկական կողմը շատ հաճախ պատասխանում էր պատժիչ գործողություններով:

Ադրբեջանի հանկարծակի, կայծակնային հարձակումը («բլիցկրիգը») տապալվեց: ՀՀ նախագահ, ՔՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Ս. Սարգսյանը ապրիլի 4-ին՝ ԵԱՀԿ անդամ պետությունների դեսպանների հետ կայացած հանդիպման ժամանակ, հստակորեն մատնանշեց Թուրքիայի խիստ բացասական դերը Ադրբեջանի սանձազերծած պատերազմում: Նա նշեց, որ «Թուրքիան, որը հաճախ հիշեցնում է իր՝ Մինսկի խմբի անդամակցության մասին, հանդես է գալիս տարածաշրջանում պատերազմ հրահրողի դիրքերից և բացահայտ քաջալերում է ադրբեջանական ղեկավարության արկածախնդիր քաղաքականությունը»:

Պաշտպանական բանակի հերոսամարտերի, Հայաստան-Արցախ-Սփյուռք ամուր եռամիության, հայ հասարակության համախմբման շնորհիվ հակառակորդը հուժկու հակահարված ստացավ և պարտադրված գնաց զինադադարի. ապրիլի 5-ին՝ ժամը 12:00-ին, նա առաջարկեց հրադադար ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով:

Արցախյան պատերազմի 2-րդ փուլում իր համախմբվածությամբ, զինվորի ու բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ մեր ժողովուրդն ապացուցեց, որ կարողանում է համախմբվել առանց կոչի, զինվորագրվել ազգային կարևոր խնդրի լուծման գործին, նեցուկ կանգնել հայոց պաշտպանական վահանին՝ հայկական բանակին:

Հղումներ

1- Տես НКР, История и современность, Степанакерт, 1998, էջ 9:
2- Տես Золян С., Нагорный Карабах: Проблема и конфликт, Ер., 2001, էջ 111:
3- Տես «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի 1991:
4- Տես Հակոբյան Տ., ԼՂՀ հոչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., 2011, էջ 21:
5- Տես նույն տեղում, էջ 22-23:
6- Տես Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 151:
7- Տես Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, էջ 58, Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 56:
8- Տես նույն տեղում, Հակոբյան Տ., նշվ. աշխ., էջ 64:
9- Տես նույն տեղում, էջ 57:
10- Տես նույն տեղում, էջ 54-55:
11- Տես Բալայան Վ., Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 368:
12- Տես Օհանյան Ս., նշվ. աշխ., էջ 119-121:
13- Տես Խաչատրյան Հ. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 109-110, 132-133:
14- Տես նույն տեղում, էջ 126-128, 139, 143:
15- Տես նույն տեղում:
16- Տես նույն տեղում:
17- Տես «Հայաստանի Հանրապետություն», 11, 12 մայիսի 2016:
18- Տես Էլբակյան Է., էջ 146-179:

Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումներին թեև վերջին 20 տարվա ընթացքում մեզանում անդրադարձել են բազմիցս, բայց 2020 թ. 44-օրյա պատերազմը, մեծ տերությունների և ՀՀ հարևան պետությունների, այդ թվում՝ Իրանի պաշտոնական հայտարարությունները և նրանց կողմից որդեգրված դիրքորոշումները ստեղծել են որոշակի անհրաժեշտություն՝ վերանայելու Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ նշված պետությունների, մասնավորապես Իրանի դիրքորոշումը՝ որը պայմանավորված էր նախկին պատերազմների ընթացքում և դրանց ակտիվ փուլերում (1992-1994 թթ. և 2016 թ. ապրիլ) ու առհասարակ 1992 թվականից մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում արձանագրված իրողություններով:

Արցախյան առաջին պատերազմ

Արցախյան առաջին պատերազմի տարիներին Իրանը եղել է միջնորդական առաքելություն իրականացրած ամենաակտիվ պետություններից: Լինելով աստվածապետական կառավարում և շիայադավան մեծամասնություն ունեցող պետություն՝ Իրանը մեծ մասամբ կարողացել է գործնականում չեզոքություն պահպանել հակամարտող կողմերի միջև այն դեպքում, երբ Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը նույնպես իսլամի շիայական ուղղության հետևորդ է, և ադրբեջանական իշխանություններն էլ, օգտվելով այդ հանգամանքից, պարբերաբար փորձել են կրոնական երանգավորում տալու հակամարտությանը և ջիհադի քողի տակ ստանալու մուսուլմանական աշխարհի, այդ թվում և՝ Իրանի աջակցությունը: Թեև պաշտոնական Թեհրանը Արցախյան առաջին պատերազմի ժամանակ արել է առնվազն երեք հայտարարություն, որոնցում ձևականորեն պաշտպանել է Ադրբեջանի շահերը, սակայն այնպիսի գործնական աջակցություն, ինչպիսին ակնկալում էին Բաքվում և Անկարայում, և որը կարող էր որևէ ազդեցություն ունենալ ռազմական գործողությունների և պատերազմի ելքի վրա, չի ցուցաբերել:

Նշված հայտարարություններից առաջինը ԻԻՀ փոխարտգործնախարարի՝ 1992 թ. օգոստոսին արած հայտարարությունն էր, որում նա նշել է. *«Ղարաբաղը Ադրբեջանի տարածքն է և պետք է մնա նրա գերիշխանության տակ: Մենք երբեք չենք ընդունի, որ Ղարաբաղը միանա Հայաստանին կամ էլ առանձին պետություն դառնա: Մենք ոչ մի պարագայում չենք ընդունի ոչ բանակցությունների, ոչ պատերազմի հետևանքով և ոչ էլ ճնշման տակ կատարված սահմանների փոփոխությունը թե՛ Ադրբեջանում, թե՛ Նախիջևանում: Դա մեր պետության և ժողովրդի, ինչպես նաև Ադրբեջանի ժողովրդի ցանկությունն է»:*

Երկրորդ հայտարարությունն արվել է ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի կողմից 1993 թ. հուլիսին Թավրիզ քաղաքում. *«Հայաստանի կառավարությունը և Ղարաբաղի հայերը ճնշում են տարածաշրջանի մահմեդականներին: Դատապարտելով Հայաստանի աջակցությամբ արցախահայերի վերջին գործողությունները՝ իրանահայությունից ակնկալում ենք նմանօրինակ վերաբերմունք»:* Կա այդ ժամանակաշրջանով թվագրվող և Ալի Խամենեիին վերագրվող ևս մեկ հայտարարություն կամ կրոնական հրովարտակ՝ ֆաթվա, ինչպես դա անվանեց այս տարվա հուլիսի 23-ին Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն, ըստ որի՝ *«Ղարաբաղը իսլամական հող է»*: Թեև չկա այդ հայտարարությունը հաստատող որևէ տեսահոլովակ կամ այլ ապացույց, սակայն այն բազմիցս շահարկվել է ինչպես պաշտոնական Բաքվի, այնպես էլ Իրանի պանթյուրքական տարբեր խմբավորումների անդամների և պրոադրբեջանական տրամադրվածություն ունեցող հասարակական, քաղաքական ու կրոնական գործիչների կողմից և առ այսօր պաշտոնապես չի հերքվել:

Երրորդ հայտարարությունն արվել է Իրանի ԱԳՆ-ի կողմից 1993 թ. օգոստոսի 12-ին. *«Իրանն անտարբեր չի մնա հայկական ուժերի կողմից ադրբեջանական տարածքների նկատմամբ ագրեսիայի շարունակման դեպքում, և իսլամական աշխարհը նույնպես թույլ չի տա, որ մի անկախ իսլամադավան երկիր ենթարկվի ագրեսիայի»:*

Բերված երեք հայտարարությունները թեև պաշտոնապես ի ցույց են դնում Իրանի արտաքին ձևական աջակցությունը Ադրբեջանին Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, սակայն գործնական աջակցություն իրանական կողմից Ադրբեջանին չի ցուցաբերվել: Ադրբեջանում ակնկալում էին, որ Իրանը, հետևելով Թուրքիայի օրինակին, ոչ միայն չի հաստատի դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի հետ, այլև կմասնակցի Հայաստանի շրջափակմանը, ինչն այդպես էլ տեղի չունեցավ: Ադրբեջանում կա տարածված մի տեսակետ, որ Արցախյան առաջին

պատերազմում ադրբեջանցիների կրած պարտության հիմնական մեղավորների շարքում առաջինն Իրանն է, որը, չմասնակցելով Հայաստանի սահմանների շրջափակման ադրբեջանա-թուրքական ծրագրին, ապահովել է Հայաստանի կապն արտաքին աշխարհի հետ՝ պատճառ դառնալով Ադրբեջանի պարտությանը: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ Իրանի՝ Ադրբեջանին գործնական աջակցություն չցուցաբերելու կարևոր պատճառներից մեկը Բաքվում «Ազգային ճակատ»-ի՝ իշխանության գալն էր, որի առաջնորդը՝ Աբուլֆազ Էյչիբեյը, պանթուրանական գաղափարախոսության կրող էր, հանդես էր գալիս բացահայտ հակահիրանական հայտարարություններով և կասկածի տակ էր դնում Իրանի տարածքային ամբողջականությունը՝ չթաքցնելով պատմական Ատրպատականի կամ, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանի» հանդեպ ունեցած իր պանթյուրքական նկրտումները:

2016 թ. Ապրիլյան պատերազմ

2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունը շարունակել է պահպանել իր գործնական չեզոքությունը և ինչպես առաջին պատերազմի, այնպես էլ Ապրիլյան քառօրյայի ժամանակ փորձել է իրականացնել միջնորդական առաքելություն: Պատերազմի երկրորդ օրը Իրանի խորհրդարանի անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովում հրավիրվել է արտահերթ նիստ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցով, որի ավարտից հետո ԻԻՀ ԱԳՆ գլխավոր քարտուղարը հայտարարել է, որ Իրանը ԼՂ հակամարտության հարցում որդեգրում է անկողմնակալ դիրքորոշում: Պատերազմի օրերին ինչպես Ադրբեջանի, այնպես էլ ՀՀ և ԱՀ նախագահների հետ հեռախոսազրույց է ունեցել ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին, նաև երկու երկրների համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների հետ հեռախոսազրույցներ են ունեցել ԻԻՀ արտաքին գործերի, պաշտպանության և ՋՈՒ աջակցման նախարարները՝ շեշտելով ռազմական գործողությունները դադարեցնելու և խնդիրը բանակցային ճանապարհով լուծելու կարևորությունը: 2016թ. Ապրիլյան պատերազմի ժամանակ ԻԻՀ-ն պահպանել է չեզոքություն ոչ միայն գործնականում, այլև պաշտոնական հայտարարությունների մակարդակում՝ ի տարբերություն Արցախյան առաջին պատերազմի, որի ժամանակ թեև պահպանել էր գործնական չեզոքություն, սակայն պաշտոնական հայտարարությունների մակարդակում մի քանի անգամ որոշակիորեն խախտել էր հավասարակշռությունը և չեզոքությունը:

Արտաքին միջամտություն

Պաշտոնական Թեհրանի ընդհանուր մոտեցումները հակամարտության համեմատաբար պասիվ և ոչ պատերազմական շրջաններում տարբեր ժամանակահատվածներում ԻԻՀ նախագահների և արտաքին

Իրանի և ՀՀ արտգործնախարարներ Մոհամմադ Զարիֆը և Էդվարդ Նալբանդյանը

գործերի նախարարների՝ Արցախյան հիմնախնդրի առնչությամբ կատարած հայտարարություններում կարմիր թելի պես անցել են հետևյալ ցանկությունները, որոնց հիման վրա էլ, ըստ էության, ձևակերպվել է իրանական կողմի ընդհանուր դիրքորոշումը խնդրի վերաբերյալ.

- արդար լուծում,
- երկխոսություն,
- խաղաղ բանակցություններ,
- խնդրի լուծում միջազգային օրենքների շրջանակներում
- խնդրի լուծում բանակցային եղանակով,
- խաղաղություն և կայունություն տարածաշրջանում,
- միջնորդական առաքելության ստանձնում:

Ստորև կներկայացնենք մի քանի պաշտոնական հայտարարություններ, որոնցում ընդգծվում է վերը թվարկված սկզբունքների կարևորումը Իրանի կողմից:

«Պատրաստ ենք մեր բոլոր հնարավորություններն օգտագործելու Ղարաբաղի հարցի արդար լուծման համար» (2001 թ., ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարազի):

«ԼՂ հակամարտությունը պետք է լուծվի արդարության սկզբունքի հիման վրա» (2011 թ. սեպտեմբեր, ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադ):

«Թեհրանը շահագրգռված է այդ հակամարտության՝ խաղաղ ճանապարհով կարգավորմամբ միջազգային իրավունքի շրջանակներում: Մենք միշտ ցանկացել ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հաջող ավարտ և հակամարտության՝ խաղաղ ճանապարհով կարգավորում: Իրանը՝ որպես հարևան երկիր, միշտ պատրաստ է դերակատարում ստանձնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում» (2015 թ. փետրվար, ԻԻՀ արտգործնախարար Մոհամմադ-Ջավադ Զարիֆ):

«Ադրբեջանը և Հայաստանը մեր գործընկերներն են, և մենք հուսով ենք, որ բանակցությունների ու քաղաքականության միջոցով Ղարաբաղի հարցում հնարավոր կլինի հասնել տևական խաղաղության: Նման խաղաղությունը բխում է տարածաշրջանի բոլոր երկրների շահերից: Անկասկած, խաղաղության հասնելու համար գոյություն չունի ռազմական ճանապարհ: Եվ հուսով ենք, որ խնդիրը կլուծվի միջազգային օրենքների շրջանակներում՝ խաղաղ բանակցությունների միջոցով» (2016 թ. դեկտեմբեր, ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանի):

Հակամարտության համեմատաբար պասիվ և ոչ

պատերազմական շրջաններում հարցի առնչությամբ իրանական դիրքորոշումը հնարավոր է դուրս բերել նաև այն բացառումներից և անթույլատրելի համարված կետերից, որոնք շեշտադրել են ԻԻՀ նախագահները, արտգործնախարարները և դիվանագետները: Դրանք են՝

- լարվածության բացառում,
- ցանկացած տեսակի ռազմական բախման բացառում,
- ռազմական ճանապարհով հարցի լուծման բացառում:

Օրինակ.

«Իրանը՝ իբրև միակ երկիր, որն ընդհանուր սահման ունի հակամարտության գոտու հետ, իր մտահոգությունն է հայտնում տարածաշրջանում լարվածություն և ցանկացած տեսակի բախում ստեղծելու կապակցությամբ» (2012 թ. մարտ, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատուն):

«Անկասկած, խաղաղության հասնելու համար գոյություն չունի ռազմական ճանապարհ» (2016 թ. դեկտեմբեր, ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանի):

Նշված կետերից բացի՝ հատկապես վերջին տարիներին եղել է «պետությունների տարածքային ամբողջականության հարգում» սկզբունքի խնդիրը, որը կիրառվել է Իրանի մասնակցությամբ տարածաշրջանային երկրների նախագահների և արտգործնախարարների եռակողմ (Իրան, Վրաստան, Ադրբեջան) կամ քառակողմ (Իրան, Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան) հանդիպումների համատեղ հայտարարությունների տեքստերում և Ադրբեջանի Հանրապետությունում ԻԻՀ դեսպանների հայտարարություններում:

Նշված տարիների ընթացքում ոչ մեկ անգամ բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշումներ են արտահայտել Ատրպատականի խոշոր քաղաքների (Թավրիզ, Արդաբիլ, Ուրմիա) ուրբաթօրյա աղոթապետերը, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի որոշ գեներալներ, Ադրբեջանում Իրանի դեսպաններ, որոնք չեն համարվել պաշտոնական Թեհրանի դիրքորոշում և հաճախ մեկնաբանվել են ու բացառվել որպես պաշտոնական Իրանի դիրքորոշում ՀՀ-ում Իրանի դեսպանների կամ ռազմական կցորդների կողմից: Ունենալով ընդհանուր առմամբ արտաքուստ բացասական բովանդակություն հայկական շահերի տեսանկյունից, այնուամենայնիվ, ոչ այդ հայտարարությունները, ոչ անգամ ԻԻՀ մասնակցությամբ Իսլամական համագործակցության կազմակերպությունում Արցախի խնդրով հակահայկական բանաձևերի կամ հայտարարությունների ընդունումը չեն ազդել Իրանի՝ գործնական չեզոքություն պահպանելու և ՀՀ-ի հետ բարձր մակարդակի քաղաքական հարաբերություններ կառուցելու քաղաքականության վրա:

2020 թ. 44-օրյա պատերազմ և հետպատերազմական շրջան

Թեև Իրանը 2020 թ. 44-օրյա պատերազմի առաջին փուլում ունեցել է համեմատաբար չեզոք դիրքորոշում, պաշտոնական հայտարարություններում անընդհատ շեշտել տարածաշրջանում ահաբեկիչների տեղակայման անթույլատրելիության մասին, դարձյալ հանդես եկել միջնորդական առաքելություն ստանձնելու առաջարկներով, սակայն երկրորդ փուլում՝ ադրբեջանական զորքերի առաջխաղացմանը և իրավիճակի փոփոխությանը զուգահեռ, վերանայել է կողմերի միջև չեզոքության և հավասարակշռության պահպանման իր նախկին սկզբունքներն ու հաշվի նստել պատերազմի դաշտում տեղի ունեցող փոփոխությունների և դրանց հետևանքով ձևավորվող նոր իրողությունների հետ:

Ի վերջո, 2020 թ. նոյեմբերի 3-ին ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին ձևակերպել է ԻԻՀ վերանայված դիրքորոշումը արցախյան հակամարտության առնչությամբ և սահմանել հետևյալ սկզբունքները.

- Ադրբեջանի գրավյալ տարածքները պետք է վերադարձվեն:
- Այդ տարածքի հայերի անվտանգությունը պետք է ապահովվի:
- Երկու կողմերն էլ չպետք է թիրախավորեն պետությունների միջազգայնորեն ճանաչված սահմանները:
- Եթե ահաբեկիչները մոտենան Իրանի սահմաններին, կտրուկ գործողությունների կհանդիպեն:

Պատերազմի ավարտից հետո՝ 2021 թ. հունվարի 25-ին, ԻԻՀ արտգործնախարար Մոհամմադ-Ջավադ Զարիֆը շնորհավորել է Ադրբեջանի կառավարությանն ու ժողովրդին՝ «վերջին հաղթանակների կապակցությամբ», իսկ հուլիսի 15-ին Իրանի նորընտիր նախագահ Էբրահիմ Ռայիսին շնորհավորել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին՝ «բռնազավթված տարածքների ազատագրման, այդ տարածքներում Ադրբեջանի պետական իշխանության վերականգնման և պետական սահմանների վերահսկողության հաստատման կապակցությամբ»:

Ամփոփելով պետք է նշել, որ 2020 թ. 44-օրյա պատերազմում հայկական կողմի անհաջողություններին և իրավիճակի փոփոխությանը զուգահեռ տեղի է ունեցել նաև արցախյան հակամարտության առնչությամբ իրանական պաշտոնական դիրքորոշումների և մինչ այդ օգտագործված եզրաբանության, բառերի ու արտահայտությունների հստակ փոփոխություն, որը հաստատվել է նաև պատերազմից ամիսներ անց երկրի նախկին արտգործնախարարի և նորընտիր նախագահի՝ Ադրբեջանի նախագահին, կառավարությանը և ժողովրդին ուղղված շնորհավորանքներով, դրանցում կիրառված տերմիններով և արտահայտություններով:

Թալիբյան Աֆղանստանը որպես աշխարհաքաղաքական գործիք

Վարդան Հակոբյան

Խորհրդային Միության փլուզումից հետո միաբևեռ աշխարհակարգի պայմաններում և գլոբալիստական ծրագրերի իրականացման հետևանքով Արևմուտքի և Արևելքի միջև ընկած երկրներից ձևավորվեց հակադրության մի գոտի, որը ձգվում է Բալթիկ ծովից՝ բաժանելով Արևմտյան Եվրոպան Արևելյանից, անցնում է սևծովյան ավազանի երկրներով, Հարավային Կովկասով և, հատելով Կասպյան տարածաշրջանը, հասնում է Աֆղանստան: Թուրքիայում այդ գոտին ճյուղավորվում է և, անցնելով Միջերկրական ծովի արևելյան ափերով ու Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներով, հասնում մինչև Ջիբրալթար: Այդ գոտին կարելի է բնութագրել բազմաթիվ որոշիչներով՝ լարվածության, անկայունության, բաժանարար, բուֆերային և այլն: Այս բնութագրերը տեղին են, քանի որ այդ գոտին բաժանում է արևելյան և արևմտյան քաղաքակրթությունները, համաշխարհային կրոնները, լարվածություն է ստեղծում պետությունների և ժողովուրդների միջև, իսկ այդ գոտում տեղակայված պետությունները բուֆերի նման իրենց վրա են վերցնում հարվածները թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից:

Ինչևիցե, թալիբների՝ իշխանության գալով Աֆղանստանը դարձավ այդ գոտու վերջին և կարևոր հատվածը, քանի որ անխուսափելիորեն կներքաշվի աշխարհաքաղաքական խաղերի մեջ և կարող է օգտագործվել որպես համաշխարհային հակամարտության սանձազերծման դետոնատոր:

Աֆղանստանը բարձրլեռնային, դժվարանցանելի, կիսաանապատային երկիր է՝ մոտ 20 մլն բնակչությամբ: Թե՛ բրիտանացիների, թե՛ ռուսների և թե՛ ամերիկացիների փորձը ցույց տվեց, որ այդ երկրում գրեթե անհնար է ճնշել տեղացիների պարտիզանական պայքարը, փոխել նրանց ազգային ու կրոնական համոզմունքները, ապրելակերպը: Աֆղանստանի լեռներում կարող են թաքնվել բազմաթիվ զինված խմբավորումներ, տարատեսակ ահաբեկչական բանդաներ, որոնց չափազանց դժվար է գտնել ու վնասազերծել:

Աֆղանստանը առանձնակի հետաքրքրություն չի ներկայացնում իր բնական ռեսուրսներով, տնտեսական և հաղորդակցական-տրանսպորտային հնարավորություններով: Բայց այն շրջապատված է գլոբալ և տարածաշրջանային ծանրակշիռ պետություններով՝ Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան (սահմանակից է վերջինիս ռազմաքաղաքական ազդեցության տակ գտնվող միջինասիական հանրապետություններին), Իրան և Պակիստան: Այս երկրներից չորսը միջուկային տերություններ են, որոնց բնակչությունը կազմում է երկրագնդի բնակչության կեսը՝ երեք միլիարդից ավելի: Նշենք նաև, որ այս տերությունների միջև հարաբերությունները բարդ են, իսկ Չինաստանի ու Պակիստանի հարաբերությունները Հնդկաստանի

հետ կարելի է բնութագրել որպես լարված: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին, ապա դրանց ռազմավարական պլանավորման ինստիտուտները, ելնելով Բրիտանական կայսրության փորձից, Աֆղանստանը կարևորում են որպես մի դիտակետ, մի բարձունք, որտեղից կարելի է հետևել և հսկել Չինաստանի, Պակիստանի ու Հնդկաստանի քաղաքական շարժերը, տեսնել նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունների խոցելիությունն ու Ռուսաստանի տագնապները, Իրանի անպաշտպան թիկունքը և փոքր-ինչ հեռվից լսել Թուրքիայի պանթյուրքական կաղկանձը և արաբական երկրների բազմաձայնությունը: Իրապես այդ բարձունքը շատ հարմար դիտակետ է հեռավոր Արևմուտքի համար՝ մոտիկից դիտելու նշված երկրների տարատեսակ քայլերը և, օգտագործելով այդ երկրների շարքում ունեցած դաշնակիցներին, քաղաքական վարքագիծ պարտադրելու մյուսներին: Սա էր պատճառը, որ ԱՄՆ-ն, օգտվելով 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից, ներխուժեց Աֆղանստան, չնայած որ այդ ժամանակ երկրում իշխող թալիբները որևիցե կապ չունեին այդ ահաբեկչության հետ: Հակաահաբեկչական կոչված ներխուժմանը մասնակցեցին ՆԱՏՕ-ի զորքերը, օժանդակեցին Ռուսաստանը և Կենտրոնական Ասիայի շատ պետություններ: Ուղիղ 20 տարի տևեց ամերիկացիների զինված ներկայությունը Աֆղանստանում:

Եվ ի՞նչ փոխվեց այդ երկրում: Ժողովրդավարական հասարակա՞րգ ձևավորվեց, տնտեսությո՞ւնը զարգացավ, ահաբեկիչնե՞րը ոչնչացվեցին: Իհարկե ոչ: Ավելին՝ այդպիսի նպատակ, ինչպես հայտարարեց նախագահ Բայդենը, ամերիկացիները չունեին:

Այժմ անդրադառնանք թալիբների կողմից Քաբուլի գրավումից հետո ստեղծված իրավիճակին և դրա վերաբերյալ համաշխարհային ԶԼՄ-ներում հնչող կարծիքներին ու քաղաքագիտական վերլուծություններին: Դրանք հիմնականում հանգում են հետևյալ եզրակացություններին.

-ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն պարտվեցին թալիբներին,

-չկարողացան կազմակերպել իրենց կողմից ձևավորված խամաճիկային կառավարության

դիմադրությունը թալիբներին,

-չկարողացան ապահովել զորքերի կազմակերպված դուրսբերումը՝ վերածելով այն խուճապահար փախուստի,

-լքեցին իրենց հետ համագործակցած հազարավոր աֆղանցիների:

Դժվար է համաձայնել այս պարզունակ գնահատականների հետ: Շատ թե քիչ ծանոթ լինելով հզոր պետությունների քաղաքական, ռազմական, հետախուզական, դիվանագիտական կարողություններին ու գործելաոճին՝ մեղմ ասած դժվար է հավատալ խուճապի և փախուստի այն օպերետային պատկերներին, որոնցով ԶԼՄ-ները ներկայացնում էին աշխարհում թիվ մեկ բանակի զորքերի դուրսբերումը Աֆղանստանից: Մենք մեր ենթադրություններն ու եզրակացությունները կատարվածի ու դրա պատճառների վերաբերյալ կներկայացնենք՝ ելնելով համապատասխան իրադարձությունների մասին տեղեկատվության համադրումից ու վերլուծությունից:

Հեգնանք են առաջացնում նաև որոշ քաղաքական գործիչների և նույնիսկ պետությունների ղեկավարների կողմից շտապ արված մեկնաբանությունները: Ոմանք շտապեցին հայտարարել, որ պատրաստ են ճանաչելու թալիբների իշխանությունը, օգնելու նրանց վերականգնելու երկրի տնտեսությունը, մարդասիրական օգնություն հասցնելու և այլն: Այս երեսպաշտական հայտարարությունների հետևում, իհարկե, թաքնված են սառը քաղաքական հաշվարկներ՝ սեփական շահերն առաջ տանելու համար: Օրինակ՝ Էրդողանը շտապեց հայտարարել, որ պատրաստ է ճանաչելու «Թալիբան»-ի վարչակարգը, բայց միաժամանակ իր ՆԱՏՕ-ական գործընկերներին ներշնչում է, թե այդպես իրականում միջոցներ է ձեռնարկում՝ խոչընդոտելու ՌԴ-ի, Չինաստանի և Իրանի կողմից այդ երկրում իրենց դիրքերը հաստատելու փորձերը: Սակայն նշված երեք երկրներն էլ լավ հասկանում են Թուրքիայի նեոօսմանական ձգտումները՝ հաստատվելու նախկին Խորհրդային միջինասիական հանրապետությունների անմիջական հարևանությամբ: Ռուսները, զգալով թալիբների կողմից մահացու վտանգը, նախկին միջինասիական հանրապետություններում իրավիճակն

ապակայունացնելու հեռանկարով արագ դիվանագիտական քայլեր են ձեռնարկում նրանց հետ համագործակցելու համար: Բանը հասել է նրան, որ ՌԴ-ում պաշտոնապես արգելված ահաբեկչական այդ կազմակերպությանը որոշ քաղաքագետներ առաջարկում են ճանաչել որպես ազգային-ազատագրական շարժում: Չինացիները նույնպես փորձում են օգտագործելով իրենց բավական ակտիվ տնտեսական ներկայությունը Աֆղանստանում համագործակցել նոր իշխանությունների հետ՝ պահպանելու եղածը և ապահովելու իրենց մասշտաբային ծրագրի՝ «Մեկ ճանապարհ՝ մեկ գոտի», իրագործումը: Տնտեսական վերելք ապրող Հնդկաստանին անհանգստացնում են Պակիստանի ազդեցության խորացումը թալիբների վրա և վերջիններիս ու չինացիների հետ հակահնդկական ճակատի ձևավորումը: Եթե թալիբները չկարողանան ստեղծել կայուն պետություն և ներքաշվեն քաղաքացիական պատերազմի մեջ, շիիթական Իրանը կհայտնվի ծանրագույն կացության մեջ, եթե հաշվի առնենք սունի թալիբների հնարավոր համագործակցությունը իրենց սուննիական աշխարհի առաջնորդներ համարող Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի հետ:

Նշենք նաև, որ Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը և Հնդկաստանը իրապես շահագրգռված են Աֆղանստանում կայունության հաստատմամբ: Դա բխում է այդ երկրների կենսական շահերից և անհրաժեշտ է նրանց՝ վերը նշված սպառնալիքները չեզոքացնելու համար:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ երկիրը ոչ մի կերպ հետաքրքրված չէ Աֆղանստանում կայունության հաստատմամբ: Կայուն Աֆղանստանում Թուրքիան անելիք չունի և չի կարող մրցակցել այնպիսի տնտեսական հսկաների հետ, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը: Իսկ անկայունությունը, ասենք՝ քաղաքացիական պատերազմը այդ երկրում, Թուրքիայի համար լայն հնարավորություններ կբացի գործունեություն ծավալելու և իր նեոօսմանական նկրտումներն առաջ մղելու համար: Այդ դեպքում է, որ, գիշակերի նման լեշի հոտն առնելով, Էրդողանը խառնակիչ գործունեություն կծավալի ողջ տարածաշրջանում՝ առաջադեմ ժողովուրդներին դա ներկայացնելով որպես դիմակայություն ռուսներին, Իրանին ու չինացիներին, իսկ սուննիական աշխարհին՝ որպես իսլամական ժողովուրդների ազատագրական պայքար:

Քաղաքական գործիչների այս ակտիվության, երբեմն ջղաձիգ քայլերի պատճառը, իհարկե, Աֆղանստանից ԱՄՆ-ի «խայտառակ պարտությունն» ու «խուճապահար փախուստն» է: Ինչպես ասում են, եզն ընկավ, դանակավորները շատացան: Բայց եզն իսկապե՞ս ընկավ: Վերը նշեցինք, թե 20 տարվա ընթացքում ինչ չհաջողվեց Միացյալ Նահանգներին անել Աֆղանստանում: Հայտարարված ժողովրդավարական, գլոբալիստական և ոչ մի ծրագիր չիրականացվեց, ոչ մի ազատական արժեք չմտավ աֆղանցիների ապրելակերպ: Իսկ ի՞նչ արվեց այդ 20 տարվա ընթացքում: Մեր կարծիքով՝

արվեցին շատ կարևոր գործեր, որոնք եկան լրացնելու և ավարտին հասցնելու այն ռազմավարական, աշխարհաքաղաքական ծրագրերը, որոնք մշակել էին ԱՄՆ-ի ռազմավարները: Վերջիններս, դասեր քաղելով բրիտանացիների և ռուսների փորձից, հանգեցին այն եզրակացությանը, որ այդ երկրում չպետք է պայքարել այլ պետական կարգ հաստատելու համար: Աֆղանստանում ձեռնտու է այնպիսի ուժի իշխանությունը, որը լավ գումարի դիմաց պատրաստ կլինի կատարելու ցանկացած պատվեր: Սիրիայում այդպիսին «Իսլամական պետությունն» էր: Աֆղանստանում այդպիսի ուժ է կրոնական ծայրահեղականներից և ահաբեկիչներից բաղկացած «Թալիբան»-ը: Նախ նշենք, որ Աֆղանստանում իր ծրագրերն իրականացնելու համար Միացյալ Նահանգները ծախսել է ավելի քան 1 տրիլիոն դոլար, և անդրադառնանք այդ ծրագրերն իրականացնելու համար կատարված գործերին: Ներխուժելով Աֆղանստան՝ ԱՄՆ-ն 20 տարի ապահովեց իր զինված ներկայությունը Հարավարևելյան Ասիայի սրտում՝ վերահսկելով տարածաշրջանի քաղաքական ու ռազմական գործընթացները: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Չինաստանը, ո՛չ Իրանը, ո՛չ էլ մեկ այլ պետություն չէր կարող որևէ քայլի դիմել տարածաշրջանում առանց հաշվի առնելու այդ ներկայությունը: Քշելով թալիբներին իշխանությունից՝ ամերիկացիները ձեռնամուխ եղան աֆղանական զինված ուժերի ձևավորմանը: Չխուսափելով հսկայական ծախսերից, չխնայելով միջոցները՝ նրանք ստեղծեցին լավ վարժված ու ժամանակակից զենքերով ու տեխնիկայով զինված 300 հազարանոց ռազմական ուժ: Այն հարցին, թե ինչպես այդ բանակը 11 օրվա ընթացքում պարտություն կրեց թալիբների ընդամենը 70 հազարի հասնող ջոկատներից, կա մի պատասխան՝ հաղթելու հրաման տրված չէր: Հիշեցնենք, որ թալիբները Քաբուլ մտան առանց կրակոցների, ցուցադրաբար անզեն: Այսինքն՝ կար իշխանությունը նրանց հանձնելու պայմանավորվածություն: Ինչ վերաբերում է թալիբների 70 հազարանոց ջոկատներին, ապա լեռներում պարտիզանական կռիվներում թրծված ու փորձված այդ մարտիկները կմիանան ամերիկացիների կողմից պատրաստված բանակին և կգրավեն բարձր դիրքեր Աֆղանստանի զինված ուժերում: Մի կարևոր հանգամանք ևս. ԱՄՆ-ի բանակի շտաբի ղեկավարությունն այնքան «ապաշնորհ» գտնվեց, որ Աֆղանստանից «փախչելիս» 80 մլրդ դոլարի զենք ու զինամթերք, հրթիռներ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ ու զրահամեքենաներ թողեց ահաբեկիչներին: Թե՞ նվիրեց: Դժվար չէ ենթադրել, որ երկու տասնամյակի ընթացքում ամերիկյան հատուկ ծառայությունները գործակալական լայն ու բազմաֆունկցիոնալ ցանց են ստեղծել այդ երկրում, որն ընդգրկել է աֆղանական բոլոր կառույցները, մասնավորապես՝ բանակը, պետական օղակները, ընդդիմությունը և իհարկե թալիբներին իրենց ղեկավարների հետ: Նաև, անկասկած, հնարավորինս չեզոքացվել են այլ պետությունների նման ցանցերը: Բացի այդ, աչք փակելով ու խրախուսելով կոռուպցիան խամաճիկային վարչակարգի բոլոր օղակներում, միայն իրենց

Ամերիկյան զորքը հեռանում է Աֆղանստանից

հայտնի խողովակներով կաշառելով թալիբներին և ահաբեկչական այլ կազմակերպությունների ղեկավարներին, վերջիններիս ֆինանսական կախվածության մեջ են գցել և նրանց վրա ազդեցության հզոր լծակներ ձեռք բերել:

Վերն ասվածից կարող ենք անել հետևյալ եզրակացությունը: ԱՄՆ-ն իր քսանամյա գործունեությամբ Աֆղանստանում ստեղծեց իսլամիստական վարչակարգ՝ «Թալիբան» ծայրահեղական, ահաբեկչական կազմակերպության գլխավորությամբ: Այդ ռեժիմն ունի 400 հազարանոց լավ զինված բանակ ու կրոնական գաղափարական ամուր հենարան հավատացյալ աֆղանների (և ոչ միայն աֆղանների, այլև հավատացյալ շատ մահմեդականների) շրջանում և մարտնչելու է հանուն այդ գաղափարների: Հայհոյելով անհավատներին, պախարակելով արևմտյան արժեքները՝ այդ վարչակարգը պատրաստ կլինի մարտնչելու հանուն ծայրահեղ իսլամական գաղափարների: Մարտնչել ո՞ւմ դեմ: Ճիշտ է՝ Արևմուտքի հակառակորդների, օրինակ՝ «Իսլամական պետության» դեմ Սիրիայում:

Մի խոսքով՝ Հարավարևելյան Ասիայի սրտում պատրաստվեց ու տեղադրվեց մի ռումբ, որն անհրաժեշտ պահին կարող է պայթեցվել: Թե դա ինչ հետևանքներ կունենա 3 մլրդ բնակչությամբ 5 հզոր տերություններ ընդգրկող տարածաշրջանում, դժվար չէ պատկերացնել. երկարատև արյունալի և հյուծող պատերազմ: Իսկ առաջադեմ մարդկությունը արևմտյան հեռվից կդատապարտի արևելյան բարբարոսությունները, կաղոթի զոհերի համար և հումանիտար օգնություն կառաքի: Հավելենք, որ այդ պայթյունից կարող է բռնկվել ամբողջ գոտին՝ Աֆղանստանից մինչև Բալթիկ ծով և Ջիբրալթար: Իսկ այդ դեպքում էլ ինչ Մետաքսե ճանապարհ, ինչ նավթատար ու գազատար դեպի հարավ-արևելք, ինչ առևտրի շուկաներ Հնդկական օվկիանոսի ափերին և այլն, և այլն: Իսկ ո՞ւմ հրահանգով թալիբները կվառեն ռումբի պատրույգը: Իհարկե, միայն նրա, ում ձեռքում բոլոր լծակներն են, ով հսկայական գումարներ է ծախսել այդ լծակներն ու ռումբը ստեղծելու համար: Այդ ռումբը միջուկայինից ու հիպերարագ հրթիռներից էլ հզոր է, և պարտադիր էլ չէ այն պայթեցնել: Պայթեցնելու վտանգն արդեն սարսափելի է: Թող վախենան ու չփորձեն բազմաբևեռություն խաղալ: ■

Էրտողանի, Անգարայի եւ թալեպաններու անթաքոյց համագործակցութեան հեռանկարը

Ֆրանսայի ամէնէն հեղինակաւոր թերթերէն «Լը Մոնտ»-էն և «Լը Մոնտ Տիփլոմաթիք»-էն կապարուած այս համադրումը լաւագոյնս կը բացայայտէ պաշտօնական Թուրքիոյ և թալեպաններու համագործակցութիւնն ու Անգարայի տարածաշրջանային ախորժակը: Առ այդ հայ քաղաքական միտքը առնուազն զգուշաւորութեամբ պարտի հետևիլ տակաւին խմորուող, բայց արընթաց զարգացում ապրող նոր կացութեան: Արագ, հապճեպ, տարերային ու ենթակայական մեկնաբանութիւններ պէտք է բացառել և պարզապէս այս հանգրուանին մօտէն հետևիլ հոլովոյթին, որ եթէ ոչ անմիջականօրէն, սակայն գէթ հեռակայ կարգով անպայմանօրէն կ'առնչուի Հայաստանի արտաքին քաղաքականութեան:

Նիւթը պատրաստեց՝ Հրաչ Վարժապետեանը
ՀՅԴ Արևմտյան Եվրոպայի ԿԿ ներկայացուցիչ

Թուրքիա նրասիական իր գործընկերներուն՝ Ռուսիոյ և Իրանի նման բացասաբար չընդունիր թալեպաններուն՝ իշխանութեան հասնիլը Աֆղանիստանի մէջ, ընդհակառակը: «Դրականօրէն կ'ընկալենք ցարդ թալեպաններու կողմէ ուղարկուող պատգամները թէ՛ միջազգային դիւանագիտական շրջանակներուն և թէ՛ իրենց սեփական ժողովուրդին»,- յայտարարեց արտաքին գործոց նախարար Մեհմետ Չաւուշօղլու 17 օգոստոսին Ամմանի մէջ: Ան խորքին մէջ կ'արձագանգէր իր ռուս պաշտօնակիցին՝ Սերգէյ Լաւրովի յայտարարութեան, ըստ որուն՝ «դրական նշաններ կան Աֆղանիստանի նոր ղեկավարութեան հետ հեզասահ ընթացող բանակցութիւններէն»:

Թուրքիա, որ 500 զինուոր ունէր ՕԹԱՆ-ի զօրախումբին մէջ, որ ստանձնած էր Քապուլի օդակայանին ապահովութիւնը, մտադիր էր իր զինուորները պահել այնտեղ՝ հակառակ արևմտեան ուժերու հեռացման: Այս ուղղութեամբ Անգարա շաբաթներ առաջ բանակցած էր Ուաշինկթընի և Աֆղանիստանի՝ այդ օրերու վարչապետ Աշրաֆ Ղանիի հետ: Սակայն այն պահուն, երբ 15 օգոստոսին թալեպանները գրաւեցին Քապուլը, Անգարա դադրեցուց այդ բանակցութիւնները, որովհետև ամերիկացիք քաշուեցան, իսկ աֆղանական այդ կառավարութիւնը գոյութիւն չունի այլևս:

Շատ արագ յարմարուելով ստեղծուած նոր իրադրութեան՝ թրքական իշխանութիւնները արդէն իրենց ծառայութիւնները առաջարկեցին Քապուլի նոր տէրերուն: Նախագահ Էրտողան կը յամառէր իր ուժերը պահելու Քապուլի օդակայան և, գիտակցելով, որ թալեպանները չունին միջազգային նեցուկ, ոչ ալ միջազգային հանրութեան կողմէ ճանաչում, յայտարարեց, որ ինք պատրաստ է ընդունելու անոնց նոր ներկայացուցիչը: Իսթանպուլի մէջ Անատոլական ուսումնասիրութեանց ֆրանսական հիմնարկի տնօրէն Պայրամ Պալչի այս գծով կ'ըսէ. «Բոլորին համար շահաւէտ ու ձեռնտու է Քապուլի օդակայանին անվտանգ ու ապահով ըլլալը, որպէսզի դիւանագէտները և ընդհանրապէս մարդիկ կարենան շարունակել իրենց աշխատանքները: Թուրքիա կ'առաջարկէ ապահովել այդ մէկը, որովհետև իր համար դիւրին է թալեպաններուն հետ համաձայնիլ և բանակցիլ Փաքիստանի ու Քաթարի խողովակով, որոնց հետ ունի կայուն յարաբերութիւններ»: Անգարա կը գործադրի դիւանագիտական մեծ ջանքեր՝ «համոզելու» թալեպանները: Քաթարի մէջ Թուրքիոյ դեսպանատունը մնայուն ու անմիջական կապի մէջ է անոնց Քապուլի ղեկավարութեան հետ: Թուրքիոյ պաշտպանութեան նախարարը Իսլամապատ մեկնեցաւ՝ համոզելու թալեպանները, որ ընդունին թրքական ներկայութիւնը: Սակայն ցարդ ո՛չ Էրտողանի հրաւէրը, ո՛չ ալ անոր ներկայացուցած գործակցութեան տարբեր առաջարկները իսլամական խմբակցութեան կողմէ չեն ստացած հաւանութիւն. անոնք կը շարունակեն պնդել, որ «բոլոր օտար ուժերը» պիտի հեռանան Աֆղանիստանէն՝ փետրուար 2020-ին Տոհայի մէջ ամերիկացիներուն հետ ստորագրուած պայմանագրի համաձայն:

Աֆղանիստանէն ելքի միակ ճանապարհը՝ Քապուլի օդակայանը, կը շարունակէ մնալ խուճապի բեմահարթակ. հազարաւոր աֆղաններ կը փորձեն ելք մը գտնել ու փախչիլ երկրէն, մինչև իսկ երբեմն կախուելով մեկնող օդանաւերէն՝ պարզելով ցաւալի պատկերներ... Ուստի Թուրքիա սկսաւ երկրէն հեռացնել ու պարպել իր քաղաքացիները, որոնց պաշտօնական թիւը կը յայտարարուի

5000: Անգամ մը, որ Անգարա կարենայ դուրս բերել իր քաղաքացիները, ի՞նչ պիտի ըլլայ իր 500 զինուորներուն ճակատագիրը: Ինչո՞ւ ան ամէն գնով կը փորձէր պահել զանոնք, սակայն չյաջողեցաւ: Ըստ Սուրիոյ մէջ քրտական աղբիւրներու՝ անոնք պիտի ծառայէին թրքական գաղտնի սպասարկութեանց, որոնք անմիջական և օրգանական կապի մէջ են վարձկան ահաբեկչական տարբեր խմբաւորումներու հետ: Անգարա զանոնք պիտի ուղարկէր Աֆղանիստան, առաջին հանգրուանին՝ շուրջ հազար վարձկան այնպէս, ինչպէս կատարած էր Իրաքի, Լիպիոյ և Լեռնային Ղարաբաղի մէջ: Անգարա այս բոլորը կ'ընէ՝ պարզապէս ինքզինք իբրև կայուն ուժ ամրապնդելու տարածաշրջանին մէջ: Եւ եթէ ան մէկ կողմէ իր 500 զինուորները (ՕԹԱՆ-ի ուժերուն մէջ) հարկադրուած դուրս կը բերէ Քապուլի օդակայանէն և ընդհանրապէս Աֆղանիստանէն, միւս կողմէ 3000 յատուկջոկատայիններ արդէն տեղակայած է երկրի արևելեան սահմանին վրայ՝ ապօրինի գաղթը կանխելու պատրուակով, սակայն խորքին մէջ յստակ այլ նպատակներով, զորս թուեցինք:

Ուրեմն, ինչպէս յայտնեցինք վերև, թալեպաններու հետ շաբաթներ շարունակ բանակցելէ և համաձայնութեան չհասնելէ ետք Թուրքիա պաշտօնապէս իր զօրքը դուրս բերաւ Աֆղանիստանէն, որը վեց տարիէ ի վեր կը գտնուէր այնտեղ: Անոր մէջ կային նաև ատրպէյճանցի խաղաղապահներ:

Հակառակ անոր, որ Թուրքիա և Էրտողան, այլ խօսքով՝ պաշտօնական Անգարան, ունէին բոլորովին այլ նպատակներ, այնտեղ մնալու յստակ ու անթաքոյց ախորժակ, սակայն, հակառակ իրենց բոլոր ճիգերուն, մերժուեցան Աֆղանիստանի

Թուրք զինվորները Աֆղանստանում

նոր տէրերուն կողմէ: Ադուհանդերձ, Անգարա դեռ թալեպաններու հետ համագործակցութեան ճանապարհը փակած չէ, ընդհակառակը՝ անմիջական կապը առկայ է, աւելին՝ թալեպանները ամէն տեսակի աջակցութիւն կ'ակնկալեն Թուրքիայէն, ինչի դրական պատասխանը ստացան արդէն, երբ Էրտողան 25 օգոստոսին պաշտօնապէս յայտարարեց հետևեալը. «Անգարա սիրով ձեռք կ'երկարէ եղբայրական Աֆղանիստանին թէ՛ վատ, թէ՛ լաւ ժամանակաշրջաններուն՝ անկախ այն հանգամանքէն, թէ ո՞վ կը կ'ըլլայ իշխանութեան»:

ԵԱՏՄ ստեղծման պայմանագիրը որպես անդամ պետությունների փոխհարաբերությունների կարգավորման տնտեսական, կառավարչական և իրավական հիմք

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության մասնագետ

Ներկայիս աշխարհաքաղաքական իրողությունները և մարդկության զարգացման ճանապարհները համաշխարհայնացման համատեքստում ենթադրում են քաղաքական համակարգի արմատական վերափոխումներ՝ պայմանավորված պետություն-հասարակություն հարաբերությունների զարգացման նոր ուղիների որոնմամբ և հաստատմամբ: Յուրաքանչյուր պետության քաղաքական համակարգը զարգանում և բարեփոխվում է տվյալ պետության ընտրած ինտեգրացիոն ուղիների համատեքստում, որոնք պայմանավորվում են ինտեգրացիոն միավորումների զարգացման տրամաբանությամբ: Այս և հաջորդ հրապարակումների նպատակն է ներկայացնել եվրոպական և եվրասիական միջազգային միություններում Հայաստանին առնչվող ինտեգրացիոն գործընթացները, ինստիտուցիոնալ համակարգերը, դրանց իրավական բնույթը, ձևավորմանն ուղղված աշխարհաքաղաքական, տնտեսական և իրավական գործընթացները, Հայաստանի Հանրապետության ինտեգրումը եվրոպական և եվրասիական միջազգային կառույցներին, պարզաբանել զարգացման ուղղությունները, իրավական հիմքը, օբյեկտիվորեն գնահատել ինտեգրացման ընթացքը, դրա ընդհանրական տրամաբանական շղթան ՀՀ անվտանգության ապահովման առանցքում:

Հասնելով ազգային տնտեսությունների և քաղաքական համակարգերի զարգացման բավարար մակարդակի՝ ԱՊՀ երկրներն անցում են կատարում ինտեգրման որակապես նոր փուլի՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծմանը, որը կոչված է դառնալու արդյունավետ պատասխան գլոբալ մարտահրավերներին և վտանգներին[1]:

Եվրասիական տնտեսական միության՝ որպես տարածաշրջանային ինտեգրման խմբավորման կայացումն ու զարգացումը անխուսափելիորեն ենթադրում է իրավական փաստաթղթերի փաթեթի միջոցով իրացվող ինստիտուցիոնալ կարգավորում, ինչը պահանջում է համապատասխան կառուցվածք, քաղաքական և տնտեսական գործընթացներ: Այդ տեսանկյունից ուշագրավ է ԵԱՏՄ ստեղծման պայմանագիրը, որը սահմանում է պետությունների փոխհարաբերությունների կարգավորման տնտեսական, կառավարչական և իրավական հիմքերը:

Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահները, հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թ. նոյեմբերի 18-ի հռչակագրի դրույթները, 2014 թ. մայիսի 29-ին Աստանայում ստորագրեցին պայմանագիր, որով

հիմնադրվեց Եվրասիական տնտեսական միությունը[2]:

Պայմանագրի կողմերը պայմանավորվել են առաջնորդվել պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքով, անվերապահորեն պահպանել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքը, ամրապնդել համերաշխությունն ու խորացնել համագործակցությունն իրենց ժողովուրդների միջև՝ պահպանելով հարգանքը նրանց պատմության, մշակույթի ու ավանդույթների նկատմամբ՝ պայմանավորված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսություններն ամրապնդելու, ներդաշնակ զարգացումն ու մերձեցումն ապահովելու, գործարար ակտիվության կայուն աճը, հավասարակշռված առևտուրը և բարեխիղճ մրցակցությունը երաշխավորելու ձգտումներով:

Հաստատելով հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող այլ սկզբունքներին և նորմերին, համաձայն 116-րդ հոդվածի, ԵԱՏՄ պայմանագիրը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, գրանցված է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում:

2014 թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական խորհրդի բարձրագույն նիստում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահների կողմից ստորագրված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից[3]:

Համաձայն պայմանագրի 113-րդ հոդվածի՝ սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի՝ անդամ պետությունների կողմից կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու դեպքում դադարեցվում է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի գործողությունը, բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը՝ որպես սույն պայմանագրի ավանդապահ, յուրաքանչյուր կողմին տրամադրում է դրա հաստատված պատճենը:

Պայմանագիրը նախատեսում է դրույթների լայն շրջանակ, որոնք ԵԱՏՄ-ին տալիս են դաշնային (ֆեդերալ) բնույթ: Դրան նպաստում է միության անդամ պետություններին այնպիսի լիազորությունների տրամադրումը, որոնք թույլ են տալիս ստեղծել միասնական վերպետական իշխանություն, մաքսային և տնտեսական տարածք, համաձայնեցնել մակրոտնտեսական կարգավորման հարցերը և այլն:

Համաձայն պայմանագրի 1-ին հոդվածի՝ Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) միջազգային իրավասուբյեկտություն ունեցող տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, «որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը, սույն պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը»[4]:

Ըստ պայմանագրի՝ Միության կարգավիճակի հիմքը առանցքային սկզբունքներն են, նպատակները, իրավասությունները և իրավունքը:

Համաձայն պայմանագրի 3-րդ հոդվածի՝ «Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից սույն պայմանագրին համապատասխան իրեն վերապահվող իրավասության շրջանակներում՝ հետևյալ սկզբունքների հիման վրա՝

միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների՝ ներառյալ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության և նրանց տարածքային ամբողջականության սկզբունքների նկատմամբ հարգանքը,

անդամ պետությունների քաղաքական կարգի առանձնահատկությունների նկատմամբ հարգանքը,

Կողմերի փոխշահավետ համագործակցությունը, իրավահավասարությունն ապահովելը և ազգային շահերը հաշվի առնելը,

շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանումը,

անցումային ժամանակահատվածների ավարտից հետո Մաքսային միության գործունեությունը՝ առանց բացառումների և սահմանափակումների»[5]:

Թվարկված սկզբունքներից բխում են Միության հիմնական նպատակները, որոնք ամրագրված են

պայմանագրի 4-րդ հոդվածում:

«անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի,

Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկա ձևավորելու ձգտումը, համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը»[6]:

Պայմանագրում հստակ սահմանվում են այն իրավասությունները, որոնք ապահովում են Միության իրավական անձեռնմխելիությունը: Դրանք բովանդակում են երեք խումբ խնդիրներ՝ Միության բացառիկ իրավասությունը, մասնակից պետությունների համատեղ իրավասությունը և օժանդակ իրավասությունը: Ընդհանուր կարգով Միության իրավասությունը սահմանված է պայմանագրի 5-րդ հոդվածում.

«1.Միությունն օժտվում է իրավասությամբ սույն պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով:

2. Անդամ պետություններն իրականացնում են համակարգված կամ համաձայնեցված քաղաքականություն՝ սույն պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով:

3. Տնտեսության այլ ոլորտներում անդամ պետությունները ձգտում են իրականացնել համակարգված կամ համաձայնեցված քաղաքականություն՝ Միության հիմնական սկզբունքներին և նպատակներին համապատասխան»:

Այդ նպատակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել համապատասխան հարցերով օժանդակ մարմիններ՝ կողմերի պետական մարմինների ղեկավարների խորհուրդներ, աշխատանքային խմբեր, հատուկ հանձնաժողովներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հանձնարարականները,

համապատասխան ոլորտներում կողմերի փոխգործակցությունը համակարգելու համար[7]:

Պայմանագրում լրացուցիչ ամրագրվում են նաև պետությունների միջև արդեն գոյություն ունեցող այն հարաբերությունները, որոնք ծագել են Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում: Միության մասին պայմանագրում արտացոլված են նախորդ համաձայնագրերի իրավական դրույթները՝ առանց էական փոփոխությունների, ինչը վկայում է այդ դրույթներից կողմերի բավարարվածության մասին: Դա նաև փաստում է, որ պայմանագիրն ավելի շուտ տնտեսական է, քան քաղաքական:

Միության կարևոր առանձնահատկություններից են ազգային սահմանների անձեռնմխելիությունը և ցանկացած հակամարտության լուծման դեպքում միջազգային իրավունքին, խաղաղության և բարիդրացիության սկզբունքներին խստորեն հետևելը:

Պետք է նշել, որ կան մի շարք խնդիրներ, որոնք ունեն սահմանային բնույթ և միաժամանակ գտնվում են միասնացման տնտեսական և քաղաքական կառավարման ներքո: Դրանք ներառում են շրջակա միջավայրի պահպանությունը, կոլեկտիվ անվտանգությունը, առողջապահական խնդիրների լուծումը, դեղորայքի և բժշկական արտադրանքի գրանցումը, սպառողների պաշտպանությունը, միջուկային էներգիայի և նոր տեխնոլոգիաների, սպորտի և զբոսաշրջության, մշակույթի և կրթության ոլորտների հիմնախնդիրները:

Պայմանագրում ամրագրված են Միության միջազգային գործունեության, միջազգային պայմանագրերի, արտաքին առևտրային քաղաքականության վերաբերյալ դրույթները:

Այլ երկրների, միջազգային ինտեգրացիոն կազմավորումների ու միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական փոխշահավետ և իրավահավասար համագործակցությունն ամրապնդելու ձգտումով պայմանավորված, համաձայն պայմանագրի 7-րդ հոդվածի, «1. Միությունն իրավունք ունի իր իրավասության շրջանակներում իրականացնելու Միության առջև դրված խնդիրների կարգավորմանն ուղղված միջազգային գործունեություն: Այսպիսի գործունեության շրջանակներում Միությունն իրավունք ունի միջազգային համագործակցություն ծավալելու պետությունների, միջազգային կազմակերպությունների ու միջազգային ինտեգրացիոն կազմավորումների հետ և ինքնուրույն կամ անդամ պետությունների հետ կնքելու իր իրավասությանը վերապահված հարցերին առնչվող միջազգային պայմանագրեր:

Միության կողմից միջազգային համագործակցություն ծավալելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ: Երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրեր կնքելու հարցերը սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

2. Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի նախագծերին առնչվող

բանակցությունների վարումը, ինչպես նաև դրանց ստորագրումն իրականացվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա անդամ պետությունների կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո:

Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրի՝ Միության համար պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնությունն արտահայտելու, միջազգային պայմանագիրը դադարեցնելու, կասեցնելու կամ դրանից դուրս գալու մասին որոշումը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդն ընդունում է բոլոր անդամ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո»[8]:

Պետությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային ինտեգրացիոն միությունների հետ միջազգային համագործակցության կարգը հաստատված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ[9]:

Պայմանագրում ամրագրված է սույն պայմանագրի փոխադարձ կապը միջազգային այլ պայմանագրերի հետ: Համաձայն պայմանագրի 114-րդ հոդվածի՝ սույն պայմանագիրը չի խոչընդոտում անդամ պետությունների կողմից միջազգային այնպիսի պայմանագրերի կնքումը, որոնք չեն հակասում սույն պայմանագրի նպատակներին և սկզբունքներին:

Հաշվի առնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության նորմերը, կանոններն ու սկզբունքները՝ պայմանագրում սահմանված են ընդհանուր դրույթներ Միության արտաքին առևտրային քաղաքականության նպատակների ու սկզբունքների վերաբերյալ: Համաձայն պայմանագրի 33-րդ հոդվածի՝ «Միության արտաքին առևտրային քաղաքականությունն ուղղված է անդամ պետությունների կայուն տնտեսական զարգացման խթանմանը, տնտեսության բազմազանեցմանը, նորարարության զարգացմանը, առևտրի ու ներդրումների ծավալների

մեծացմանը և կառուցվածքի բարելավմանը, ինտեգրացիոն գործընթացների արագացմանը, ինչպես նաև համաշխարհային տնտեսության շրջանակներում Միության՝ որպես արդյունավետ ու մրցունակ կազմակերպության հետագա զարգացման ապահովմանը»[10]:

ԵԱՏՄ պայմանագրում կանոնակարգված են ինչպես պայմանագրին անդամակցելու, այնպես էլ պայմանագրից դուրս գալու ընթացակարգերը:

Համաձայն պայմանագրի 118-րդ հոդվածի.

«1. Ցանկացած անդամ պետություն իրավունք ունի դուրս գալու սույն պայմանագրից՝ դիվանագիտական ուղիներով սույն պայմանագրի ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցում սույն պայմանագրից դուրս գալու իր մտադրության մասին: Այդ պետության մասով սույն պայմանագրի գործողությունը դադարում է սույն պայմանագրի ավանդապահի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից 12 ամիս հետո:

2. Անդամ պետությունը, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ծանուցել է սույն պայմանագրից դուրս գալու իր մտադրության մասին, պարտավոր է կարգավորել սույն պայմանագրին իր մասնակցության առնչությամբ ծագած ֆինանսական պարտավորությունները:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հիման վրա Բարձրագույն խորհուրդը որոշում է ընդունում սույն պայմանագրին անդամ պետության մասնակցության առնչությամբ ծագած ֆինանսական պարտավորությունները կարգավորելու գործընթացն սկսելու մասին:

4. Սույն պայմանագրից դուրս գալն ինքնաբերաբար հանգեցնում է Միության անդամակցության դադարեցմանը և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերից դուրս գալուն»[11]:

ԵԱՏՄ կառավարման մարմիններն են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ), Եվրասիական միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Միջկառավարական խորհուրդ), Եվրասիական տնտեսական հանձնաժողովը և Եվրասիական տնտեսական միության դատարանը[12]:

Բարձրագույն խորհուրդը Միության գերագույն մարմինն է, որը կազմված է անդամ պետությունների ղեկավարներից: Այն դիտարկում է Միության գործունեության սկզբունքային հարցերը, որոշում ինտեգրացիայի զարգացման մարտավարությունը, ուղղություններն ու հեռանկարները և ընդունում Միության նպատակների իրականացմանն ուղղված որոշումներ: Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները և կարգադրությունները ընդունվում են կոնսենսուսի միջոցով: Բարձրագույն խորհրդի որոշումներն անդամ պետությունների կողմից իրականացման են ենթակա տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Եվրասիական միջկառավարական խորհուրդը Միության մարմին է՝ բաղկացած անդամ երկրների կառավարությունների ղեկավարներից: Միջկառավարական խորհուրդն ապահովում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի և Բարձրագույն խորհրդի որոշումների իրականացումը և վերահսկողությունը: Միջկառավարական խորհրդի որոշումները և կարգադրությունները ընդունվում են կոնսենսուսի միջոցով և անդամ պետությունների կողմից իրականացման են ենթակա տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը մշտական հիմունքներով գործող կարգավորող օրգան է: Բաղկացած է խորհրդից և կոլեգիայից: Հանձնաժողովն ընդունում է որոշումներ, որոնք ունեն նորմատիվ-իրավական բնույթ և պարտադիր են անդամ պետությունների համար, կարգադրություններ, որոնք ունեն կազմակերպական բնույթ, և հանձնարարականներ, որոնք պարտադիր չեն: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները, կարգադրությունները և հանձնարարությունները ընդունվում են կոնսենսուսով, իսկ կոլեգիայի որոշումները, կարգադրությունները և հանձնարարությունները՝ կամ ձայների մեծամասնությամբ, կամ էլ կոնսենսուսով: Հանձնաժողովը գտնվում է Մոսկվայում:

Եվրասիական տնտեսական միության դատարանը մշտապես գործող դատական մարմին է: Դատարանի գործունեության նպատակն է ապահովել ԵՏՄ և միջազգային համաձայնագրերի համաչափ կատարումը բոլոր անդամ պետությունների կողմից: Դատարանը քննում է ԵՏՄ-ի մասին համաձայնագրի և միջազգային համաձայնագրերի շուրջ առաջացած վեճերը անդամ պետությունների կամ տնտեսվարող սուբյեկտների դիմումի համաձայն: Դատարանի նստավայրը Մինսկում է: ■

Հղումներ

Տես ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում /Մ. Ս. Մելքումյան և ուրիշներ, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2015, էջ 7 («Ամբերդ» մատենաշար), https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Amberd_24.pdf:

Տես ԵԱՏՄ պայմանագիր, https://www.arlis.am/documentview.aspx?docid=95203:

Տես https://www.mfa.am/hy/international-organisations/6?fbclid=IwAR-1r0fEqq_XTjtb7ry_JNeu7c8UBFdo9fSncVU8JGh356h--2Nr_QUucSY8:

ԵԱՏՄ պայմանագիր, https://www.arlis.am/documentview.aspx?docid=95203:

Նույն տեղում:

Նույն տեղում:

Տես նույն տեղում:

Նույն տեղում:

Տես https://www.mfa.am/hy/international-organisations/6?fbclid=IwAR-1r0fEqq_XTjtb7ry_JNeu7c8UBFdo9fSncVU8JGh356h--2Nr_QUucSY8:

ԵԱՏՄ պայմանագիր, https://www.arlis.am/documentview.aspx?docid=95203:

Նույն տեղում:

Տես https://www.mfa.am/hy/international-organisations/6:

Հայկական 5000-ամյա պետականությունների պատմությունից

Անի Մելքոնյան
Պատմաբան

Երեսուն տարի առաջ՝ սեպտեմբերյան այս օրերին, Հայկական լեռնաշխարհի հայկական մնացած այս փոքրիկ հատվածում հայության միահամուռ ջանքերով վերակերտվեցին հայկական միանգամից երկու պետականություններ. 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը ԽՍՀՄ կազմից դուրս, իսկ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին ԼՂԻՄ մարզային խորհուրդը հայտարարել էր դեռևս 1988 թ. հունիսին: Կարճ ժամանակ անց՝ սեպտեմբերի 21-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ անցկացված անկախության հանրաքվեի արդյունքներով ծնունդ առավ Հայաստանի անկախ հանրապետությունը:

Բազմաթիվ փորձություններ հաղթահարելուց հետո հայկական երկու պետություններն իրենց անկախության 30-ամյակը դիմավորում են արտաքին ու ներքին քաղաքական, տնտեսական, ռազմական գերծանր իրավիճակում, երբ հարցականի տակ է դրված հայկական պետությունների հետագա գոյությունը: Սակայն նախքան հայկական ներկա պետականություններից խոսելը փորձենք փոքրիկ պատմական անդրադարձ կատարել հայկական պետականություններին, իսկ Հայաստանի պետականությունների ժամանակաշրջանը (գոնե գրավոր աղբյուրներից հայտնի) 5000 տարի է…

Այո՛, Հայաստանի պետականությունը ոչ թե 30, այլ 5000 տարեկան է, և մեզ հայտնի առաջին հայկական պետական կազմավորումը Արատտան է, որը հիշատակվում է շումերական հնագույն բնագրերում:

Արատտա

Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորման՝ Արատտայի մասին տեղեկությունները թվագրվում են Ք.ա. XXVIII-XXVI դարերով: Ժամանակի աղբյուրներում այն հիշատակվում էր որպես «աստվածային սուրբ օրենքների երկիր» և «անմահների երկիր», ինչը կապված էր համաշխարհային ջրհեղեղի մասին միջագետքյան ավանդազրույցների հետ, որն իր արտացոլումն է գտել նաև Աստվածաշնչում:

Արատտան կրոնապետական (թեոկրատական) կարգերով կառավարվող երկիր էր, որը Աստծո անունից ղեկավարում էր քրմապետ-արքան:

Հիշելով Արատտայի կառավարման համակարգը՝ հարկ է նշել, որ «Արատտայում քրմապետ-արքային կից գործում էր երկրի բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողովը, որի հետ խորհրդակցելով քրմապետ-արքան վճռում էր առավել կարևոր պետական հարցերը»[1]: Այդպիսիք կարող էին լինել, օրինակ, պատերազմ



հայտարարելու կամ հաշտություն կնքելու հարցերը, այսինքն՝ դեռևս Ք.ա. XXVIII-XXVI դարերում երկրի ղեկավարը պատերազմի և հաշտություն կնքելու հարցերում միանձնյա որոշում կայացնող չէր (կարևոր դաս Հայաստանի մերօրյա ղեկավարների համար): Հատկանշական է, որ Ավագների ժողովը հայկական պետությունների կառավարման համակարգում պահպանվեց նաև հետագա հազարամյակներում…

«Շումերական բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին»[2]: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Արատտայի մասին կարևորագույն տեղեկություններից մեկը երկրում սեփական գրի գործածության փաստն է, ինչն ապացուցվում է նաև Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված Ք.Ա. III հազարամյակի մեհենագիր հուշարձաններով, որոնք դեռևս վերծանված չեն»[3]: Մեր կարծիքով՝ եթե օրերից մի օր գիտությանը հաջողվի գտնել նշված մեհենագրությունների վերծանման բանալին, մեզ և աշխարհին շատ հետաքրքիր փաստեր հայտնի կդառնան մեր նախնիների պետական մտածողության և մինչ օրս հայտնի մեր առաջին պետականության՝ Արատտայի կյանքի տարբեր ոլորտների մասին:

Արմանի/ում

Մեզ հայտնի հաջորդ հայկական պետական կազմավորումը Արման(ում/ի) երկիրն է: Պատմությանը հայտնի առաջին բռնակալներից և մեր առաջին թշնամիներից Նարամ-Սուենը իր արձանագրություններից մեկում մեր երկրի մասին գրել է. «Մարդկության արարումից ի վեր ոչ ոք չի կարողացել նվաճել Արման(ում) երկիրը»[4]: Նարամ-Սուենը դեպի Հայկական լեռնաշխարհ ձեռնարկել է մի քանի արշավանքներ, ի պատասխան որոնց՝ «նրա դեմ ձևավորվեց լեռնաշխարհի և հարակից շրջանների 17 պետական կազմավորումների

դաշինքը, որն առաջնորդում էր Արմանի երկիրը»[5]:

Արմանի երկրի պետական կառավարման համակարգի մասին գաղափար կազմելու տեսանկյունից չափազանց կարևոր են Շուլգիի հետախուզական նամակները Արմանի (Սուբուր, Սուբուր-Արմանի, Շուպրիա, Արմա/ենիշուպրիա) երկրի մասին: Այդ նամակներից մեկում նշվում է. «Սուբուր երկրի տիրակալն ուներ «արշավանքի տուն» (ներկայիս եզրութաբանությամբ՝ «գլխավոր շտաբ»), որի պատերը զարդարված էին թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված զինատեսակներով….: Օտարերկրյա դեսպանի ընդունելության ժամանակ արքայի աջում և ձախում կանգնած էին նրա կառավարիչները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր նշանակված հինգ հազար ծառայողների»[6]:

Կուտիական (Կորդվաց) երկիր

Դեպի Հայկական լեռնաշխարհ Նարամ-Սուենի հերթական արշավանքի նախօրյակին տասնյոթ երկրների դաշինքի ղեկավարումը Լուլուբիից անցավ Կորդվաց երկրին, որն էլ վերջ դրեց Նարամ-Սուենի բռնակալական իշխանությանը: Նարամ-Սուենը պատմությանը հայտնի առաջին բռնակալն էր, որը պարտադրեց իր անձի պաշտամունքը և, կործանելով աստվածների տաճարները, իրեն հռչակեց աստված: Երբ ինքնակոչ աստված Նարամ-Սուենը պաշարեց շումերների սրբազան Նիպպուր քաղաքը, շումերական քրմերը օգնության խնդրանքով դիմեցին Հայկական լեռնաշխարհի 17 երկրների դաշինքին, որը ղեկավարում էր Կուտիական երկիրը. «Շուտով սրընթաց գրոհով Միջագետքի կենտրոն արշավեցին Հայկական լեռնաշխարհի լեռնականները, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց»: Կորդվաց տիրակալներին անցավ «Աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը: Կուտիական տիրակալներն իրենց տիրապետության տակ գտնվող երկրները կառավարում էին տեղացիներից ընտրված կառավարիչների միջոցով, որոնք կանոնավոր կերպով հարկեր ու նվերներ էին ուղարկում Հայկական լեռնաշխարհի արքաներին: Թեմայի շուրջ շատ չծավալվելու համար նշենք միայն, որ այս իրադարձությունները կապված են Ք.ա. 2492 թ. իրադարձությունների հետ, որոնք պատմության մեջ մնացել են «Հայկ և Բել» առասպելի տեսքով:

Միտաննի

Հայկական լեռնաշխարհում Ք. ա. XVI-XIII դարերից մեզ հայտնի մյուս պետությունը (Հայաստանի հարավում և Միջագետքի հյուսիսում) Միտաննիի թագավորությունն է՝ Վաշշուգանե մայրաքաղաքով: Եգիպտական աղբյուրներում Միտաննին հիշատակվում է «Նահահիրնա» ձևով: Իր գոյության ընթացքում Միտաննին ստիպված էր պատերազմել Եգիպտոսի դեմ, որի՝ հիքսոսների



Արդինի-Մուսասիր, Վանի թագավորության գլխավոր սրբավայրը

դեմ մղած վրիժառուական պատերազմի թիրախում հայտնվեց հենց Միտաննին: Ի վերջո Եգիպտոսի Թութմոս 4-րդ փարավոնը հաշտություն կնքեց Միտաննիի արքա Արտադամայի հետ, ինչի հետևանքով Միջերկրական ծովի արևելյան ավազանի հարավային հատվածն անցավ Եգիպտոսին, հյուսիսայինը՝ Միտաննիին: Միտաննիի արքաները կրում էին «մեծ թագավոր» տիտղոսը, թագավորական իշխանությունը ժառանգական էր. «….բանակի հրամանատարությունը, սովորաբար, Միտաննիում հանձնարարվում էր արքայազնին: Բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից»[7]: Միտաննիի թագավորության ծագման վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ կան, սակայն «Հնդեվրոպական այս թագավորության տիրակալները հայոց ազգային պատմագրական ավանդույթում համարվում են բնիկ հայ արքաներ, և նրանց անունները գտնում ենք Մովսես Խորենացու Հայկազուն նահապետների և արքաների ցանկում (օրինակ՝ Պարատարնա (սեպագրում) - Պարետ (ըստ Խորենացու), Վասաշատա-Վաշտակ և այլն)»[8]: Միտաննին անկում ապրեց Ք.ա. XIII դարում հզորացող Ասորեստանի հարվածների ներքո:

Հայասա-Ազզի

Հայկական լեռնաշխարհում հայտնի մեկ այլ պետական կազմավորում էր Հայասա երկիրը, որը հիշատակվում էր նաև Ազզի անվամբ: Ք.ա. XV դարավերջին և XIV դարասկզբին Հայասա-Ազզի թագավորությունը տարածաշրջանում առաջատար դիրք է զբաղեցրել, խեթական թագավորության գլխավոր հակառակորդն ու թշնամին լինելով՝ ժամանակի ընթացքում նաև խնամիական կապեր է հաստատել խեթական արքաների հետ: Հայասան ուներ իր արքան, որին կից գործում էր ավանդական խորհրդակցական մարմինը՝ Ավագների խորհուրդը: «Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10-հազարանոց հետևազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից

ուժ էր»[9]: Հայասան վերջին անգամ հիշատակվել է խեթական արքա Թութխալիաս 4-րդի օրոք: Ամենայն հավանականությամբ, թագավորությունը շարունակել է իր գոյությունը, պարզապես Հայասա խեթերեն անվամբ չի հիշատակվում Ք. ա. XII դարում խեթական թագավորության անկման հետևանքով:

Նաիրի (Նաիրյան համադաշնություններ)

Ք.ա. XIII-XI դարերի ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում են Նաիրյան երկրները և դրանց 40 առաջնորդները: Նաիրյան երկրներ անվան տակ «միավորված էին Վանա լճի շրջանը և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածությունները, ուր ապրում էին համադաշնության սկզբունքով միավորված բազմաթիվ ցեղապետություններ»[10]:

Ի տարբերություն Ք.ա. XIII-XI դարերի՝ արդեն Ք.ա. IX դարում նույն Ասորեստանի արքաները խոսում են ոչ թե մի քանի երկրների Նաիրյան համադաշնության, այլ մեկ միասնական Նաիրի պետության մասին, որն ուներ «250 քաղաք իրենց զորավոր պարիսպներով»[11]:

Վանի (Արարատյան) թագավորություն

Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող պետական կազմավորումների միավորման և մեկ կենտրոնացված պետության ստեղծման գործընթացն ավարտին հասավ Վանի թագավորության ժամանակաշրջանում: Այս թագավորությունը ասուրերեն բնագրերում կոչվում է Ուրարտու, տեղական սեպագիր աղբյուրներում՝ Բիայնիլի, Աստվածաշնչում՝ Արարատ: Ք.ա. մոտ 859-843 թթ. Վանի թագավորության արքա է հիշատակվում Արամեն: Նրան հաջորդած Սարդուրի Ա-ն մայրաքաղաք Տուշպայի հիմնադրման արձանագրություններում իրեն կոչում է Նաիրի երկրի արքա: Այս հանգամանքը չափազանց կարևոր է Ուրարտուի հայկականությունը քննարկելիս:

Վանի թագավորությունը, փաստորեն, հայկական առաջին գերկենտրոնացված պետությունն էր, որի կառավարման սկզբունքները պահպանվեցին մինչև Արշակունյաց թագավորության անկումը՝ 428 թվականը: Պետության գլուխ կանգնած էր արքան, որի իշխանությունը ժառանգական էր, փոխանցվում էր հորից ավագ որդուն, թագավորին կից շարունակում էր գործել Ավագների խորհուրդը: Հենց Վանի թագավորության ժամանակ էր, որ անցում կատարվեց արհեստավարժ՝ կանոնավոր բանակի ստեղծմանը. բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից, անհրաժեշտության դեպքում ստեղծվում էր աշխարհազոր:Արարատյան թագավորության մեզ հայտնի հզոր արքաներն էին Սարդուրի Ա-ն (Ք.ա. մոտ 840-825), Իշպուինին (Ք.ա. 825-810), Մենուան (Ք.ա. 810-778), Արգիշտի Ա-ն (Ք.ա. 776-764),

Արգիշտի Ա

Սարդուրի Բ-ն (Ք.ա. 764-735), Ռուսա Ա-ն (Ք.ա. 735-710), Արգիշտի Բ-ն (Ք.ա. 710-680-ականներ) և Ռուսա Բ-ն (Ք.ա. 680-650-ականներ):

Ք.ա. հավանաբար 609 թ. Վանի արքայատոհմին փոխարինում է Հայկազունիների նոր արքայատոհմը:

Մեծ Հայքի (Հայաստան) թագավորություն

Պատմահայր Խորենացու հաղորդումներում հիշատակվում են Հայաստանի հարավ-արևմուտքում իշխող Հայկազունների ավագ ճյուղի ներկայացուցիչներ Սկայորդին և նրա որդի Պարույրը: Վերջինս միավորեց Վանա լճից Եփրատ ընկած ողջ տարածքը, Հայաստանի հին թշնամի Ասորեստանի դեմ դաշինք կնքեց Մարաստանի ու Բաբելոնի հետ և Ք.ա. 612 թ. մասնակցեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի կործանմանը, ապա դաշնակիցների կողմից ճանաչվեց Հայաստանի թագավոր:

Հայկազունների մեկ այլ ճյուղի ներկայացուցիչներից Ք.ա. 580-570-ական թթ. առավել հայտնի դարձավ Երվանդ Ա Սակավակյացը (Սակավակյաց է կոչվել կարճատև կառավարման համար. հրաժարվել է գահից՝ իշխանությունը հանձնելով որդուն՝ Տիգրանին): Երվանդ Ա-ի որդին՝ Տիգրան Ա Երվանդունին, Մարաստանի արքա Կյուրոս Մեծի գլխավոր դաշնակիցն էր: Նրա իշխանությունը տարածվում էր նաև Կապադովկիայի, Վրաստանի և Աղվանքի վրա, իսկ Ք.ա. 538 թ. հայոց արքայի գլխավորությամբ դաշնակից զորքերը գրավեցին Եգիպտոսը, որից հետո Տիգրան Ա Երվանդունին դարձավ Աքեմենյան տերության արևմտյան կեսի փոխարքան:

Խոսելով Տիգրան Ա Երվանդունու մասին՝ պատմահայր Խորենացին գրում է. «….սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը…

Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ….: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով և տեգավոր նիզակներով, մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների և զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու: Այս և այսպիսի շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը…»[12]:

Մինչև Ք.ա. 522 թվականը Հայաստանը Աքեմենյան տերության մեջ արտոնյալ դիրք ուներ: Ք.ա. 522 թ. Դարեհ Ա-ն գրավեց Աքեմենյանների գահը և Հայաստանը նվաճելու համար ստիպված եղավ իրականացնել հինգ ռազմական արշավանք. «….այդ մասին է պատմում Բիհիստունյան եռալեզու արձանագրությունը, որի պարսկերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա, էլամերենում՝ Հարմինույա, բաբելերենում՝ Ուրարտու»[13]:

Ք.ա. 521 թ. Հայաստանը ճանաչում է Աքեմենյան տերության գերիշխանությունը՝ պահպանելով, սակայն, ներքին ինքնավարությունը: Մինչև Ք.ա. 331 թվականը Հայաստանը Աքեմենյան տերության սատրապություն էր (13-րդը), որը ղեկավարում էին Հայկազուն-Երվանդունիները, իսկ Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնվեց Հայաստանի անկախությունը. Մեծ Հայքում թագավոր հռչակվեց Երվանդ Գ-ն, իսկ Փոքր Հայքում՝ Միթրաուստեսը: Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում կառավարեց մինչև 201 թվականը, երբ Սելևկյանների արշավանքներից մայրաքաղաք Երվանդաշատը պաշտպանելիս զոհվեց Երվանդունի վերջին արքան՝ Երվանդ Դ-ն: Ք.ա. 189 թ. Հայքում հաստատվեց նոր արքայատոհմ, որը նրա հիմնադիր արքայի՝ Արտաշես Ա-ի անունով կոչվեց Արտաշեսյան:

Արտաշես Ա-ն (Ք.ա. 189-160) հայ ժողովրդի կողմից արժանացել է «Բարեպաշտ» պատվանունը. «Արտաշեսի ժամանակ մեր հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացել երկիրը»[14]: Արտաշես Բարեպաշտի և նրա որդիներ Արտավազդ Ա- ի (Ք.ա. 160-115) ու Տիգրան Ա Արտաշեսյանի (Ք.ա. 115-95) համեմատաբար խաղաղ և հայրենաշեն կառավարումը հող նախապատրաստեց հայոց պատմության մեծագույն տիրակալի՝ Տիգրան Բ Մեծի (Ք.ա. 95-55) կողմից հայկական կայսրության ստեղծման համար: Տիգրան Մեծի մասին շատ է խոսվել, նրա կառավարման տարիները և 3 մլն քառ. կմ տարածք ընդգրկող հայկական կայսրության պատմությունը թերևս լավագույնս ուսումնասիրված են, ուստի մեծ տիրակալի կերպարի վրա շատ

Տրդատ Գ Մեծ

կանգ չառնելու համար ուղղակի կարճ անդրադարձ կատարենք նրա թողած երեք կարևոր դասերին: Այսպես՝ Տիգրան Մեծը Ք.ա. 95-70 թթ. ստեղծել էր մի աշխարհակալություն, որի սահմաններն ու ազդեցության ոլորտը շուրջ 3 մլն քառ. կմ էր, տերության մայրաքաղաք Արտաշատը մնացել էր ծայրամասում, առաջ էր եկել նոր մայրաքաղաք ունենալու հրամայականը, որի համար շատ հարմար դիրքում էր գտնվում Անտիոքը, որը, սակայն, հայկական պատմական հողում չէր, ուստի Տիգրան Մեծը որոշեց նոր մայրաքաղաքը կառուցել հայոց հողում: Ք.ա. 80-ական թթ. Տիգրան Մեծը իր մայրաքաղաքը կառուցեց Մեծ Հայքի Աղձնիք նահանգում՝ այն վայրում, որտեղ թագադրվել էր: Դաս առաջին. **քո տունը օտար հողում մի՛ կառուցիր:**

Ք.ա. 69 թ. Լուկուլլոսի՝ Հայաստան արշավանքի ժամանակ մայրաքաղաք Տիգրանակերտի մեծաթիվ օտարազգի բնակչությունն ու զորքը բացեցին քաղաքի դարպասները հռոմեացիների առաջ: Դաս երկրորդ. **քո տան՝ երկրի պաշտպանությունը օտարին մի՛ վստահիր:**

Ք.ա. 66 թ. Պոմպեոսի արշավանքների ժամանակ Միհրդատ Եվպատորը պարտություն կրեց: Պարթևներն այդ ժամանակ դաշնակցում էին Հռոմի հետ, բայց Հայաստանի դեմ պատերազմում Պարթևստանը պարտություն կրեց: Հայքում ներքին խռովություն էր բարձրացրել Տիգրան Մեծի որդին՝

Տիգրան կրտսերը: Այս պայմաններում միայնակ մնացած Տիգրան Մեծը, սթափ գնահատելով իրավիճակը, ճիշտ որոշում կայացրեց, և «երկու հաղթող երկրների՝ Հայաստանի և Հռոմի միջև Տիգրան Մեծի և Պոմպեոսի կողմից ստորագրվեց հաշտության պայմանագիր, որով Հայաստանը հօգուտ Հռոմի հրաժարվեց Եփրատից արևմուտք ընկած իր նվաճումներից, Պարթևստանին վերադարձրեց նախկին սահմանները: Մեծ Հայքը ճանաչվեց Հռոմի «դաշնակից և բարեկամ»»[15]: Իհարկե, Տիգրան Մեծը կարող էր հրաժարվել նման պայմանագրից և միայնակ շարունակել պատերազմը Հռոմի և Պարթևստանի դեմ՝ վտանգելով Հայաստանի անկախությունն ու ապագան հանուն տիրակալի իր փառքի, բայց «Երբ կշեռքի նժարներին դրված էին տիրակալի իր փառքն ու հայրենիքի ապագան, Տիգրան Մեծն ընտրություն կատարեց հանուն հայրենիքի»[16]: **Դաս երրորդ. պետության և հայրենիքի շահը վեր դասել ամեն ինչից, ցանկացած ընտրություն կատարելիս առաջնորդվել հայրենիքի շահերով:**

Տիգրան Մեծին հաջորդած համեմատաբար հզոր արքաներն էին նրա որդի Արտավազդ Բ-ն (Ք.ա. 55-34), որը մեր պատմության մեջ անձնազոհության բացառիկ օրինակ է ու շատ կարևոր մի դաս է թողել՝ **պատիվը (ազգի և հայրենիքի)՝ կյանքից վեր**, և Արտավազդ Բ-ի որդի Արտաշես Բ-ն (Ք. ա. 30-20), որը, դաշինք կնքելով Պարթևստանի հետ, կարողացավ Հայաստանն ազատագրել հռոմեական օկուպացիայից:

Արտաշեսյան արքայատոհմի իշխանությունը Հայաստանում ավարտվեց 1 թվականին, և չնայած երկրում թագավորական իշխանություն չկար, պետական ինստիտուտները պահպանվեցին, ավագանին, զինվորականությունն ու հոգևոր դասը, բավականաչափ հզոր լինելով, կարողանում էին ղեկավարել երկրի քաղաքական կյանքը: Չնայած դրան՝ Հռոմը փորձում էր իր դրածոներին հաստատել Մեծ Հայքի գահին, որոնք, սակայն, որպես կանոն, երկար չէին իշխում և կամ սպանվում էին հայերի ձեռքով կամ վտարվում երկրից: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 66 թվականը, երբ Հռոմի դեմ գրեթե տասնամյա պայքարից հետո հայոց ավագանու, զինվորական ու հոգևոր դասի և ժողովրդի համաձայնությամբ Հայաստանի գահին հաստատվեց Տրդատ Ա-ն (66-88), որին հայոց թագավոր ճանաչեց նաև Հռոմը. Տրդատ Ա-ն թագը ստացավ Ներոնի ձեռքից: Արշակունյաց դինաստիան Հայաստանում կառավարեց մինչև 428 թվականը:

Արշակունիների օրոք Հայաստանում տեղի ունեցան երկու շատ կարևոր իրադարձություններ. նախ՝ 301 թ. Հայաստանում պետական կրոն հռչակվեց քրիստոնեությունը, որն իր դրոշմը թողեց հետագա դարերի հայոց պատմության վրա, երկրորդ՝ Արշակունյաց թագավորության անկման շրջանում՝ 405 թ., Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց կամ վերստեղծեց հայոց գրերը, մի իրադարձություն, որի շնորհիվ հետագա հարյուրամյակներին հայությունը կարողացավ դիմագրավել մարտահրավերներին՝ պահպանելով իր ինքնությունը: Հայոց գրերի շնորհիվ գաղափարապես միավորվեցին 387 թ. բաժանված Հայաստանի երկու հատվածները, և հետագա դարերում էլ արևելահայն ու արևմտահայը պետք է գաղափարապես միավորված մնային երկու գլխավոր գործոնների՝ հայատառ դպրության ու քրիստոնեության շնորհիվ…

428 թ. Արշակունյաց թագավորությունն անկում ապրեց, սակայն պետականությունը չընկավ: Պետական ինստիտուտների պահպանման շնորհիվ էր, որ 457 տարի անց Բագրատունիներին հաջողվեց երկարատև պայքարից հետո վերականգնել հայոց թագավորությունը: Բագրատունյաց արքայատոհմը բուն Հայաստանի տարածքում գոյություն ունեցած համահայկական վերջին արքայատոհմն էր: Բագրատունիների թագավորության շրջանում՝ 885-1045 թթ., հայ ժողովուրդը թե՛ քաղաքական, թե՛ մշակութային վերելք ապրեց: Այդ ընթացքում ամրապնդված պետական ինստիտուտները գոյատևեցին մինչև XIV դարը, երբ հայոց պետականությունը վերջնականապես վերացվեց: Բագրատունյաց թագավորությունը, ինչպես բազմիցս նշել ենք, անկում ապրեց դավաճանության հետևանքով: 1045 թ. Պետրոս Գետադարձի և Վեստ Սարգիս իշխանի կողմից Անիի դավաճանական հանձնումը Բյուզանդիային իր ողբերգական կնիքը դրեց Հայաստանի հետագա ճակատագրի վրա: Օտար, հիմնականում վայրենի քոչվորների տիրապետության տակ հայտնված Հայաստանը շուրջ 600 տարի (Հայկական հարցով զբաղվող այլ գիտնականներ համարում են 800, ոմանք՝ 500 տարի) աստիճանաբար կորցրեց պետականությանը բնորոշ բոլոր տարրերը և մսրճվեց խավարի մեջ մինչև 1918 թվականը…

Կիլիկիա

Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս շատ վաղուց հայկական դարձած Կիլիկիայում հայ ժողովուրդն իր պետականությունը ստեղծեց 1080 թ.: Պետության գլուխ կանգնեց ժամանակի հզորագույն հայ իշխաններից մեկը՝ Ռուբեն Ա-ն (1080-1095), որի անունով էլ իշխանապետությունն ու իշխող դինաստիան կոչվեցին Ռուբինյան: Կիլիկիայի հայոց իշխանապետությունն այնքան հզորացավ, որ XII դարում Լևոն Բ-ն այն հռչակեց թագավորություն: 1198 թ. հունվարի 6-ին՝ Սուրբ ծննդի օրը, Տարսոն քաղաքում Լևոն Բ-ն (որպես արքա՝ Լևոն Ա) թագադրվեց ««Թագաւոր ամենայն Հայոց, և նահանգին Կիլիկէացոց, և Իսավոհոյ» տիտղոսով, դրանով ընդգծվում էր թագավորության համահայկական նշանակությունը. նա նախ թագավորն էր «ամենայն Հայոց», հետո նոր միայն «նահանգին Կիլիկէացոց»»[17]:

Լևոն Ա-ն (1198-1219) իր գործունեության

և Կիլիկիան տարածաշրջանի հզորագույն թագավորություններից մեկը դարձնելու համար ոչ պատահականորեն ստացավ և հայոց պատմության մեջ մնաց «Մեծագործ» պատվանունով:

1226 թ. Լևոն Մեծագործի դստեր՝ Զաբելի հետ ամուսնանալով՝ գահ է բարձրանում Հեթում Ա-ն (1226-1269)՝ հիմք դնելով Հեթումյան արքայատոհմին:

Իր գոյության ընթացքում Կիլիկիայի հայկական թագավորությունը (1198-1375), բացի Ռուբինյաններից, որոնց վերջին ներկայացուցիչը Լևոն Մեծագործն էր, ունեցել է երկու արքայատոհմ՝ Հեթումյան և Լուսինյան: Կիլիկիայում հիմնականում պահպանվեց հայկական թագավորություններում սահմանված պետական կառավարման կարգը՝ հասկանալիորեն որոշակի ազդեցություն կրելով նաև բյուզանդական ու արևմտաեվրոպական կարգերից: Պետության գլուխ կանգնած էր արքան, որը կառավարում էր արքունիքի մեջ մտնող օրենսդիր, դատական և գործադիր իշխանությունների միջոցով: Պետության կառավարումից անմասն չէր նաև հայոց թագուհին. «Հայոց թագուհին մասնակցում էր Արքունի խորհրդի նիստերին: Նա երկրի կյանքում ուներ քաղաքական (արքայի բացակայության կամ մահվան դեպքերում) և հատկապես մշակութային ու բարեսիրական մեծ դերակատարում….»[18]:

Կիլիկիայի հայկական պետությունը քաղաքակրթությունների ու մշակույթների փոխազդեցության յուրահատուկ խաչմերուկ էր, հայկական մշակույթի ու գիտության զարգացման կենտրոններից մեկը: Կիլիկիայի հայկական թագավորությունն անկում ապրեց 1375 թ. ապրիլի 22-ին, երբ եգիպտական մամլուքների և այլ մահմեդականների դեմ պայքարում ըստ էության մենակ մնացած քրիստոնյա Կիլիկիայի արքա Լևոն V-ը անձնատուր եղավ ու գերի տարվեց Եգիպտոս: Դրանից հետո՝ շուրջ կես դար, հայ իշխանները փորձում էին վերականգնել կորցրած պետականությունը, սակայն ապարդյուն:

Հայաստանի առաջին հանրապետություն

Շուրջ 600 տարվա ծանր մաքառումներից, ցեղասպանվելուց հետո հայությունն իր պետությունը ստեղծեց 1918 թ.: Օգտվելով Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղաշրջումից և Լենինի կողմից՝ ռուսական զորքերը ռազմաճակատից հետ քաշելու քայլից՝ 1918 թ. փետրվարին թուրքերը Կովկասյան ռազմաճակատի երկարությամբ նոր արշավանք ձեռնարկեցին, ինչը բնականաբար ուղղված էր հայերի դեմ: Ցեղասպանված, իր հայրենիքի մեծագույն մասը կորցրած, հյուծված, դաշնակիցների շոշափելի օգնությունից զրկված, թուրքական մեծաթիվ զորքերի դեմ մենակ մնացած հայ ժողովուրդը կանգնած էր վերջնական բնաջնջման վտանգի առաջ: Թվում էր՝ հայության ու Հայաստանի փոքրիկ հատվածի բնաջնջումն անխուսափելի է, բայց այդ նույն ժամանակ Երևանում Արամ Մանուկյանն ու իր գործակիցները

Լևոն մեծագործ

տենդագին պատրաստություն էին տեսնում սպասվող աղետը կանխելու համար: 1917 թ. դեկտեմբերին Երևան եկած Արամ Մանուկյանը «Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին թե ճակատը պաշտպանելու և թե երկրի ներսում կարգ հաստատելու» բանաձևումով Դրոյի ու Մովսես Սիլիկյանի հետ առաջնորդեց պայքարը՝ հայության ֆիզիկական գոյության ու թեկուզ փոքրիկ Հայաստանի պահպանման համար: 1918 թ. մայիսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում հայությունը սեփական ուժերով դիմադրեց իրեն ռազմապես գերազանցող թուրքական բանակին և հաղթանակ տարավ: «Սարդարապատի, Բաշ-Աբարանի և Ղարաքիլիսայի յաղթանակներու դարբնողները,- գրել է «Ազատ խօսք» օրաթերթը,- կը մնան Վասպուրականի ԱՐԱՄԸ՝ իւր պողպատեայ կամքով, ԴՐՕՆ՝ իւր շեշտակի խոյանքով ու սպարապետ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆ և զօր. ՍԻԼԻԿԵԱՆ՝ ռազմավարի հանճարով»[19]: Մայիսյան հերոսամարտերը ոչ միայն փրկեցին հայությանը բնաջնջումից, այլև հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը՝ ծնունդ տալով Հայաստանի առաջին հանրապետությանը: Մայիսի 28-ին ձևավորվեց և թուրքերի հետ առանձին բանակցություններ վարելու համար Բաթում ուղարկվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը: Անկախության մասին հայտարարությունը Ն. Աղբալյանի մշակմամբ հրապարակվեց մայիսի 30-ին: Հայկական լեռնաշխարհի մի փոքրիկ անկյունում վեցդարյա դադարից հետո նորից ծնունդ առավ հայկական պետականություն՝ Հայաստանի Հանրապետությունը, որը խոր-

հրդարանական կառավարման համակարգով երկիր էր. իշխանության գլուխ կանգնած վարչապետը հաշվետու էր խորհրդարանին: Հայաստանի Հանրապետության գոյության 2,5 տարիների ընթացքում նրա՝ միմյանց հաջորդած չորս կառավարությունները ուժերի գերլարումով տիտանական աշխատանք կատարեցին 600 տարվա փլատակների վրա պետություն կառուցելու համար: Ստեղծվեցին պետականությանը բնորոշ ինստիտուտներ, հիմնադրվեցին դպրոցներ, համալսարան, ազգային պատկերասրահ, երաժշտանոց (կոնսերվատորիա) և այլն, որոնք հետագայում հիմք հանդիսացան Խորհրդային Հայաստանի մշակույթի զարգացման համար: Հայաստանի կառավարությունը, ի թիվս այլ խնդիրների, ժառանգություն էր ստացել պատմական Հայաստանի տարածքների խնդիրը, որոնց նկատմամբ հավակնություններ ունեին թե՛ Թուրքիան, թե՛ Վրաստանը և թե՛ նորաստեղծ Ադրբեջանը: Մինչև Հայաստանի խորհրդայնացումը ՀՀ կառավարությունը մինչև վերջ կռիվ տվեց Հայաստանի ամեն թիզ հողի համար և Արցախի, Նախիջևանի, Զանգեզուրի և ՀՀ-ի փաստացի տիրապետության տակ գտնվող 70.000 քառ. կմ-ի պահպանման հույսով իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: 1920 թ. դեկտեմբերի 2-ին խորհրդայնացված Հայաստանը 1921 թ. խորհրդային իշխանությունների կողմից բաժանվեց Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև. Հայաստանը մնաց հազիվ 30.000 քառ. կմ փոքրիկ տարածք: Խորհրդային հասարակարգում (Մոսկվայի գերիշխանությամբ) հայ ժողովուրդը ապրեց մոտ 70 տարի:

Հայաստանի մերօրյա հանրապետությունը

1988 թ. փետրվարի 20-ին Արցախից սկսված ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու շարժումն ընդարձակվեց ու վերածվեց Հայաստանի անկախության համար պայքարի: Ի վերջո, 1991 թ. սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը հանրաքվեով «այո» ասաց անկախությանը, և սկսվեց պետականաշինության մի նոր փուլ: 1992 թ. հունվարի 28-ին հիմնադրվեց ՀՀ կանոնավոր բանակը, Հայաստանի Հանրապետությունն իր ռազմական, քաղաքական, տնտեսական աջակցությունը ցուցաբերեց մարտնչող Արցախին:Արցախյան պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ Հայաստանը կարողացավ ամրապնդել իր դիրքերը միջազգային ասպարեզում, դառնալ կայացած ու կայուն զարգացող պետություն, որի հետ տասնամյակների ընթացքում շատ հարցերում սկսեցին հաշվի նստել: Իր բոլոր թերություններով ու բացթողումներով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետությունը անկախ, ինքնիշխան, իր և Արցախի պաշտպանությունը կազմակերպելու ունակ պետություն էր, սակայն 2018 թ., այսպես կոչված, «թավշյա հեղափոխությամբ» սկիզբ դրվեց Հայաստանի պետականության անկմանը, աստիճանաբար թուլացվեցին պետական բոլոր ինստիտուտները, բանակի, զինվորականության, եկեղեցու, Արցախում տարած հաղթանակի ու ազգային արժեք ներկայացնող ամեն ինչի դեմ լայնածավալ արշավ սկսվեց:

Հայաստանի նոր իշխանության հանցավոր անկարողությունն ի վերջո հանգեցրեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված ու 44 օր տևած պատերազմի, որի աղետալի հետևանքները դեռ տասնամյակներ շարունակ հայ ժողովուրդը զգալու է իր մաշկի վրա:

Արցախի Հանրապետություն

Արցախը հայկական երկրորդ պետությունն է և հռչակվել է 1991 թ. սեպտեմբերի 2-ին: Մինչ այդ, սակայն, Արցախի պետականության ավանդույթների մասին: Արցախը՝ որպես պետություն, միայն 1991 թվականից չէ, որ գոյություն ունի: Արշակունիների թագավորության անկումից հետո Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներում (Հայոց արևելից կողմանք) Առնշահիկների տոհմը (որը, ըստ միջնադարյան հայկական աղբյուրների, ծագում էր Հայկազուններից) հռչակեց թագավորություն: Հայոց արևելից կողմանց Առնշահիկ արքաներից առավել հայտնի էր Վարդանանց պատերազմին մասնակցած Վաչե արքան: Առավել նշանավոր էր Վաչագան Գ Բարեպաշտ (մոտ 487-510) արքան, որը նաև Արցախի ներկայիս մայրաքաղաք Ստեփանակերտի՝ պատմական Վարարակնի հիմնադիրն է. «Վաչագան արքան հայտնի դարձավ ոչ միայն շինարարական բուռն գործունեությամբ, այլև «Սահմանադրութիւն կանոնական» կանոնագրքի ստեղծումով, որն ընդունվեց Աղուենի կանոնադիր ժողովում»20:

Մոտ 958 թ. Սահակ Սևադայի որդին՝ Հովհաննես-Սենեքերիմ Առնշահիկը, իր հայրենի Փառնես գավառին միացնելով Ուտիք, Գարդմանք և Ձորագետ գավառները, հիմնեց Փառիսոսի թագավորությունը, որն անկում ապրեց XI դարի կեսերին, զոհ գնալով Գանձակի քուրդ ամիրաների խարդավանքներին: Առնշահիկները սերնդեսերունդ պահպանեցին անկախ կամ կիսանկախ իրենց

իշխանությունը որպես Արցախի իշխանական (մելիքական) տներ: Դրանք էին Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները:

Արցախի Հանրապետությունը, ինչպես ասացինք, 30 տարեկան է, իր անկախությունը հռչակել է 1991 թ. սեպտեմբերի 2-ին և հերոսական մաքառումներով ու երեք տասնամյակի տքնաջան աշխատանքով դարձել կայուն, անկախ պետություն, գոնե մինչև 2020 թ. նոյեմբերի 9-ը: Արցախը, թեկուզ չճանաչված, բայց անկախ հանրապետություն լինելով, իր մասնակցությունն ուներ 1994 թ. մայիսի 12-ին կնքված հրադադարի պայմանագրում, որը Արցախի անունից ստորագրել է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը: Հակառակ դրան՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին Նիկոլ Փաշինյանի, Իլհամ Ալիևի ու Վլադիմիր Պուտինի ստորագրած համաձայնագրում Արցախը բացակայում է, ոչ մի կերպ Արցախը ներկայացնելու լիազորություն չունեցող Նիկոլ Փաշինյանը ստորագրեց Արցախի (նաև Հայաստանի) կապիտուլյացիայի համաձայնագիրը՝ առանց հաշվի առնելու հայկական երկու հանրապետությունների ժողովրդի և խորհրդարանների կարծիքը:

ՀՀ ղեկավար Նիկոլ Փաշինյանը փաստորեն կատարեց նույն ապօրինի քայլը, ինչ Ստալինը 1921 թ. հուլիսի 5-ին՝ մեկ գիշերում միանձնյա որոշմամբ Արցախը հանձնելով Ադրբեջանին: Եթե Ստալինի կողմից այդ քայլը կայսերապետական շահերի տեսանկյունից է մեկնաբանվում, ապա Նիկոլ Փաշինյանի արարքը հայոց պատմության մեջ մնալու է որպես պետական դավաճանության վառ օրինակ այնպես, ինչպես 1045 թ. Անիի հանձնումը Պետրոս Գետադարձի և 1920 թ. հոկտեմբերին Կարսի հանձնումը հայ բոլշևիկների կողմից:

Իրենց հռչակման 30-ամյակին հայկական երկու պետությունները կանգնած են լինել-չլինելու հրամայականի առաջ: Արցախի Հանրապետությունը Հայաստանի իշխանության «թեթև ձեռքով» կորցրել է իր տարածքի 75 %-ը, այդ թվում՝ բերդաքաղաք Շուշին, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի, Արարատի մարզերի մի շարք բնակավայրերի վրա իշխող բարձունքները: Արցախի Հանրապետությունն իր 12.000 քառ. կմ տարածքով Հայաստանի Հանրապետության գոյության հիմնաքարն է, որը, սակայն, խախտվել է: Կորցնելով Արցախը՝ Հայաստանի Հանրապետությունը ևս կանգնել է վերացման վտանգի առաջ ու եթե մինչ օրս գոյատևում է, ապա դա արդյունքն է նախորդ մոտ 30 տարվա պետականաստեղծ հսկայական աշխատանքի, սակայն մոտ 30 տարում ստեղծվածը ընդամենը երեք տարում բացառիկ վարպետությամբ մսխելու հետևանքով այսօր խաղասեղանին դրված է Հայաստանի Հանրապետության՝ որպես պետության և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրը:

Ի՞նչ անել հայոց 5000-ամյա պետականությունների պատմությունը չփակելու և հայ ժողովրդի պատմության վերջին էջը չշրջելու համար: Ազատվել հաղթանակը պարտություն դարձրած վարչախմբից, շտկել մեջքը, վերականգնել ու վերազինել հայոց բանակը և փորձել հետ բերել կորցրածի գոնե մի փոքր մասը՝ պանթուրքիզմի օղակում չխեղդվելու համար: Վերջին խոսքը հայ ժողովրդինն ու հայ զինվորականությանն է: Ինչպիսի՞ երկիր է ուզում հայ ժողովուրդը՝ թշնամու առաջ վիզը ծռած, պարտված, թշվառ ու նվաստացա՞ծ, թե՞ թշնամուն իր կամքը պարտադրող, հաղթող, ուժեղ և միացյալ Հայաստանի հիմնայուն հանդիսացող պետություն: Ինչպիսի՞ պետության բանակում է ուզում ծառայել հայ զինվորականությունը… և ո՞ւմ գերագույն գլխավոր հրամանատարությամբ: Ընտրությունն ու վերջին խոսքն իրենն են: ■

Ծանոթագրություններ

1. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016, էջ 9:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 12:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 13:
7. Նույն տեղում, էջ 14:
8. Նույն տեղում, էջ 16:
9. Նույն տեղում, էջ 19:
10. Նույն տեղում, էջ 20:
11. Նույն տեղում:
12. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1997, էջ 103-104:
13. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, էջ 28:
14. Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 170:
15. Մովսիսյան Ա., Տիգրան Մեծ. Թագավորներից մեծագույնը, Եր., 2010, էջ 69:
16. Նույն տեղում, էջ 70:
17. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, էջ 57:
18. Նույն տեղում, էջ 58-59:
19. «Ազատ խոսք» օրաթերթ, հունիս, 1936 (բացառիկ հրատարակություն), էջ 4:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016:
2. Մովսիսյան Ա., Տիգրան Մեծ. Թագավորներից մեծագույնը, Եր., 2010:
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1997:

բ) Մամուլ

1. «Ազատ խոսք» օրաթերթ, հունիս, 1936 (բացառիկ հրատարակություն):

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» փրկության առաքելության ձևավորման պատմությունից

Գոհար Խանումյան
Գիտական հոդվածների հեղինակ, գիտական հետաքրքրության շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության խնդիրները: Զբաղվում է Օսմանյան կայսրությունում որբահավաք աշխատանքների ուսումնասիրությամբ

1916 թ. Կովկասյան ճակատում ռուսական զորքերը ազատագրեցին Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրեր՝ Էրզրումը, Տրապիզոնը և Բիթլիսը: Այդ գործում մեծ ներդրում ունեցան հայկական կամավորական ջոկատները: Հայրենիքի մի հատվածի ազատագրումը նոր հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում: Այդ օրերին հայապահպանության կարևոր խնդիրներից էր հայության բեկորների մի ստվար հատվածի՝ մահմեդական հարեմներում ընտանիքներում, (հաճախ բռնի) պահվող հայերին (հիմնականում՝ կանայք և երեխաներ) հայկական միջավայր վերադարձնելը: Այդ առաքելությունը ստացավ որբահավաք անվանումը:

«Որբահավաք» բառի բացատրությունը առաջին անգամ հանդիպում է Էդ. Աղայանի բացատրական բառարանում[1]: Համանման իմաստ ունեն նաև «հայահավաք» և «ազգահավաք»[2] բառերը, որոնք կիրառվել են որպես հոմանիշներ: Ընդ որում, հարկ է նշել, որ որբահավաք առաքելությունը տարիքային կամ սեռային կոնկրետ սահմանափակումներ չի ունեցել: Որբահավաք աշխատանքների շնորհիվ ազատագրվածները ինչպես երեխաներ էին (հաճախ ծնողազուրկ), այնպես էլ չափահաս հայ կանայք և տղամարդիկ: Մահմեդական գերությունից իրենց հայրենակիցներին ազատագրող անհատները կոչվում էին որբախույզներ կամ որբեր հավաքողներ:

Որբահավաք առաքելությունը սկսվեց 1916-1917 թվականներին Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից օկուպացված տարածքներում՝ հետագայում տարածվելով Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հատվածներում: Գերությունից հայրենակիցների ազատագրումը իրականացվում էր փրկագնման կամ փախուստի[3] կազմակերպման եղանակներով:

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը և փրկության հանգանակության կազմակերպումը

Որբահավաք առաքելության հենց սկզբում ձևավորվեց «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը, որը կարճ ժամանակահատվածում վերաճեց համահայկական փրկության ծրագրի և փաստացի դարձավ առաքելության ֆինանսական ապահովման բաղադրիչը: Այն նպատակ ուներ փրկելու ցեղասպանության հետևանքով ֆիզիկական ոչնչացման և ուծացման եզրին կանգնած հայության բեկորներին:

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսն առաջին անգամ շրջանառության մեջ դրեց հայ ազատագրական

շարժման նշանավոր գործիչ, հայդուկապետ Սեբաստացի Մուրադը[4] Երզնկայում 1916 թ. ամռանը[5]: Կարճ ժամանակ անց նրա հետախուզական խմբերի հաղորդած տեղեկություններից պարզ դարձավ, որ մահմեդական գերության մեջ գտնվող հայերի թիվն անցնում է մի քանի տասնյակ հազարը, ընդ որում՝ միայն ռուսական ռազմական վերահսկողության տակ գտնվող շրջաններում: Մուրադն իր զինակից ընկերների՝ Կայծակ Առաքելի և Սեպուհի հետ առաջին հերթին սկսեց բանակցություններ վարել Դերսիմի, Էրզրումի և Երզնկայի քուրդ աշիրեթապետերի հետ և խոստացավ մեկ հայի համար մեկ օսմանյան ոսկի գլխագին: Գերության մեջ գտնվող իրենց հայրենակիցներին փրկագնելու համար անհրաժեշտ էր ստեղծել համահայկական հանգանակության ֆոնդ՝ «Մեկ հայ՝ մեկ ոսկի», ինչի վերաբերյալ հայտարարություն տրվեց Թիֆլիսում տպագրվող հայկական թերթերում[6]: «Армянский вестник»-ում, 1916 թ. սեպտեմբերից սկսած, պարբերաբար հատուկ սյունակով տպագրվում էին «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդին հանգանակություն կատարած բարերարների անունները[7]: Շաբաթաթերթում նշվում էր. «Կովկասի հայկական թերթերի խմբագրություններում բացվել է քրդական գերությունից հայ գաղթականներին ազատագրելու հանգանակության ֆոնդ, որոնց (գաղթականների – Գ. Խ.) կյանքի գինը քուրդ «բարեգործների» կողմից հայտարարվել է մեկ թուրքական լիրա (18 ռուբլի փոխարժեքով՝ մեկ հոգու համար)»[8]: Հանգանակությունները կատարվում էին ռուսական ռուբլով: 1916 թ. մեկ օսմանյան ոսկին համարժեք էր 18 ռուբլու:

Արդեն 1916 թ. աշնանը Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներում սկսվեցին կազմակերպվել հանգանակություններ՝ մահմեդական գերությունից հայերի փրկագնման համար: Հանգանակված գումարն ուղարկվում էր Մոսկվա՝ «Армянский вестник», Թիֆլիս՝ «Հորիզոն» և Բաքու՝ «Արև» թերթերի խմբագրություններ:

Թիֆլիսում հանգանակությունն արդյունավետ կազմակերպելու համար միավորվեցին բոլոր հայանպաստ միությունները՝ Մեսրոպ եպիսկոպոսի գլխավորությամբ[9]:

Ի դեպ, հայերին մահմեդական գերությունից ազատագրելու ֆոնդին հանգանակություն էին կատարում ոչ միայն Կովկասում, Ռուսաստանում ապրող հայերը, այլև օտարազգիները՝ ռուսները, վրացիները և այլք: Ուշագրավ է, որ «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդի համար հանգանակություն է կազմակերպվել անգամ հեռավոր Ճապոնիայում տեղի հայ համայնքի ջանքերով[10]: Երբեմն մարդիկ բերում էին իրենց ոսկյա զարդերը՝ մատանի, թևնոց, ապարանջան[11]: Հանգանակությանը մասնակցում էին նաև երեխաները: Շատ հուզիչ է Աստրախանում բնակվող փոքրիկ հայ աղջկա նամակը «Армянский вестник»-ի խմբագրությանը. «Հարգելի՛ պարոն Ամիրյան, չուզենալով հետ մնալ եղբայրներիցս, ես էլ եմ ցանկանում ազատել 5 մարդ և ահա ուղարկում եմ 90 ռուբլի: Շատ կցանկանայի իմանալ, եթե հնարավոր է, ազատվածների անունները: 2-րդ դասարանի աշակերտուհի՝ Վարդուհի Մամուսյան»[12]:

Մահմեդական գերությունից իրենց հայրենակիցներին ազատագրելու համար 1916 թ. նոյեմբերի դրությամբ հանգանակվեց շուրջ 200.000 ռուբլի[13]: «Армянский вестник»-ի համարներից մեկում հոդվածագիրը «Մեկ հայ՝ մեկ ոսկի» խորագրով հոդվածում ցավով գրում է. «20-րդ դարի համար անհավատալի իրականություն է. մարդկանց՝ հայերի վաճառքը հայտարարված է, և մենք՝ նրանց արյունակից և հոգևոր եղբայրները, քաղաքացիական ազատ հայերս, շտապում ենք մաքրելու նրանց վրայից ստրուկի խարանը, ինչին նրանք երբևիցե արժանի չեն եղել: Ի՞նչ ենք արել մենք: «Հորիզոն», «Արև», «Армянский вестник» թերթերի հաղորդումներով մեր հասարակական կազմակերպությունների միջոցով հնարավոր է եղել հավաքել 200.000 ռուբլի... Քանի՞ հայ ենք մենք ազատագրել այդ հավաքված գումարով: 11.000, միայն 11.000: Իսկ մնացյա՞լը, չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը վստահ է, որ 11.000 թիվը վերջնական չէ, գերության մեջ դեռ կան հազարավոր հայեր, որոնք դատապարտված են մահվան, եթե նրանց չփրկագնենք: Անհրաժեշտ է նրանց բոլորին փրկագնել»[14]: Սակայն հոդվածագիրը վստահ է, որ միայն հասարակական ուժերով անհնար է լուծել այս հսկայական խնդիրը, որքան էլ հարուստ և հայրենասեր լինեն հայերը: Անհրաժեշտ էր, որ Անտանտի «փոքրիկ դաշնակից» Հայաստանը այդ երկրների պետական աջակցությունը ստանար[15]:

Պետք է նշել, որ առավել դժվար էր պարզել թուրքերի մոտ գերության մեջ պահվող հայերի թիվը, քանի որ, ինչպես նշում է Գ. Սյուրմենյանը, «թուրքերը իրենց մոտ գտնուած հայերը կը թաքցնէին խիստ զգուշութեամբ»[16]: Ի տարբերություն քրդերի՝ թուրքերի մոտ պահվում էին բացառապես երեխաներ և երիտասարդ աղջիկներ. վերջիններս գտնվում էին հիմնականում հարեմներում: Թուրք

Անապատից բերված հայ որբեր

տերերը իրենց գերիներին հայկական կողմին վերադարձնել չէին ցանկանում: Մահմեդականները և հատկապես թուրքերը հայ երեխաներին որդեգրելիս առաջնորդվում էին շարիաթի այն հայտնի դրույթով, որ, մահմեդականացնելով այլակրոն երեխաներին, կարժանանան աստծո ողորմածությանը[17]:

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» հայահավաք առաքելության արդյունքները

Հայոց ցեղասպանության տարիներին սկիզբ առած որբահավաք առաքելությունը՝ «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսով, արդեն 1916 թվականի մի քանի ամիսների ընթացքում տվեց զգալի արդյունք: Մահմեդական գերությունից ռուսական զորքերի վերահսկողության տակ գտնվող շրջաններից՝ Էրզրում, Բիթլիս, Տրապիզոն և Վան, ազատագրվեցին տասնյակ հազարավոր հայեր, որոնց մեջ գերակշիռ թիվ էին կազմում հայ երեխաները և հարեմներ վաճառված երիտասարդ կանայք: Կարճ ժամանակահատվածում «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը, որը դարձավ որբահավաքի ամենաարդյունավետ բանաձևը, գործադրվեց նաև Օսմանյան կայսրության այլ բնակավայրերում, մասնավորապես՝ Սիրիայում և Միջագետքում, որտեղ հազարավոր հայ կանայք և երեխաներ գտնվում էին արաբական տարբեր ցեղախմբերի մոտ: Նրանց ազատագրմամբ սկսեցին զբաղվել Հայկական լեգեոնի կամավորները, նաև անհատներ, որոնք միսիոներների, բեդվինների տեսքով շրջում էին արաբական հեռավոր բնակավայրերում, հայտնաբերում իրենց ազգակիցներին, ազատագրում և փոխադրում նրանց հայաշատ կենտրոններ: Նրանցից հատկապես հիշատակման արժանի է Ռուբեն Հերյանը: Նա, հայ լեգեոնականի զինվորական համազգեստը փոխարինելով բեդվինի զգեստով, շրջում է Դեր-Զորի արաբների վրաններով,

հայտնաբերում և ազատագրում շուրջ 800 հայ երեխաների և հարեմներում պահվող կանանց[18]:

Մուդրոսի զինադադարից հետո որբահավաք աշխատանքների կազմակերպումը դառնում է ոչ միայն առանձին անհատների կողմից իրականացվող հայապահպան գործը, այլև հայկական միությունների գործունեության հիմնական առանցքը: Ազատագրման հիմնական միջոցներն էին թուրք, քուրդ կամ արաբ տերերի դրամական վարձատրությունն ու կաշառքը: Այդ նպատակով 1919 թ. Հայ բարեգործական ընդհանուր միությունը ստեղծում է «Ազատագրումի հիմնադրամը», որը կազմակերպում է Ագապա-Քերեքի, Հորանի և Դեր-Զորի շրջաններում հայերի ազատագրումը մահմեդական գերությունից[19]: Միության նախագահ Պողոս Նուբարը այս հարցում մեծապես օգտագործեց նաև իր հեղինակությունն ու միջազգային կապերը: 1919 թ. հունվարի սկզբին Փարիզում Պողոս Նուբարի հետ հանդիպումից հետո Հիջազի գահակալ Հուսեյին իբն Ալին կարգադրեց արաբներին վերադարձնել իրենց մոտ պահվող հայ կանանց և երեխաներին[20]:

Կ. Պոլսում, նրա հարակից շրջաններում, ինչպես նաև Թուրքիայի ներքին գավառներում՝ Անգորա, Յոզղատ, Մալաթիա, Մարդին, Տիգրանակերտ, որբահավաք ակտիվ գործունեություն էր ծավալում նաև հայկական խոշորագույն նպաստամատույց կազմակերպություններից մեկը՝ «Ազգային խնամատարությունը», որը սերտորեն համագործակցում էր հայոց եկեղեցու, մասնավորապես՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայանի հետ[21]:

Եթե սկզբնական շրջանում՝ 1916-1917 թթ., որբահավաք աշխատանքները ծավալվում էին գլխավորապես Օսմանյան կայսրության՝ ռուսական զորքերի կողմից օկուպացված տարածքներում, ապա զինադադարից հետո՝ 1918 թ., դրանք լայն թափով ծավալվեցին նաև կայսրության հարավային և կենտրոնական հատվածներում: Սկսվեց նաև հայ կանանց և երեխաների ազատագրումը արաբական հարեմներից: Այս գործում մեծ ներդրում ունեցավ դանիացի միսիոներուհի Քարեն Եփփեն, որը՝ որպես Ազգերի լիգայի Առևանգված կանանց և երեխաների հանձնախմբի կոմիսար, 1921 թ. իր որդեգիր զավակի՝ Միսակ Մելքոնյանի հետ ազատագրեց մոտ 2000 հայ՝ օգտագործելով «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը: Եփփեի հայահավաք գործունեությունը կոչվում էր «Փրկության միսիոն» կամ «Ազատարար միսիոն», իսկ պաշտոնապես՝ Մերձավոր Արևելքում ազգերի դաշնակցության կանանց և մանուկների պաշտպանության գործ[22]:

1926 թ. «Մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը որդեգրեց Հայկական կարմիր խաչը:

Այսպիսով՝ Հայոց ցեղասպանության տարիներին սկսված և ծավալված որբահավաք աշխատանքների նպատակն էր մահմեդական գերությունից ազատագրել կոտորածներից մազապուրծ հազարավոր հայերի: Որբահավաք աշխատանքների համար նյութական միջոցներն ապահովող կարգախոսի գործադրման հենց սկզբի ամիսներին՝ 1916 թ. օգոստոս-նոյեմբեր, «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ֆոնդին հանգանակվեց շուրջ 200.000 ռուբլի, որով փրկագնվեց 11.000 մարդ: Չնայած հայ հասարակարգում մարդկանց առուվաճառքը երբևէ չի խրախուսվել, դեռ ավելին՝ մեր հասարակության համար խորթ են ստրկատիրական հասարակարգին բնորոշ դրսևորումները, այնուամենայնիվ, ցեղասպանության տարիներին հայ հասարակության մեջ քաջալերվում էր մահմեդական ստրկությունից իրենց հայրենակիցներին փրկագնով ազատագրելը:

Հղումներ

1- Որբահավաք – ած., որբերին հավաքող, ապաստան տվող (Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 1147):
2- Տե՛ս Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, 1966, էջ 103:
3- Փախուստի կազմակերպիչները հիմնականում քրդերն էին, ինչի համար նրանք հայկական կողմից վարձատրվում էին:
4- Սեբաստացի Մուրադ (Մուրադ Խրիմյան, 1874, Սեբաստիա – 1918, Բաքու), հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, հայդուկապետ:
5- Տե՛ս Սիրմէնեան Գ., Երզնկա, Գահիրէ, 1947, էջ 411: Տե՛ս նաև Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 112, «Армянский вестник», 1916, 21 августа, № 30, էջ 18:
6- Տե՛ս Սեպուհ, Էջեր իմ յուշերէն, Պոսթըն, 1925, էջ 292: Տե՛ս նաև Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 112, Սիրմէնեան Գ., նշվ. աշխ., էջ 411:
7- Տե՛ս «Армянский вестник», 1916, № 33, էջ 20:
8- «Армянский вестник», 1916, 21 августа, № 30, с. 18.
9- Տե՛ս «Армянский вестник», 1916, № 34, էջ 24:
10- Տե՛ս «Армянский вестник», 1916, № 45, էջ 17:
11- Տե՛ս «Армянский вестник», 1916, № 36, էջ 18:
12- «Армянский вестник», 1916, № 40, с. 15.
13- Տե՛ս «Армянский вестник», 1916, № 44, էջ 10:
14- Նույն տեղում, էջ 10:
15- Տե՛ս նույն տեղում, էջ 10:
16- Սիրմէնեան Գ., նշվ. աշխ., էջ 409: Տե՛ս նաև «Армянский вестник», 1917, № 12, էջ 9:
17- Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 98:
18- Ռուբեն Հերյան (1868/1869, Հըո գյուղ (Կովկաս) – 1921, Կահիրե), հայ որբախույզ: 1880-ական թթ. Հերյանների ընտանիքը Թիֆլիսից տեղափոխվում է Թոքատ քաղաք (Սեբաստիայի նահանգ): 1883 թ. Ռուբեն Հերյանը ավարտում է Թոքատի ազգային վարժարանը, ապա՝ մեկնում Նյու Յորք և զբաղվում ծխախոտի առևտրով: 1916 թ. աշնանը նա անդամագրվում է Հայկական լեգեոնին և մեկնում Կիպրոս: Հայկական լեգեոնի տասնապետ (գաբորալ) Ռ. Հերյանը, որը Պաղեստինյան ռազմաճակատում ակտիվորեն մասնակցում էր մարտական գործողություններին, ականատես է լինում սիրիական անապատներում ապաստանած հայ տարագիրների ողբալի վիճակին (մանրամասն տե՛ս «Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, տեղագրական, պատմական և ազգագրական տեղեկութիւններով», համադրուած՝ Արշակ Ալպոյաճեան, Կահիրե, 1952, էջ 1732): Ռ. Հերյանի որբահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan, https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/ (մուտք՝10.01.2018):
19- Մանրամասն տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 99-100:
20- Տե՛ս նույն տեղում:
21- Մանրամասն տե՛ս Խանումյան Գ., Կ. Պոլսի «Ազգային խնամատարություն» կազմակերպության որբահավաք գործունեությունը 1919-1920 թվականներին, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2016, 4 (1), էջ 83-96:
22- Քարեն Եփփեի հայանպաստ գործունեության մասին մանրամասն տե՛ս Չոլաքյան Հ., Քարէն Եփփէ հայ գողգոթային և վերածնունդին հետ, «Արևելք», Հալէպ, 2001: Տե՛ս նաև Macartney C. A., Refugees, the work of the League, League of Nations Union, London, 1931:

Ոչ մեկը աշխարհիս երեսին...

Նորեկ Գասպարյան
Գրող, Արցախի վաստակավոր լրագրող, ռեժիսոր

Էլ պատերազմից չեմ խոսելու, վերջ, հերն էլ անիծած... անիմաստ բան է... Հազար ու մի գործ կա անելու: Մի անտանիք երկիր, մի քանի հազար ավերված մարդ: Էլի եկող, էլի գնացող: Չասեք՝ առաջին անգամ չէ:

Ինչքան հիշում եմ, 93-ին էր: Ազատագրված ամբողջ գյուղից մնացածը ընդամենը մի ծռված, հսկայական ծառին հենված պատ էր և այդ պատի տակ՝ առատորեն աճած թփուտներն արմատախիլ անող յոթանասունամյա մի կին.

– Մեր հողին մատաղ, է՛, մեր հողին, մեր դըրբզին, մեր քոլեն, մեր քարեն...

Մեր երկրում Չլդրան անունով գյուղ կա: Եկող-գնացող անգլիացիք խառնվել, դրան Չըլդըրն էին ասում, չնայած էդ գյուղում ոչ մեկը չէր ընդունում, որ հենց իրենք են բրիտանացիների նախնիները: Ուրեմն էդ Չըլդըրն-Չլդրանը ազատագրվեց, թե չէ, էլի 93-ին էր, մարդը հեռուներից եկավ տուն, հին շապիկի պես նետեց մեծ քաղաքում մարմինը մրսեցնող վիրավորանքն ու անտարբերությունը և ամբողջ գյուղով մեկ հայտարարեց.

– Սը մենյա խվատիտ... Ձեզ լինի էդ մեծ քաղաքն էլ, էդ բարձր-բարձր շենքերն էլ, էդ լավությունն էլ...

Տան հիմքը, փառք Տիրոջը, պինդ էր, շինողի արևը կծեմ, թուրքը չի կարողացել քանդել: Եվ մարդը հենց էդ հիմքերի վրա էլ շինեց իր նոր տունը՝ ավելի գեղեցիկ, ավելի ամուր, և էլի ամբողջ գյուղով մեկ տարածեց իր երկրորդ պատմական հայտարարությունը: Հենց նոր պատշգամբում էլ կանգնած ասաց.

– Մեր վրա եկողի...

Հետո «Սը մենյա խվատիտ» ասելով եկավ երկրորդը, երրորդը... և էդ Չըլդըրն-Չլդրանը հառնեց, դարձավ շեն՝ դպրոցով, խանութներով, գրասենյակով ու համայնքի ղեկավարով... Այդպես՝ Դրայբն-Դրմբոնը, Հաթերքը, Ջագլիկը, Ակնաբերդը... գյուղերը՝ մեծ ու փոքր, ամբողջ երկիրը...

Ըսկեր Միքայելյանը (Միքայելյան Արտուշան) կամ պարզապես Արտո դադայը Սզնեք գյուղում ծնվել, Սզնեք գյուղում էլ մեծացել է, էսօր-էգուց 90-ը կծալի-կդնի գրպանը: Որդին՝ Գրիշան, գյուղում ձևավորված ջոկատի հրամանատարն էր, զարկվել է 92-ին Քարինտակի հերոսամարտում: 2020-ի աշնանը, երբ թուրքը գյուղի անտառներով շարժվում էր դեպի Շուշի, ըսկեր Միքայելյանը ոտքը ոտքի առաջ չդրեց: Մնաց տղերքի կողքին:

– Տղամարդը նա է, ով պարտվելուց հետո կարողանում է ապրել: Այսօր լացը, նվնվոցը, ծուլությունն ու հուսահատությունը թուրքից վտանգավոր են:

Եվ ամենևին էլ պատահական չէ, որ թուրքից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող Սզնեք գյուղում այսօր մարդիկ տուն են վերանորոգում, քար են դնում քարին, այգիներն են մաքրում մոլախոտից ու թփերից: Եվ չեն կասկածում, որ բերքառատ ու գունավոր աշուն են ունենալու: Սարուշենն էլ այդպես, երկու կես եղած Թաղավարդը, Շոշը, Կարմիր գյուղը, Խաչմաչը: Իսկ Կարմիր շուկայում նոր թաղամաս է կառուցվում, Թաղավարդ տանող ճանապարհն է ասֆալտապատվում: Միամիտ մարդ չեմ, որ ասեմ՝ ամբողջ գյուղը մի օրում է վերադարձել: Ասեմ էլ, չեն հավատա: Եկել են մեկ-մեկ, մի քանի հոգով, ընտանիքներով ու հարևաններով: Եվ Սարուշենում, օրինակի համար, բացակա մարդ չկա: Վերևներից էլ, ուզում եմ ասել՝ ղեկավարությունից, պահանջները մատների վրա կարելի է հանգիստ հաշվել:

Բայց ամենակարևորը.

– Մեր բեզապասնոստը պըհեցեք, մին քանե կիլո բերք օսինք, հըվաքինք պիրինք տոն: Թութեն արաղն էլ, վեր քաշինք, անպայման խաբարնք ընկական: Թազա ըսֆալտավը կը կյաք... Հա մին պեն էլ ասիմ՝ մեր էս Կրասնի բզարեն մասին հավայի-մավայի խոսողներեն շիլչինգընիք հըվատիք: Արունավ պահալչընք, վեր... շարունակությունը տու գուդումս, ախպեր...

– Մեր տեղը ստեղա, քե մատաղ, եթե տու քինիլի տեղ օսիս, քինի, ինձնեհետ գործ չոնիս...

Այսպես: Առանց գունազարդման: Հա՛, հեչ լավ չէ, որ աշխարհի մի հիսուն երկրից հավաքված գալիս են Շուշի, իբր զարմանում, ախ ու վախ անում, ասում՝ Ադրբեջանը շատ գեղեցիկ երկիր է, բայց, թքած, էդ աշխարհ կոչվածը ե՞նք այդպիսին չի եղել, որ հիմա, օրինակի համար, զարմանանք: Ավելի լավ է մեզնից խոսենք, մեր բռնած գործից, մեր լավ ու վատից, բաժան վիճակից: Հակաճառելու բան չկա, գնացող էլ կա, ամեն խավից՝ հարուստ էլ, աղքատ էլ: Չեմ հարցնում՝ ուր են գնում, ինչ են անելու, ինչպես

են ապրելու առանց մեզ, երբ են վերադառնալու... Բարի ճանապարհ, եղբայր, ի՞նչ ասեմ, երևի մի բան գիտես, որ գնում ես, կամ ոչինչ էլ չգիտես, ուղղակի գնում ես... կամ հոգնել ես պատերազմից, վիճակից, անհասկանալի խաղաղությունից ու քեզ շրջապատող չարությունից: Մեղադրելու իրավունք էլ չունեմ, թեպետ ամեն գնացողի հետ տկարանում եմ, տխրում ու, ոնց ասեմ, դառնում ինքս ինձ մեղադրող ու անճանաչելի:

Լավ է՝ գոնե եկողները ավելի շատ են: Շեներում փակ դուռ չի մնացել:

– Հող լիներ, չապրողին ամոթ...,- հադրությունին է ասում,- էս օգնություն-մօգնություն, սաղ սուտ բան է. էսօր կա, վաղը Աստված գիտի: Ինձ նման մարդուն հող է պետք, մի փոքրիկ էլ տնակ... Մնացածը իմ գործն է...

Ճիշտ է ասում մարդը, բայց մնացածը երկրի գործն էլ է, իմ գործն էլ, Երևանում ծնված-մեծացած, երբեք Արցախ չայցելած իմ բարեկամի գործն էլ, նույնիսկ հեռավոր Գլենդելի անծանոթ թաղամասերից մեկում ապրող իմ ցեղակցի գործն էլ: Այդպես չեղավ, բան չի ստացվի, մարդն էլի կմնա մենակ իր ցավի, չարչարանքի ու օրեցօր թանձրացող-կծոտող կարոտի հետ:

Հիմա մի նժույգի մասին: Անունը՝ Բուրան: Մնացել էր Քարինտակում: Թուրքը մտավ գյուղ, Բուրանը իրեն գցեց ձորերն ու անտառները: Մնար, կսպանեին: Հետո կածաններն ու խոտերը հոտոտելով, ծառերն ու ծաղիկները հոտոտելով՝ եկավ գտավ Ստեփանակերտի Աջափնյակ թաղամասում մի կերպ բնավորված տիրոջը: Ձին Շուշի էլ է մտել, իջել է



Հունոտ, մտել է Մխիթարաշեն, տեսել Շոշը: Ասում են՝ Քաշաթաղում էլ է տեսնող եղել, Տեղ գյուղում էլ: Ցերեկները՝ թաքնվել, գիշերները քայլել է... Այդպես ութ ամիս... Եվ նժույգը վրնջում ու հոտոտում էր տիրոջը, երեխաներին... տերն էլ՝ նժույգին, բայց ավելի ագահորեն, ավելի ծարված... Ձին հետը բերել էր կորցրած գյուղի հոտը, դաշտերի ու այգիների հոտը...

Այսպիսի պատմություններ, ինչպես ասում են, այսպիսի իրական հեքիաթ մեծերի ու փոքրերի համար: Հավատալ-չհավատալն էլ ձեր գործն է, թեպետ դրանից ոչինչ էլ չի փոխվելու մեր այս մի բուռ աշխարհում: Կարևորն այն է, որ այսօր մի ընտանիք էլ վերադարձավ: Մնալու տեղ էլ, ասում են, ունի: Ծառ տնկելու տեղ էլ: Հայաստան աշխարհի գյուղերից մեկում էր ապաստանել: Հարազատի նման ընդունել, հարազատի նման ճանապարհել են: Իհարկե, կարող էին մնալ, մարդիկ համոզում էին, բայց այստեղ կորցրածին ավելի մոտ են... Այսպես համեմատաբար հեշտ է...

Իսկ փրկարարները ընդամենը մի քանի ժամ առաջ Թալիշ գյուղի մոտ գտել են Ապրիլյան պատերազմի մասնակից ու «Մարտական խաչ»-ի ասպետ, Արցախի հերոս, կապիտան Արթուր Աղասյանի աճյունը: Պատերազմի ավարտից 9 ամիս անց: Եվ երբ սպասումի այն օրերին մեկը փորձում էր ընդամենը ամիսներ առաջ կրտսեր որդու՝ Արսենի մարմինը գտած հորը՝ Գրիգորի Աղասյանին, պարզապես մխիթարելու համար համոզել, որ Արթուրը կարող է գերիների մեջ լինել, մարդն ընդամենը մի քանի բառ էր դնում իրար կողքի.

– Ոչ մեկը չի կարող տղայիս գերի վերցնել, ոչ մեկը աշխարհիս երեսին...

Հրատարակիչը որպես 21-րդ դարի լուսավորիչ, կամ այն մասին, թե ինչպես փող շինել ամեն ինչից

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Գրատպության գյուտի հեղինակն ու առաջին հրատարակիչը գերմանացի դարբին ու ոսկերիչ Յոհան Գուտենբերգն էր: Տպագրության գյուտը մարդկությանը հնարավորություն տվեց մեծացնելու տեղեկատվության, գիտելիքի և իմաստության տարածման ծավալը: Գրատպությունը, այդ պահից սկսած, դարձավ քաղաքակրթության ու լուսավորության տարածման գործիք: Հետևաբար չենք սխալվի, եթե ասենք, որ հրատարակիչներն էլ ինչ-որ իմաստով դարձան քաղաքակրթության ու լուսավորության տարածողներ: Նրանցից ոմանք նաև հայտնի գիտնականներ, փիլիսոփաներ, հասարարական գործիչներ էին, օրինակ՝ Բենջամին Ֆրանկլինը: Այսպիսով՝ հրատարակչի գործը նախ և առաջ մարդկանց մեջ գիտելիք և լուսավորություն տարածելն էր, ինչպիսին շարունակում է մնալ այսօր էլ:

Սակայն ժամանակի ընթացքում, ինչպես աշխարհում ամեն բան, գրատպությունն էլ իմաստային ու էութենական փոփոխությունների ենթարկվեց: Որպես տեղեկատվության տարածման հեշտ միջոց՝ այն մասամբ ձեռք բերեց քարոզչական և քաղաքական գործառույթներ: Սա՝ լավագույն դեպքում, իսկ վատագույն դեպքում դրանք ստացան օրինակ թշնամական երկրի քարոզչամեքենայի գործառույթ:

Հայաստանի Հանրապետությունում նման գործառույթ է որդեգրել «Անտարես» հրատարակչությունը:

Վերոհիշյալ հրատարակչության սեփականատեր և տնօրեն հանդիսացող անձը, ոմն Արմեն Մարտիրոսյան, մեղմ ասած, աչքի չի ընկնում իր ազգային-պետականամետ բարեվարքությամբ: Իր պնդմամբ վերջինս հայ չէ, սոսկ հայաստանցի է, և նրա ամենաչսիրած երևույթներից մեկն էլ այն է, երբ որևէ մեկն իր գրասեղանը տանում ու տեղադրում է մեկ ուրիշի սենյակում... Արմեն Մարտիրոսյանի ամենասիրելի զբաղմունքներից մեկը Հայաստանում թուրքական գրականության տարածումն է: Վերջինիս ջանքերով տարբեր դրամաշնորհներով հայերեն են թարգմանվել և տպագրվել շուրջ մեկ տասնյակ թուրք հեղինակների գրքեր: 21-րդ դարի թուրքական գրականություն կարդալն ու դրան հաղորդ լինելը բնավ բացասական բան չէ. գրականությունը համամարդկային երևույթ է: Սակայն կա գրականություն, և կա քարոզչություն՝ խորհրդային լեզվով ասած՝ ագիտպրոպ: Եվ, ահավասիկ, թուրքական ագիտպրոպի ներկայացուցիչը Հայաստանում հանդիսանում է «Անտարես» հրատարակչության սեփականատեր Մարտիրոսյան Արմենը:

Հայ ազգին պարտադրված խայտառակ

կապիտուլյացիոն պայմանագրից հետո, երբ գործող իշխանությունները որդեգրել են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կամ, այսպես ասած՝ քիրվայության քաղաքականությունը, «Անտարես» հրատարակչությունը, առանց չափազանցության կարող է համարվել Հայաստանում քիրվայության ջատագովության կենտրոն: Լ. Տեր-Պետրոսյանի կողմից քաղաքական բառապաշար ներմուծված «քիրվա» եզրույթը հետաքրքիր պատմություն ունի: Մուսուլմանների շրջանում քիրվա կամ քիրվե անվանում էին այն մարդուն, ով իսլամում պարտադիր համարվող թլփատման ծեսի ընթացքում գրկում, մխիթարում, փաղաքշում էր թլփատվող երեխային, որպիսզի ցավը և այլ անհարմարություններ ավելի հեշտ հաղթահարելի լինեն նրա համար (տարիներ շարունակ Տեր-Պետրոսյանն ու իր մերձավորները հենց դա՛ են քարոզել՝ փայփայել թշնամուն. ստոկհոլմյան համախտանիշ): Հայ իրականության մեջ սա որոշ չափով համարժեք է քավորի կամ կնքահոր ինստիտուտին: Հայոց անցյալի՝ պատմական առումով առանցքային նշանակություն ունեցած իրադարձությունները լուսանցքում թողնելով՝ նշենք, որ քիրվայության քարոզը միայն ազգային շահի անտեսում չէ, այն ազգային հիշողության ու արժանապատվության նսեմացում է՝ օրակարգ բերված Հայաստանի երկու տարբեր, բայց նույնաբնույթ՝ հակազգային կառավարությունների կողմից:

Սակայն դառնանք «մեր ոչխարներին»: 2016 թ. «Անտարես» հրատարակչությունը լույս ընծայեց Մկրտիչ Արմենի «Երևան» ստեղծագործությունը, որը, նույն գրքում ամփոփված հոդվածում գրող, գրականագետ Հրաչյա Սարիբեկյանը համարել է արևելահայ վեպի առաջին մոդեռնիստական նմուշ: Վեպի գրականագիտական արժեքին Հր. Սարիբեկյանի կատարած անդրադարձը բաց է թողնված վեպի երկրորդ՝ «Արգելված

գրականության» մատենաշարի հրատարակության մեջ: «Երևան» վեպին անդրադարձ կա նաև Հրաչ Բայադյանի՝ 2020 թ. լույս տեսած «Երևակայելով անցյալը. խորհրդահայ արդիականության պատումներ» ծավալուն ուսումնասիրության մեջ: Ըստ Հր. Բայադյանի՝ վեպը Երևանի՝ որպես մի արևելյան քաղաքի արդիականացման և դրա հետևանքով անհետացման ողբն է, որտեղ հեղինակը որոշ ափսոսանքով ու կարոտախտով է խոսում խորհրդային իշխանության կողմից Երևանի արևելյան կոլորիտի ոչնչացման մասին:

Մի կողմ թողնելով վեպի գեղարվեստական արժանիքների շուրջ ձևավորված մոտեցումները՝ այստեղ կցանկանայի խոսել դրա վերահրատարակման բուն նպատակի մասին:

«Երևան» վեպում հեղինակը ներկայացնում է վերակառուցվող, արդիականացող Երևանը՝ որպես արևելյան, մուսուլմանական ստվար բնակչությամբ մի քաղաք: Կարմիր թելի նման անցնում է Երևանի՝ արևելյան քաղաք լինելու անընդմեջ հիշատակումները, վեպի տարբեր հատվածներում խոսվում է հին Երևանի հին բնակիչների՝ թուրք ջավադների, օսմանների, յուսուֆների, իբրահիմների, աբբասների մասին, մանրակրկիտ նկարագրություններ կան թուրքական գերեզմանատան, մուսուլմանական ճարտարապետական կառույցների, պարսկա-թուրքական արևելյան կենցաղի և այլնի մասին: Առաջին տպագրությունից հետո մերժվելով գրաքննության կողմից որպես մոդեռնիստական ստեղծագործություն, իսկ իրականում լինելով թրքական տարրերով լի, վերացվող Էրիվանի վերաբերյալ կարոտախտային ողբերգ՝ վեպը երկու անգամ վերատպվել է «Անտարես» հրատարակչության կողմից՝ սոսկ առաջ քաշելու համար հայ-թուրքական ընդհանուր անցյալի գաղափարը, որն այս օրերին նպատակ ունի լուծելու գործող իշխանությունների կոնկրետ ծրագրային խնդիրներ:

«Անտարես» հրատարակչության՝ համեմատաբար բարձր վաճառքի ցուցանիշ ունեցող «Արգելված գրականություն» մատենաշարով տպագրվելը ևս վկայում է, որ «Երևան» վեպի «վերա-վերահրատարակումը» 2021 թ. հասարակության որոշակի շերտերին ուղղված հաղորդագրություն է պարունակում: Նախ, վեպը խորհրդային տարիներին արգելված գրքերի ցուցակում չի եղել, ինչպես եղել է, օրինակ, Օրուելի «Անասնաֆերմա» վեպը, և ցանկացողները հնարավորություն ունեցել են այն կարդալու հանրային գրադարանների ընթերցասրահներում: Խոսքը սոսկ գրքին տրված բացասական գնահատականի ու վերատպության մերժման մասին է, ինչը «Անտարես» հրատարակչությունը ներկայացրել է որպես արգելք՝ գրքի նկատմամբ հետաքրքրություն բորբոքելու և վերջինիս վաճառքն ու տարածումը խթանելու նպատակով (արգելված պտղի

հմայքը մարքեթինգային հանրահայտ հնարք է): Բնականաբար գեղարվեստական տեսանկյունից արդարև գլուխգործոց չհանդիսացող երկը ևս մեկ անգամ ընթերցողի դատին հանձնելը, հատկապես ներկա քաղաքական իրադրության պայմաններում, հաստատ գրականության շահերի սպասարկման համար չի արված, և ոչ էլ սոսկ բիզնեսի նկատառումներով: Խորհելու տեղիք է տալիս նաև գրքի էժան գինը՝ նույն մատենաշարի մյուս գրքերի հետ համեմատած. «Արգելված գրականություն» մատենաշարի գրքերի միջին գինը 6000 դրամ է, մինչդեռ «Երևանի» գինը 4000 դրամ է:

Մեկ այլ՝ առավել ուշագրավ գրքի հրատարակմանը ականատես եղանք վերջերս: Խոսքը «Մեր ներսի հայը» վերատառությամբ ժողովածուի մասին է: Գրքի բնագիրը (թուրքերեն) հրատարակվել է 2015 թ. Թուրքիայում, և նվիրված է Հրանտ Դինքի հիշատակին: Այն Հայոց ցեղասպանության 100 –րդ տարելիցի առթիվ Ստամբուլում լույս ընծայված հոդվածների, ելույթների, պատմվածքների, էսսեների ժողովածու է: Գրքում Թուրքիայում բնակվող, ստեղծագործող և գրականության ոլորտում որոշ նվաճումներ արձանագրած թվով 35 հեղինակներ իրենց տեսակետն են ներկայացրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Գաղափարի հեղնակն ու իրագործողը Յիղիթ Բեներն է:

Ժողովածուի վերնագիրը թուրքերենում այսպես է՝ ”İçimizdeki Ermeni”: Թուրքական գրականությանը շատ թե քիչ ծանոթ մեկը, այս վերնագիրը տեսնելով, առաջին հերթին մտաբերում է «İçimizdeki Şeytan»՝ («Մեր ներսի սատանան») վերնագրով մեկ այլ ստեղծագործություն, որը թուրք գրող Սաբահաթթին Ալիի հանրահայտ վեպն է: Այս վեպը համարվում է թուրք նոր գրականության կարևորագույն ստեղծագործություններից մեկը, և Թուրքիայի հանրակրթական դպրոցների պարտադիր





ընթերցանության ցանկում է:

Վեպի վերնագիրը նկատի ունի անձի ներսում գտնվող այն ուժն ու բնավորության գծերը, որոնք մարդուն հետ են պահում ավելի լավը լինելուց: Վեպի հերոսներից մեկի՝ Օմերի խոսքերով՝ «...մեր ներսում կա մի ուժ, որը մեզ ստիպում է կատարել մեր չուզած բաները, դա ստույգ է: Մյուս կողմից հարկավոր է, որ մենք բոլորովին այլ կերպ գործենք ավելի լավը լինենք...»: Օմերի նկարագրած այդ ուժը «մեր ներսի սատանան» է:

Այն, որ տասնամյակներ շարունակ Թուրքիայի հանրապետության քավության նոխազը եղել են այդ արհեստածին պետության ներսում բնակվող ազգային փոքրամասնությունները, որոնք ժամանակին երկրի բնիկներն էին, և որոնց իրավունքները ամրագրված են Լոզանի դաշնագրով, փաստ է: Պարբերաբար նրանք տարատեսակ մեղադրանքների թիրախ են դարձել, ենթարկվել են տարբեր հալածանքների, քանի որ պետական վերին ատյաններից սկսած մինչև հասարակ քաղաքացի ընկալվել են որպես «ներսի սատանա», ով հետ է պահում երկիրը զարգացումից, հզորացումից, իսկ թուրքերին՝ բարեկեցությունից: Թուրքիայի հանրապետությունը թուրք հանրությանը միշտ կերակրել է «ներսի թշնամի» և «դրսի թշնամի» թեզերով, և այս պարագայում «ներսի թշնամին» և «ներսի սատանան» ամբողջովին նույնական են:

Այսպիսով՝ տեսանք, որ «մեր միջի սատանան» տարածված թևավոր խոսք է դարձել թուրք հասարակության մեջ: Իսկ թե ինչ մղումներով է մեղայական ու բարեկամական նյութերի ժողովածուն վերնագրվել հայտնի թևավոր խոսքի նմանությամբ, և թե ինչու է «սատանան» փոխարինվել «հայով», թողնենք ընթերցողի տրամաբանությանը (կայացած գրական գործիչները արդյո՞ք կարող էին վրիպել նման նրբին հարցում, հատկապես երբ խոսքը վերաբերում է այնպիսի զգայուն թեմայի, ինչպիսին Հայոց ցեղասպանությունն է): Ի վերջո, ի թիվս մյուս ազգերի, Թուրքիայում ապրող ցեղասպանությունից մազապուրծ վերջին հայերն էլ են այն սև ցուցակում, որտեղ հաշվառված են Թուրքիայի հանրապետության «ներսի սատանաները»:

Հայ թարգմանիչների ու գրականագետների աչքից «սպրդել» էր այս հանգամանքը: Թերևս դա կարելի է ներել: Տարակուսանք է առաջացնում այն, որ արցախյան երկրորդ պատերազմից հետո, երբ դեռ Հայոց պետությունն ու ժողովուրդը չի հասցրել ամբողջությամբ գնահատել ու մարսել տեղի ունեցածը, երկրի գիտակից հատվածը ճիգեր է գործադրում ոտքի կանգնելու, իսկ տեղի ունեցածի մեջ առյուծի բաժին ունի Թուրքիան, թարգմանվում ու լույս է տեսնում նման «քիրվայական» բովանդակությամբ գրականություն: Չգիտես էլ ինչ կոչես այն երևույթը, երբ ավելի քան 80 միլիոնանոց բնակչություն ունեցող երկրի 35 մտավորականի հրապարակած գիրքը ներկայացվում է հայ հանրությանը իբրև ներողության խոսք, զղջման վկայագիր, հաշտության ձեռքմեկնում, այնինչ այս քայլը ոչ մի չափումով չի արտացոլում թուրք հասարակության դիրքորոշումը: Սա արդեն ոչ միամտություն է, ոչ դյուրահավատություն, ոչ հավկուրություն և ոչ էլ ջայլամի համախտանիշի դրսևորում: Սա հստակ դավաճանական արարք է: Բնականաբար այսօրվա Թուրքիան ոչ մի բանով չի տարբերվում տաս, հարյուր, երկու հարյուր տարի առաջվա Թուրքիայից, ու տարի էլ չի անցել դրա գործնական ապացույցներից, մինչդեռ նման գործողությունները հստակորեն նպատակ են հետապնդում թուլացնել հայ ազգի դիմադրողականությունը: Թուլացնել ներսից, թուլացնել դավաճանաբար՝ ներքին գործակալների և օտարահպատակ ագիտպրոպների միջոցով, որոնցից ամենափայլունը «Անտարեսն» է՝ իր տխրահամբավ սեփականատիրոջ գլխավորությամբ:

Շարունակել անդեռ՛ւ

Վրէժ-Արմէն

Պիտի շարունակենք մեր երթը:

Հեռո՛ւ մեզմէ ամեն դեղևում, վարանում ամեն:

Պիտի շարունակենք բոլոր ճակատներուն վրայ ուժերով բոլոր:

Այլընտրանք չունինք:

Մեր գլխէն անցածը մեզ աւելի վհատ ու ձեռնպահ պիտի չդարձնէ, այլ աւելի փորձառու և իմաստուն:

Այո՛, ազգային գաղափարաբանութիւնը պիտի ըլլայ մեզ առաջնորդող լուսաւոր աստղը, որքան ալ ազատ, անկախ ու միացեալ հայրենիքը՝ մեր կիզակէտը, թուի «անհաս երազ», որքան ալ ամբողջական հայութիւն ամբողջական Հայաստանի մէջ՝ մեր կեանքի գոյապատճառը՝ մեր գոյութեան ալֆան և օմեգան, թուի երևակայածին:

Հեշտ պիտի չըլլայ մեր ճանապարհը: Խոչընդոտներ ու խոչընդոտողներ պիտի չպակսին, ինչպէս չեն պակսած մինչև հիմա:

Բայց չունինք այլընտրանք:

Պիտի շարունակենք պայքարիլ՝ կանգուն պահելու համար մեր ազգային կառոյցները հայրենի հողին վրայ ու մանաւանդ հայրենի հողէն դուրս, ուր մեզի կը պակսի այդ հողին կենարար աւիշը, ուր այդ աւիշը ստիպուած ենք փոխարինել հոգեկա՛ն սնուցմամբ, ոգեկա՛ն ներուժով:

Պիտի պահենք մեր պետականութիւնը, ինչքան ալ զայն քանդել ուզեն ներսէն թէ դուրսէն:

Պիտի պահենք մեր եկեղեցին, որուն գմբեթին վերև կախուած է Լուսաւորչի անմար կանթեղը, ինչքան ալ զայն մարել ուզեն ներսէն թէ դուրսէն:

Պիտի պահենք, արդիացնենք ու մանաւանդ բազմացնենք հայ դպրոցը, որ հիմքն իսկ է մեր գոյութեան:

Պիտի պահենք, զարգացնենք ու նոյնպէս բազմապատկենք մեր կեդրոնները, այն փոքրիկ Հայաստանները, որոնք անշեղ ճանապարհն են դէպի մեծ Հայաստանը:

Պիտի պահենք ու բարելաւենք մեր մամուլը, որուն էջերէն ու ալիքներէն ամենօրեայ սնունդ պիտի ստանան մեր զանգուածները՝ մեծերն ու փոքրերը:

Պիտի պահենք, պահպանենք, հարստացնենք մեր մշակոյթը՝ անո՛վ հարստանալով առաջին հերթին մենք իսկ, անով հարստացնելով նաև պէսպիսուն աշխարհը վաղուան մարդկութեան:

Եւ պիտի պահենք, պահպանենք ու հարստացնենք մեր ոսկեդենիկ լեզուն՝ անո՛վ ապրելով նախ մենք, ապա անո՛վ ապրեցնելով մեր գալիք սերունդները: Պիտի շարունակենք խօսիլ, կարդալ ու գրել հայերէն՝ անընդհատ պահանջելով, որ նոյնը ընեն և մեր զաւակները, մեր թոռներն ու ծոռները: Եւ պիտի տևաբար յիշեցնենք, որ հայ ընտանիք կազմեն անոնք:

Այո՛, այլընտրանք չունինք:

Այդ գալիք սերունդները... ինչե՞ր ունինք ընելիք անոնց համար:

Պիտի գիտնանք տէր կանգնիլ անոնց, պիտի գիտնանք ազգային հպարտութիւն ներշնչել անոնց,

պիտի գիտնանք գնահատել անոնց արժանիքներն ու ձիրքերը, մշակել զանոնք, ծանօթացնել, մինչև աստղերը հասցնել մեր արժանաւորները, մարզիկ ըլլան թէ երաժիշտ, գիտնական ըլլան թէ հնարիչ:

Եւ պիտի գիտնանք լաւ ճանչնալ ու կշռել և մե՛ր ուժերը, լաւ տնտեսել զանոնք, լաւ ամրակայել զանոնք, մանաւանդ լաւ համախմբել զանոնք՝ մատները վերածելով բռունցքի: Երբեք պիտի չհրաժարինք պահանջելէ, որ միշտ միացեալ ուժերով դիմագրաւենք մեր գալիքը:

Տակաւին պիտի սորվինք լաւ գիտնալ մեր միջոցները, նոյնպէս լաւ տնտեսել, ամրապնդել ու հզօրացնել զանոնք, օժտել ներկայ աշխարհին համապատասխան, եթէ ոչ աւելի՛ ալ բարձր որակով ու մակարդակով, օժտուիլ լաւագոյն զէնքերով՝ մտաւորական, տնտեսական թէ ռազմական ճակատներուն վրայ ապահովելու համար մեր անվտանգ ներկայութիւնը:

Այո՛, շատ աշխատանք կայ կատարուելիք, շատ զոհողութիւններ կան յանձն առնուելիք, շատ նուիրում կայ ցուցաբերուելիք՝ ժողովներէն, գիտաժողովներէն, հանգանակութիւններէն, կառուցումներէն, Հայ դատի հետապնդումներէն մինչև նոր մարտահրաւէրները, կազմակերպական, հոգեկան թէ ֆիզիքական ճակատներուն վրայ՝ Սփիւռքի իրաքանչիւր գաղթօճախի առումով, համասփիւռքեա՛ն առումով, հայրենի իրաքանչիւր բնակավայրի առումով, համահայրենակա՛ն առումով, այլև համահայկակա՛ն առումով:

Եւ չունինք այլընտրանք:

Չունինք այլընտրանք, որպէսզի չկորսնցնենք մեր հաւատքը ապագայ արդար ընկերութեան մը նկատմամբ՝ սկսելով մեր հայրենիքէն, և ապագայ համերաշխ ու համագործակցող մարդկութեան մը, մարդկութիւն, որուն իրաքանչիւր մասնիկը հաւասարէ հաւասար վայելէ այս մոլորակին վրայ ապրելու իր բոլոր իրաւունքները, միասնաբար դիմագրաւելու համար հասարակաց մարտահրաւէրները և ողջունելու համար բանաստեղծին երազած վարդահեղեղ արշալոյսը:

Մենք այս ենք: Ենք, այլապէս չենք:

Իսկապէ՛ս չունինք այլընտրանք:

Անդեռ՛ւ շարունակենք պիտի: ■

Գեղամ Մուշեղյան

Ծնվել է 1969 թ. սեպտեմբերի 4-ին Երևանում:
Ավարտել է Վանաձորի մանկավարժական ինստիտուտը:
1989 թ. անդամագրվել է ՀՅ Դաշնակցությանը:
1993 թ. մայիս-օգոստոս ամիսներին Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Մարտակերտի և Աղդամի շրջանների ազատագրական և պաշտպանական մարտերին:
1994 թ. մայիս-օգոստոս ամիսներին մարտական ծառայություն է իրականացրել Մարտակերտի շրջանի Ջրաբերդ-Կարմիրավան-Ջրաբերդ-Դաշտային կայան Մարտակերտ պաշտպանության տեղամասում:
2016 թ. ապրիլին մասնակցել է Արցախյան քառօրյա պատերազմին:
2020 թ. Սեպտեմբերի 28-ին «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի (ՀՅԴ) 1-ին վաշտի կազմում որպես դասակի հրամանատար մեկնել է Արցախ: Ջոհվել է հոկտեմբերի 2-ին Մատաղիսի հրաձգարանի հարակից բարձունքների ուղղությամբ թշնամու գերակշիռ ուժերի դեմ ծավալված մարտերի ժամանակ:
Ամուսնացած էր, ուներ երեք զավակ:
Գեղամը ՀՅԴ Երևանի քաղաքային կոմիտեի նախագահն էր:
Գեղամ Մերյոժայի Մուշեղյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով և «Մարտական ծառայություն» մեդալով:

Միհեր Հարությունյան

Ծնվել է 1973 թ. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:
1990 թ. մասնակցել է ՀՀ սահմանամերձ Նոյեմբերյանի – Շամշադինի շրջանների հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերին:
1991 թ. ընդունվել է ՀՅԴ շարքեր:
1991 թ. Հունվարից մինչև - օգոստոսի 15-ը Հրազդանի ՀՅԴ կամավորական ջոկատի կազմում մասնակցել է Գետաշենի ենթաշրջանի – Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական մարտերին: 1991 թ. օգոստոսի 15-ին Մանաշիդ գյուղի ինքնապաշտպանական մարտի ընթացքում ստացել է ձախ ուսի գնդակային վիրավորում:
1991 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1992 թ. փետրվարի 11-ը ՀՅԴ վաշտի կազմում մասնակցել է Ասկերանի շրջանի Լեսնոյ և Մալիբեյլու գյուղերում տեղակայված թշնամու կրակակետերի ոչնչացմանը: Մալիբեյլու գյուղում տեղակայված թշնամու կրակակետերի ոչնչացման ընթացքում վիրավորվել է աջ ձեռքից:
1992 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1994 թ. ապրիլի 1-ը Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Մարտակերտի, Աղդամի, Ջանգելանի, Ֆիզուլու և Քելբաջարի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտական գործողություններին:
1994 թ. հունվարի 10-ին Կարախանբեյլի գյուղի մատույցներում մղված պաշտպանական մարտի ընթացքում ստացել է ցնցակաթված:
ՀՅԴ գումարտակի կազմում որպես վաշտի հրամանատար 2016 թ. ապրիլին մասնակցել է Արցախյան քառօրյա պատերազմին:
Որպես «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտի հրամանատար 2020 թ. մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում ընթացող պատերազմական գործողություններում:
2020 թ. հոկտեմբերի 6-ին կազմակերպելով Մարտակերտի շրջանի Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի պաշտպանությունը և ոչնչացնելով մեր պաշտպանության խորքը մխրճված թշնամու ստորաբաժանումը՝ հերոսաբար զոհվել է:
Միհեր Վոլոդյայի Հարությունյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով, ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով:

Երվանդ Թադևոսյան

Ծնվել է 1974 թ. մարտի 8-ին Կոտայքի մարզի Պառոշյան գյուղում:
Ավարտել է Պառոշյանի միջնակարգ դպրոցը:
1993-1994 թթ. որպես կամավոր մասնակցել է արցախյան ազատագրական պայքարին:
1994 թ. հունվարի 20-ին Ֆիզուլու շրջանի Կարախանբեյլի գյուղի պաշտպանական մարտերի ընթացքում ստացել է ցնցակաթված:
2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտին: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում ընթացող պատերազմական գործողություններում:
2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքը:
Երվանդ Սահակի Թադևոսյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» և «Մարտական ծառայություն» մեդալներով:
Երվանդը ՀՅ Դաշնակցության անդամ էր:

Քրիստափոր Արթին

Ծնվել է 1972 թ. Հունվարի 16-ին Լիբանանում:
Նախնական կրթությունը ստացել է Բուրջ Համուդի Սեն Կրեկուար վարժարանում:
1986 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Տորոնտո՝ Կանադա, և ուսումը շարունակել Կանադայի բարձրագույն վարժարանում:
1991 թ. անդամակցել է ՀՅ Դաշնակցությանը:
ՊԲ Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության համար մղված մարտական գործողություններին. 1993 թ. հունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը՝ Մարտակերտի, Աղդամի, և Ջանգելանի շրջաններում, 1994 թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 12-ը՝ Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում, հրադադարից հետո՝ մինչև 1995 թ. հունիսը՝ Մարտակերտի շրջանի Կարմիրավան-Ջրաբերդ-դաշտային կայան Մարտակերտ տեղամասի պաշտպանությանը:
2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտին: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում ընթացող պատերազմական գործողություններում:
2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքը:
Քրիստափոր Անդրանիկի Արթինը ԱՀ նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով:

Տավրոս Աբրահամյան

Ծնվել է 1994 թ. մարտի 27-ին Արագածոտն մարզի Ոսկեթաս գյուղում՝ ֆիդայի Չոլոյի գերդաստանում: Սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Պառոշյան գյուղ, որտեղ ուսումը շարունակել է Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում:
2010-2019 թթ. սովորել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում:
2012-2014 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Ծառայության ընթացքում պարգևատրվել է պատվոգրերով:
2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտին և հոկտեմբերի 2-ից մեկնել է Արցախ:
2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով վերադարձնելով Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքը:
Տավրոս Մխիթարի Աբրահամյանը ԱՀ նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Արիության համար», ՀՀ նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալներով:

Շիրակ Գասպարյան

1998-2020 թթ. նահատակվել է Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ

*****

Մայրս, սիրելի՛ս, ե՛կ կողքիս նստիր,
Գլուխս կուզեմ դնել քո ծնկին,
Ուզում եմ ափդ զգալ իմ այտին,
Խառնիր մազերս ու հետս խոսի՛ր,
Պատմի՛ր աշխարհի բյուր հրաշքներից,
Որ պիտի որդիդ իր աչքով տեսնի,
Երգի՛ր կորուսյալ մեր երկրի փառքից,
Որ տղադ մի օր պիտի եր բերի:
Ինձ պատմի՛ր, մա՛յր իմ,
Իմ ժողովրդի դաժան անցյալից,
Դե, մի՛ արտասվիր, դու առյուծածին
Մայր ես տակավին,
Ում որդին կյանքը կդնի զոհասեղանին,
Որ գեթ մեկ հայի իղձը կատարվի,
Որ գեթ մեկ մետր հող նա եր բերի:
Ես իր արյան մեջ կխեղդեմ նրան,
Ով իր նզովյալ ոտքով կկոխի հողն իմ հայրենի
Ու իր հիվանդոտ թոքով կշնչի օդը իմ երկրի:
Ես հայ եմ, մայրի՛կ, պապերիս ոգին ինձ միշտ զորավիգ,
Անգամ թե պակաս գարուններ ապրեմ,
Անգամ թե պակաս համբույրներ տամ քեզ,

Դու մի բան հիշի՛ր՝ հողս չեմ զիջի ոչ մի թշնամու:

09/05/2015

ՀՆՉՈՂ ՁԱՅՆԵՐ գրքից, հրատարակել է Համազգային հայ կրթական և մշակութային միությունը: Երևան, ԱՐՄԱՎ հրատարակչություն, 2021 թ. էջ 53:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց Արցախի դեմ դավադիր պատերազմը

ԴՐՕՇԱԿ

Երվանդ Քոչար
«Պատերազմի արհավիրքը»